



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԳՐՔԵՐԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆՆՑ ՊԱՏՐԻԿԸ

- Ա. Ընթերցանութեան հիմունքներ.
- Բ. Ընթերցանութեան սովորութիւնը.
- Գ. Ինչպիսի գրքեր կարդանք.
- Դ. Ընթերց. ամենալաւ ժամանակը.
- Ե. Ո՛րքան կարդանք.
- Զ. Յիշողութեան ունականութիւնը.
- Ծ. Յուշատեսարիւրի օգտակարութիւնը.
- Թ. Ճաշակի զարգացումն
- Պ. Բանաստեղծութիւն
- Ժ. Թերթելու հմտութիւն

- ժԱ. Թարգմանութեանց օգտակարութիւնը
- ժԲ. Ի՞նչպէս պէտք է կարդալ լրագիր ու ամսագիր.
- ժԳ. Ի լուր ընթերցանութիւն և գրականական աղումներ.
- ժԴ. Գրքեր ճարելը
- ժԵ. Հասարակաց գրադարաններ
- ժԶ. Ընթերցանութեան իսկական օգուտը



12388

«ՀՈՒՄԱՅ»-ի խմբագրատանը վաճառուով են

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները.

1 Աղօթատետր Ե. տպ. 1903.	— 10
2 Կրօնի դասագիրք տ. ա. 1889 (սպառուած)	— 15
3 " " " Բ տ. Գ. տպ. 1891	— 25
4 " " " Գ. տ. Գ. տպ.	— 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ եկ. Բ. տպ. 1894	— 5
6 Կարևոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891	— 10
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա. — Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893:	2 —
8 Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Սիւճիան կաթողիկոսի յիշատակարանը. կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած. 1894	7 —
9 Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Ղուկաս կաթող. 1780—1800 I (լուսանակար պատկերով և վիճակով կոնդակով) 1899.	4 —
10 Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808 (մի վիճակով կոնդակով) 1902	4 —
11 Դիւան Հայոց պատմ. գիրք Զ. Դանիէլ կաթ. մ. I. 1801—2 մի վիճակով կոնդակով. 1904.	4 —
12 Դիւան Հայոց պատմ. գիրք Ե. Դանիէլ կաթ. մ. II. 1803—4. իսկառիակ ֆիրմանով. 1905	4 —
13 Կարգ աստուածաշարութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 35 նկարով, Ե. տպ. 1904	— 50
14 Հնէյն-նորից, հնաստ, ուղեւոր. պրակ Ա. 1900	— 30
15 Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. Ժ՛ի տարի.	— 50
16 Նամակագիրք. 1902.	— 50
17 Ծոցի օրացոյց 1902 ամի և յանելուած.— Առողջապահական Խոհարարութիւն (սպառուած).	— 15
18 Զարբար Ղարղանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.)	— 5

Ժարգմանութիւններ.

19 Հաւատարմութիւնը ամեն արգելքներին յաղթում է ք. Հոֆմանի 1877	— 40
20 Խաւարից դէպի լըյս ք. Հոֆմ. 1878. (սպառ.)	— 40
21 Դօն Բիշոտ լամանչէցի, Մ. Սէրֆ. 1878 (սպառ.)	— 70
22 Գէորգ Ռօյլստօն, 1879 (սպառուած)	— 60
23 Երբորդ սկի, առակ. Լակիդէի Բ. տպ. 1893.	— 10
24 Ռօրենցոն (հրատ. Թիֆլ. սպառ. ընկերութ.) (սպառ.)	— 60
25 Չեստերտօնի ժառանգը, պատկերագրով, 1882. (սպառ.)	1 —
26 Ակտեա. տ. Սիտօեֆայի. 1885 (սպառուած)	— 50
27 Եան Էրնօս Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.)	— 20
28 Արծուի մտածմունքը, պրօֆ. Մ. Բոզգան. 1892.	— 5
29 Գիւղի սուրբը. Սվետոպօլի Զէյի, 1892	— 10
30 Կեանքի դպրոցը, Դիկկէսեի, 1892	— 10
31 Դէպի Աթէնք, Հ. Սենկեֆիչի Բ տպ. 1901.	— 15
32 Մի կտոր Հաց, Պօտապէնկօի Բ. տպ. 1901.	— 10
33 Արտորդ. Օ. Շրայնկերի	— 10
34 Մատուռի աւերակներում, Օ. Շրայնկերի	— 10
35 Կարա	— 5
36 Անտառապեա Գրեգորիկ. Էրկման Հատրիանի. 1903.	— 40
37 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէտը) 1903	— 1
38 " " պրակ Բ. (գրքի ամբողջ կէտը) 1903	— 1 60

ՅԱԻԵԼՈՒԱՅ «ՀՈՒՄԱՅ» ԱՄՍՍԳՐԻ

028

Պ-50

630
110-Ռի

Պ. 9009

ՉԱՐԼԱ ՌԻՉԱՐԴՍՈՆ

ԳՐՔԵՐԻ

Ը Ն Տ Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ը

ԹԱՐԳՄԱՆՆԵՑ ՊԱՏՐԻԿԸ

1003
10803

- | | |
|---------------------------------|----------------------------------|
| Ա. Ընթերցանութեան հիմունքներ. | ԺԱ. Թարգմանութեանց օգտակարու- |
| Բ. Ընթերցանութեան ոսկորութիւնը. | թիւնը |
| Գ. Ինչպիսի զրբեր կարգանք | ԺԲ. Ինչպէս պէտք է կարգալ լրագիր |
| Դ. Ընթերց. ամենալու ժամանակը | ու ամառիրը |
| Ե. Ո՛րքան կարգանք. | ԺԳ. Ի լուր ընթերցանութիւն և զրա- |
| Զ. Յիշողութեան ունականութիւնը. | կանական տկումներ. |
| Է. Յուշատեարերի օգտակարութիւնը | ԺԴ. Գրքեր ճարելը |
| Ը. Ճաշակի զարգացումն | ԺԵ. Հասարակաց զրադարաններ |
| Թ. Բանաստեղծութիւն | ԺԶ. Ընթերցանութեան իսկական օ- |
| Ժ. Թերթիկու հմտութիւն | գուտը |



Թ Ի Փ Լ Ի Ս 1905

Տպարան Ա. Գուլամիյանի, Նիկ. 21

24 JUL 2013

ԳԱՆՁԱԿԻ ԳԻՄՆԱԶԻՕՆԻ 1903/04 ԹՈՒԱԿԱՆԻ
ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ Է

Дозволено цензурою, Тифлисъ, 25-го Февраля 1905 г.

Նուիրում



ԹԱՐԳՄԱՆԻԶ

Ի՛մ սիրելիք.

Չարաբաստիկ հանգամանքներն ու ձախորդ օրերն արգիլեցին ինձ, որ հովուական պարտքս կատարեմ ձեր վերաբերութեամբ: Ուղիղ դաստիարակութիւնն այն ճարտարարուեստ բրուտն է, որի ձեռքում պատանեկական փափուկ հոգին ձև ու ոճ է ստանում: Ես փափագում էի Ս. Տաճարի բեմից կենդանի խօսքի միջոցով իմովսանն նպաստաւոր լինել Ձեզ ճշմարիտ դաստիարակութեան ոգին շեշտելով: Բայց չեղաւ:

Ձեզնից հեռու, կամեցայ գէթ մի ուրիշ կերպ պիտանի լինել ձեզ: Գտայ մի գիրք, որ կարդալու և զարգանալու իսկական ուղին է գծում:

Աշխարհի ընտիրների ամենաընտիր խորհուրդների մի հիւսուածք է դա կանոնաւոր ընթերցանութեան մասին: Թարգմանեցի ու Ձեզ եմ նուիրում:

Կանոնաւոր և խոհական ընթերցանութիւնը ուղիղ դաստիարակութեան, ճշմարիտ զարգացման էական միջոցն է: Անկանոն ու անխտիր ընթերցանութիւնը նոյնքան վնասակար է, եթէ ոչ աւելի, որչափ բացարձակ տգիտութիւնը: Անխտիր և անժամանակ ընթերցանութիւնը այլասեռում է մարդու սիրտը, ապականում բարքը, թուլացնում միտքը:

Ռիչարդսոնի սիրուն հիւսուածքը զգուշացնում է սխալ ընթերցասիրութիւնից և առաջնորդում իսկական ընթերցանութեան ուղիով:

Կարդացէք «Գրքերի ընտրութիւնը», օգտուեցէք նրա լուսաւոր խորհուրդներից, մտքով լուսաւոր, սրտով ազնիւ, կամքով քաջարի եղէք: Այդ կլինի և ամենամեծ մխիթարիչ վարձատրութիւնը Ձեզ սիրող ու միշտ

Ձեզ համար աղօթող

Բենիկ վարդապետին.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ^{4:} 400 400 400

«Որդեակ իմ, զգոյշ լեր ի ստանալոյ գիրս բազումս» արանից երեք հազար տարի առաջ ասաց մարդկանցից իմաստնագոյնը: «Եւ վարժ բազում աշխատութիւն է մարմնոյ» աւելացրեց նոյն իմաստունը առաջնից ոչ պակաս իրաւացի մի խօսք (Էկզ. ԺԲ 12): ԺԴ-ըդ դարու մեկնիչը շեշտելով բնագրի այդ խօսքերը, եզրակացնում է թէ պէտք է կարդալ միայն սուրբ գիրք և այն գրքերը, որոնց ընթերցումը սուրբ գիրքը հասկանալու համար անհրաժեշտ է: Ժամանակակից վերձանողները ժողովողի արտայայտած ճշմարտութիւնը աւելի ընդարձակ իմաստով են ըմբռնում. սակայն չի կարելի չհամոզուել թէ՛ դարերով հաւաքուած գրական արգիւնքների այն անհուն բազմութեան մէջ, որ սկսուած է պապիրուսի տերեւների շրջանից և բնափայտի կեղևի գրաւոր յիշատակարաններից մինչև մեր ժամանակը, երբ դժուար թէ լինի մի քաղաք, որ տպագրատուն չունենայ,— գրքերի ողջամիտ ընտրութիւնն անհրաժեշտ է: «Նախ քան գրքերի ընթերցանութիւնը, ասում է Դիլդայէլին, անհրաժեշտ է սովորել թէ ինչպէս պէտք է գիրք կարդալ:

Ով որ ուզում է կարդալ սովորել, աչքից չպիտի բաց թողնէ մի ամենագլխաւոր հանգամանք, այն է՝ ընթերցանութեան ժամանակ մտքի ինքնուրոյն աշխատանքը ոչ մի բանով փոխարինել չի կարելի: Պատրաստակամ խորհուրդներն ու բարեխիղճ ղեկավարութիւնը կարող են միայն օգեւորել, գէպի ընթերցումն մղել և ոչ աւելի: Գրքերի հետ անձամբ անձին յարաբերութիւն ունենալուն ոչ մի բան փոխարինել չի կարող: Գերազանցի է մի գիրք լու իմանալ, քան հարիւրաւոր գրքերի մասին մի բան գիտենալ անուղղակի ճանապարհով: Ընթերցանութեան ճաշակը և սովորութիւնը պէտք է զարգանայ ինքնուրոյն կերպով և ոչ պատուաստուի դրսից: Ընթերցանութեան ծրագիրն և եղանակը մարդու հոգու մէջ պիտի հաստատուին և նրա խելքի ու մտքի մասը դառնան: Առանց արան կարող է պատահել որ ընթերցանութիւնը ոչ միայն ան-

օգուտ լինի, այլ նոյն իսկ վնաս բերէ: Դօկտօր Մակօշն ասում է. «Գիրքը չպիտի մտածէ ընթերցողի համար, ընդհակառակն նա պիտի ստիպէ նոյն ինքն ընթերցողին մտածելու»: «Ընթերցանութեան դասընթացը» կարող է խիստ բարերար կամ խիստ վնասակար ազդեցութիւն ունենալ, նայելով թէ ինչպէս են ձեռնարկում: Հանգուցեալ Ալօնգօ Պօտտէր եպիսկոպոսը՝ ամենախելօք գրական դաստիարակներից մէկը, ընթերցողներին հետեւեալ ողջամիտ խորհուրդն է տալիս: «Ձեր ընտրած եղանակին գերի մի լինիք, վախենալով փոփոխութիւն ձգելուց նրա ամենափոքր մանրամասնութեան մէջ»: Կողմնակի մարդու օգնութեան կարևորութիւնն և անձնական պակասութիւնները խոստովանելով հանդերձ, պէտք է անձնական ինքնուրոյնութիւնը պահպանել և դէպի ինքն ունեցած յարգանքը չկորցնել: «Ով որ ընթերցանելի գրքի կամ բարձր մտածողութեան համեմատ հոգի չէ դնում ընթերցանութեան մէջ, ասում է Միլտօնը, նա մնում է միշտ երկմիտ, վարանող. երևակայելով թէ գրքի մէջն է խորասուզուում, մինչդեռ միայն նրա արտաքինն է աչքից անցնում»:

Կրթուած դասակարգի ընդհանուր կարծիքը հեղինակի արժանաւորութիւնների կամ գրքի նկատմամբ ընդունուում է միայն այն դէպքում, երբ իսկապէս չի հակասում անձնական հայեացքներին: Միանգամայն անօգուտ է պնդել թէ այս ինչ գիրքը դուրեկան է, երբ նա հաճութիւն չի պատճառում, կամ դուարճանալ նրանով, ինչոր իսկապէս քո աչքումդ անօգուտ է և բոլորովին անհասկանալի: Այս դէպքում եթէ ընթերցողը անկեղծ և մաքրասիրտ չէ, նրանից բան չի դուրս գայ: Փչացած ճաշակը միշտ կարելի է ուղղել, վերստին մշակել և արմատական կերպով փոփոխել, բայց ձեռնալը, կեղծելը և արհեստականութիւնը ոչ մի լաւ հետեանքի չեն հասցնի: Այդ սովորութիւնը պիտի արմատախիլ անել հէնց սկզբից: Եթէ ձեզ բաւականութիւն չի տալիս Շէկսպիրի «Համլետ»-ը և եթէ դուք միևնոյն ժամանակ հիացման մէջ էք ընկնում որ և է դատարկ վիպասանութիւն կարգալիս, մի ամաչէք անկեղծութեամբ խոստովանել այդ դէպքը բերած ժամանակ. ցաւեցէք դրա վրայ, աշխատեցէք և յուսացէք որ ձեր ճաշակը կփոխուի: Այս հանգամանքը անկեղծութեան և ուղղութեան է տանում, ասում է Բէօրնս, իսկ անկեղծութիւնն ոչ մի տեղ այնքան անհրաժեշտ չէ, որքան այստեղ»:

Երբէք մոռանալ պէտք չէ, որ ամենաեռանդուն ընթերցողն իսկ չպիտի պատրէ իրեն այն յուսով թէ կարող է աշխարհի

բոլոր գրքերի նոյն իսկ ամենափոքր մասը կարգալ: «Մի վախենաք, ասում է Պօտտէր եպիսկոպոսը, որ ընթերցանութեան համար այդչափ գիրք է առաջարկուում և մի փորձէք տիրել այդ բազմութեանը. քաջութիւն ունեցէք ձեր տգիտութիւնը խոստովանել շատ բաներում»: Միայն բրիտանական թանգարանում կայ 1,000,000 հատորից աւելի, իսկ Փարիզի ազգային գրադարանում ոչ պակաս 3,000,000 հատորից: Յայտնի մատենագիր Պէրկինսը հաշուել է, որ ներկայումս տարեկան 25,000 ոչ պակաս հատորներ են լոյս տեսնում: Ենթադրելով որ երկու շաբթում կարելի է մի գիրք կարդալ, իւրաքանչիւր միջին տեսակի ընթերցողին ընկնում է տարեկան 25 գիրք կամ 1250 գիրք 50 տարուայ ընթացքում: Հետևաբար ամաչել և իւր տգիտութիւնը չխոստովանուել շատ գրքերի նկատմամբ անմտութիւն և փոքրոգութիւն է: Միւս կողմից՝ միայն վերիվերոյ և ինքնապատան ընթերցողը կհամարձակուի իւր զարմանքը յայտնել այլոց սակաւ ծանօթութիւնների նկատմամբ, որովհետև արժէ որ այդ մարդը մտածէ իւր վրայ, որ համոզուի թէ հէնց ինքն իսկ տգէտ է: Կառապէրի խօսքերով «Գիտութիւնը իւր ծանօթութիւններով է պարծենում, իմաստութիւնը համեստութեամբ խոստովանում իւր տգիտութիւնը»:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Կան բաղաւոր մարդիկ, որոնք չեն կարողանում ճշտութեամբ որոշել թէ ընթերցանութեան սովորութիւնը երբ ձեռք բերին. այս սովորութիւնը անբաժան է մնում նոցանից մինչև կեանքի վախճանը, օգնում է աւելի և աւելի աճող հետաքրքրութիւն և բաւականութիւն գտնելու ընթերցանութեան մէջ: Աշխարհում այնպիսի տղամարդիկ և կանայք կան, որոնց երիտասարդութիւնն ու ծերութիւնը այնպէս սերտ կապուած են ընթերցանութեան սովորութեան հետ, որ եթէ հարցնելու լինի թէ երբ ձեռք բերին այդ սովորութիւնը և մօտաւորապէս երբ կթողնեն, միայն Ստեղծմանի սքանչելի վիպասանութեան հերոսների նման կարող են պատասխանել. «աւելի լաւ է այդ մասին հարցնէք մտադահաս աղջկան կամ իմաստուն ծերին»: Երջանիկ է նա, ով որ մանկութիւնից այնպիսի բարեյաջող հանգամանքների մէջ է դրուում, որ ընթերցանութեան սովորութիւնը անդգալի կերպով է ձեռք բերում. երջանիկ է նա, որ շրջապատուած է լաւ գրքերով և ամսագրերով, որի ժամա-

նակը մանկութեան և պատանեկութեան հասակում այնպէս է բաշխուած որ թոյլ է տալիս նրա մի նշանաւոր մասը ընթերցանութեան նուիրելու՝ մի կողմից դպրոցական պարապմունքներին, միւս կողմից ֆիզիքական աշխատանքին կից: Հասկանալի է թէ որքան մեծ պատասխանատուութիւն կայ այս գործում ծնողներին և դաստիարակների վերայ և թէ ինչպիսի ծանր խնդիր է դրուում նոցա առաջ հէնց սկզբից: Գրքերի խոհական ընտրութեան և ընթերցանութեան լաւագոյն եղանակի մշակումն նոցա պարտականութիւնն է:

Ընթերցանութեան սովորութիւնը մշակելու վաղագոյն շրջանում, այն հարցը՝ թէ երբ անմիջական առաջնորդութիւնը կարելի է թողնել և բաւականանալ միայն խորհուրդներով ու ցուցմունքներով, ծնողների և դաստիարակների լիազօր հսկողութեանն է մնում: Գուցէ չափազանց եռանդուն ղեկավարութիւնն աւելի փնասաքեր լինի, քան միայն սիրոյ ներշնչումն դէպի ընթերցանութիւնը: Օգտակար է գեոահաս ընթերցողին թողնել գրքերի ազատ ընտրութիւնը և ընթերցանութեան ծրագիրը: Այս ինքնուրոյն զարգացման ընդունակութեան նկատմամբ Հերբերտ Սպէնսէրն ասում է. «Կրթութեան մէջ ինքնազարգացման ամենաընդարձակ տեղը պիտի տալ պէտք է ջանալ որ մանուկները սովորեն անձամբ մակարերելու եզրակացնել: Որքան հնարաւոր է քիչ պէտք է շնչալ նոցա և ստիպել ըստ կարելոյն անձամբ անձին աւելի շատ մակարերել: Մարդկութիւնն աւելի յաջողակ զարգացել է միայն ինքնակրթութեամբ. նոյն ընթացքով պէտք է յառաջ խաղայ ամենայն միտք իւր զարգացման մէջ փառաւոր հետեանքի հասնելու համար, որին իբրև ապացոյց ծառայում են այն բազմաթիւ մարդիկ, որ ինքնուրոյն կերպով են զարգացել: Ով որ դպրոցական սովորական կրթութիւն է ստացել և համոզմունք է կազմել թէ, միայն այդ կերպ կարելի է կրթուել, նա ի հարկէ մանուկներին ինքնազարգացման չի յանձնի: Բայց միթէ չենք տեսնում, որ մանուկներն առանց կողմնակի օգնութեան են ձեռք բերում ծանօթութիւններից ամենանշանաւորը՝ շրջապատող աշխարհի ծանօթութիւն. որ նոքա իրենք են սովորում մայրենի լեզուն, առօրեայ կեանքի փորձերից ահագին պաշար են ժողովում, ձեռք են բերում արտաքոյ—դպրոցական իմաստութիւնը: Միթէ յաճախ չենք զարմանում մեծ քաղաքների փողոցային ընկեցիկ երեխաների անսովոր մտքի վերայ: Եւ որքան մարդիկ յաղթող են ելնում այն բազմաթիւ արգելքներից, որոնք հակադիր են նոցա զարգացման: Այս ամենը համոզում է,

որ բաւական է միայն պատշաճաւոր կարգաւորութեամբ և ձեւով դասաւորել ուսուցման առարկաները և ահա ամեն մի սովորական ընդունակութիւնների տէր աշակերտ ամենանշան օգնութեամբ կյաղթէ բոլոր դժուարութիւններին: Մանկան մտածողութեան ընթացքը զննելով, յաճախ սուր նկատողութիւններ լսելով նոցա հասկացողութեանը մատչելի առարկաների մասին, ո՞վ է որ չի մակարերի թէ նոցա տրամադրութեան տակը թագնուած, կարգաւորուած ոյժերը արագապէս ստիպում են նոցա իւրացնել առարկաներն առանց կողմնակի օգնութեան: Որոճալու մշտական կարևորութիւնը մեր անմըտութեան հետեանքն է և ոչ մանկան յանցանք: Մանկան ուշադրութիւնը կորցելով հետաքրքրող իրողութիւններից, որոնց նա կարող էր ինքնուրոյնաբար իւրացնել, մենք նրա վզին ենք փաթաթում այնպիսի իրողութիւններ, որոնք նրա հասկացողութիւնից վեր են և հետեաբար կորցնում են նրա աչքում ամեն հետաքրքրութիւն. նկատելով որ մանուկը հրաժարուում է ազատօրէն ընդունելու նրանց, մենք նկրտում ենք ոյժով մըտցնելու նրա գլուխը սպառնալիքների և պատիժների միջոցով: Մենք մերժում ենք աշակերտին այն ծանօթութիւնը, որին նա ծարաւ է և դրա փոխարէն լցնում ենք նրա գլուխն այն ինչոր անկարող է մարսել: Այսպիսով մենք տկարացնում ենք նրա ընդունակութիւնները և հետեաբար զղուանք ենք ներշնչում նրան դէպի գիտութիւնն ընդհանրապէս: Մասամբ ի շնորհս մեր անմիտ անտարբերութեան, մասամբ ուսուցման եղանակի մշտական անպէտքութեան, մանուկը դադարում է հասկանալուց առանց բացատրութեան և սովորում է կրաւորաբար վերընդունել աւանդելի գիտութիւնը և մենք մեզ հանգստացնելով ասում ենք թէ՛ կրթութիւնն էլ հէնց այս կարգով պիտի լինի: Մեր ուսուցման եղանակը անզօրութիւն յառաջ բերեց. այժմ մենք անզօրութիւնը բարձրացնում և մեր եղանակի հիմքն ենք դնում»:

Սպէնսէրից ընդօրինակած հատուածից, որ բաւական կծու ձևով է արտայայտուած, պատշաճ եզրակացութիւն անելուց յետոյ դժուար թէ այլ ևս հարց ծագի՝ արդեօք շատ յաջողութիւն կունենան այս եղանակով ղեոահաս ընթերցողները և նրանք, որոնք կարգալ պիտի սովորեն հասակն առնելիս, նրանք անհամեմատ աւելի խելացի առաջնորդութեան կարիք են զգում քան խստապահանջ դաստիարակի: Իհարկէ և՛ մէկը և՛ միւսը չունենալուց աւելի լաւ է վերջինն ունենալ, քան ոչինչ չունենալ. փորձը յաճախ ցոյց է տալիս, թէ յայտնի հան-

գամանքներում միայն խիստ հրամաններն են օգնում. բայց իբրև ընդհանուր կանոն պէտք է ընդունել, որ աշակերտն աւելի շատ ուղղութիւն է պահանջում, քան խիստ հրաման: Ընթերցանութեան սովորութիւնն աճում, զարգանում է, այլ ոչ ստեղծուում. անհրաժեշտ է այս ի նկատի ունենալ ընթերցանութեան սէր ներշնչելիս: Այնտեղ ուր անհրաժեշտ են խիստ միջոցները, այնպէս պիտի անել որ առաջնորդութիւնը լիովին իւրանայ անձի մէջ և նրա մտքի մասը դառնայ, այլ ոչ կողմնակի միջամտութիւն հանդիսանայ:

Օգտուելով խելօք դաստիարակների խորհուրդներից, պիտի ջանալ օրուայ՝ ընթերցանութեան համար որոշեալ մասը շահաւէտութեամբ գործադրելու սովորութիւնը իւրացնել: Միսս Իդիս Սիմփսոյը՝ ամենախելօք անգլուհիներից մէկը, ասում է՝ դպրոցական ծանօթութիւնների շատ բաժինը ձեռք է բերուում աւելի վաղ, առօրեայ փորձով: Պատմութիւնը և աշխարհագրութիւնը պիտի լրանան պարբերական հրատարակութիւններից քաղած տեղեկութիւններով: Որեւէ ականաւոր հեղինակի կամ հերոսի անունն իմանալ և հասկացողութիւն չունենալ նրա հեղինակութիւնների և սխրագործութիւնների մասին, համարեա կատարեալ տգիտութեան է հաւասար: Գիտութիւնների իւրաքանչիւր ճիւղի մէջ իբրև կանոն է ընդունուած, որ որոշումների և բանաձևերի ծանօթութիւնն առանց առարկայի փորձնական հմտութեան, ոչինչ է: Ընդհանուր անստոյգ ծանօթութիւնը, որ չի ճշտուել փորձով, երբեմն աւելի կըրթական արժէք ունի, քան անստոյգ մերկ փաստերը: Կրթութեան արգիւնքները չեն կարող գոհացուցիչ լինել, եթէ ուշադրութիւնը մանրամասնութիւններին է նուիրուում ի վնաս հանգամանօրէն ծանօթութեան առարկայի արտաքին տեսքի և ճաշակի հետ»:

Մ—ը Ռէսկինը նկատում է թէ՛ անհրաժեշտ է քաղցրացնել ուսման արմատը, նա՛ առարկաների ոյժից վեր քանակութիւնից յառաջացած չարիքից ազատուելու համար, փրկութիւն է որոնում ժամանակակից մտքի մշտապէս թարմ հոսանքի մէջ: «Թող երջանկութեամբ հրճուին մանուկները իրենց հասակում, ասում է նա. լաւ անցուցած տարիներն յիշելու բաներ են, իսկ ժամանակը կը բանայ նոցանում այն ամենը, ինչ որ դպրոցը պահանջում է նրանցից»: Ուսման արմատը քաղցրացնելու նկատմամբ Եղուարդ Էվերէտ Հէլն այսպէս է ասում. «Ամենից գլխաւորն այն է, որ զբաղմունքները հրապուրիչ լինեն. ինչ ճանապարհ էլ որ ընտրելու լինենք, այս ընթացքը

պիտի հաճելի լինի անշուշտ. այլապէս՝ մանուկները նայելով Աստուծոյ ստեղծած գեղեցիկ աշխարհի վերայ, աւելի շուտ կը վազեն դըօսնելու, քան գիրք ձեռք կառնեն և սորանով նրանց մեղադրել չի կարելի»: Թէ որչափ հնարաւոր է հեշտացնել և ախորժելի դարձնել սկզբնական ուսուցումն, կարող է ըստ արժանւոյն գնահատել միայն նա, որի առաջին քայլերը բացուել են խոհուն հօր կամ մօր, ուսուցչի կամ բարեկամի ձեռքով: Կարիք չկայ ասելու թէ որչափ կենդանի պահանջ է զգում առաջնորդողի նա, ով զուրկ է մնացել նրանից հէնց սկզբից:

Սակայն սրանից չի հետևում թէ ով ինքն իրեն է յանձնուած կրթութեան գործում պիտի յուսահատուի. յաջողակ ինքնակրթութեան և ազագայում կեանքի զանազան ասպարէզներում գիտեցածը յաջողութեամբ գործածելու օրինակներ, նոյնիսկ այնպիսի հանգամանքներում, ուր ոչ միայն ժամանակի և գրքերի այլ և գրքի երեսը լուսաւորող մոմի կարօտութիւն անգամ կայ, շատ ունինք: Այդպիսի օրինակներից, երբ ընթերցանութեան սովորութիւնը ձեռք է բերուում և արմատանում է հակառակ բոլոր խոչնդոտների, կարելի էր մի ամբողջ գիրք կազմել: Բայց հերիք է նրանցից մէկը յառաջ բերենք, որ յարգելի Ռօբէրտ Կօլիէրն է պատմել իւր մօտիկ անցեալի անձնական յիշողութիւններից: Իւր ասպարէզը դարբնացան ընտրելով անգլիական մի աննշան քաղաքում, ժամանակով նա ամբրիկական նշանաւոր բարոզիչներից և հեղինակներից մինն եղաւ: «Կամենում էք իմանալ, թէ ինչպէս ես քարոզիչ եղայ, դարձաւ նա միանգամ իւր ունկնդիրներին: Մանկութեանս մէջ օր ու գիշեր Բենիան, Կրուզօ և Հօյլամիդ էի կարդում. իմ հրճուանքս միայն դրանք էին, մնացած բոլոր բաների վրայ նայում էի, իբրև պարտաւորական աշխատանքի: Բացի դրանից ես բաւականութիւն էի զգում Աստուածաշնչի և Շէկսպիրի ընթերցանութիւնից, այս գրքերը նոյնքան թանգ էին ինձ համար, որքան կենդանի ջրի աղբիւրը և ահա հէնց այդ ժամանակում ես վճռեցի ամբիօնի նուիրուել: Ընթերցանութեամբ տարուելով ես անզգալի կերպով մտքերս պարզ և մէկին արտայայտելու հմտութիւնը ձեռք բերի: Մինչև ութ տարեկան հասակս ես դպրոցում սովորեցայ, իսկ ութնամեայ հասակիցս սկսած ես երեքտասան ժամեայ աշխատանքի մտայ... Բենիանի և Կրուզօյի ծանօթութեամբ ընթերցանութեան անյազ ծարաւ զգացի: Նոյն իսկ համագիտութեան պոկոտուած հատորը մի քանի անգամ կարգացի: Քանիցս կարդացել եմ

այն, ինչ որ մինչև անգամ չէի կարող հասկանալ: Յիշում եմ, ամենամեծ բաւականութեամբ կարգացի բարողչական ընկերութեան մի ինչ որ հին հաշիւ. այնտեղ խօսքը Չինաստանի և Լաբրադորի մասին էր: Ես կարծում եմ, որ ընթերցանութիւնը և սննդառութիւնը նման են միմեանց. երբ քաղցը յագեցած է՝ խորոզ ես դառնում. ես յիշեցի այդ հաշուի մասին լոկ նրա համար, որ նրանում խօսքը Հուզոյի գեղազուարճ հովտի մասին է: 1839 թ. ծննդեան տօներին արձակուրդ չը տուին ինձ. այդ պատճառով ես սաստիկ վշտացած էի, որ շատ բնական էր իմ մանկական հասակի համար, ես օձախի մօտ նստած էի, երբ ներս մտաւ ծերունի կալուածատէրը. «Գիտենալով որ սիրում ես ընթերցանութիւնը, ես քեզ համար մի գիրք բերեցի» ասաց նա: Իրվինգի նկարագիրն էր այն. այդ գրքի մասին երբէք չէի լսել: Նա այնպէս գրաւեց ինձ, որ ընթերցանութիւնը վերջացնելիս կարծես խոր քնից գարթեցի: Այդպիսի մի հաճոյք ես չէի գրացել ամենամատաղ հասակումս, երբ Կրուզոյով է հրապուրում: Կորցրած արձակուրդիս ամսոսանքն անհետացաւ. այժմ ես համոզուեցայ, որ գիրք էլ կայ, գիրք էլ: Սրանից յետոյ ընթերցանութեան ծարաւս այլևս չը կտրուեցաւ: Մո՞՞ղ վերջանալիս նստում էի օձախի մօտ և՛ աւելի լաւ տեսնելու համար, գլուխս դէպի կրակն էի խոնարհեցնում: Ես կարդում էի հաց ուտելիս կամ դարբնոցի փուքսը փչելիս, նոյն իսկ գնալիս, երբ ինձ տեղ էին ուղարկում. կարդալով կարողանում էի մի ժամուկը չորս մղոն անցնել: Իմ ներքին աշխարհս ամբողջապէս գրքերի մէջն էր կենդրոնացած: Ես նոյնքան քիչ էի մտածում թէ մի օր քարոզիչ կը դառնամ, որքան դուք ձեր տղայութեան մէջ չէիք սպասի ձեր մէջ տեսնել ինձ: Ես համոզուած եմ, որ եթէ երեսխան մի բանի համար սէր ունի, լինի գիրք թէ մի այլ աշխատութիւն՝ նկարչութիւն, մեքենագործութիւն կամ երաժշտութիւն, այդ սէրը նրա մէջ ազնիւ հակումներ կը բանայ և կը բարձրացնի նրան հասարակութեան աչքում: Իմ ընկերներիցս երկուսը, երեքը ինձ նման սիրում էին գրքեր: Մենք բարեկամացանք և ընթերցանութիւնը թոյլ չէր տալիս մեզ կոպտութեամբ կեղտոտուիլ. նա արբեցութիւնից հետո պահեց մեզ: Յիշում եմ դեռ տղայութեանս հասակից, թէ ինչպէս էի կարդում Մակուէյի նկարագիրը Բէկօնի մասին և յափշտակուում էի նրա գրական գեղեցկութիւններով. այսպիսի հանգամանքում ես շարունակ ամսոսում էի, որ ինձ չի յաջողուել լաւ ուսում ստանալ: Այս թերութիւնն զգում էի ես իմ ամ-

բողջ կեանքի ընթացքում և ահա այդ էր պատճառը, որ ընթերցանութեան անյազ ծարաւ էի զգում: Ես եզան նման տոկուէն էի և երկու մարդու չափ կարող էի աշխատել. այսպիսով ինձ համար անզգալի կերպով ես վարուեցի ինչպէս սերմնացան, որ բարի սերմեր է սերմանում իւր արտում»:

Անհրաժեշտ է ընթերցողի՝ լինի նա պատանի թէ հասակըն առած, միևնոյնն է, և գրքերի մէջ բարեկամական կապ հաստատել: Եթէ գիրքը ինչպէս և դաստիարակը դաժան են, եթէ նրանց կենակցութիւնը պատուհասող ոյժ կամ դատաւորն է յիշեցնում, այն ժամանակ դժուար թէ նոքա կարողանան բարերար, օգտակար ազդեցութիւն գործել: Բարեկամական զգացմունքի զարգացումը մի այնպիսի վիճակ է պատրաստում հոգու մէջ որով ամենայն ինչ հեշտ և հնարաւոր է դառնում: Երբ բարեկամական յարաբերութիւն կայ դէպի դաստիարակն ու գիրքն աշխարհը սանկիկ համար աւելի լայն հրապուրիչ է դառնում: Պետրարքն այսպէս է խօսում գրքերի մասին. «Ես այնպիսի բարեկամներ ունիմ, որոնց շքեջանն ինձ համար հաճելի է, նրանք բոլոր երկիրներին և բոլոր ժամանակներին են պատկանում: Նրանք աչքի են ընկել զանազան ասպարէզներում և իրենց գիտական հմտութիւններով բարձր պատիւների արժանացան. նրանք խիստ մատչելի են, որովհետև միշտ իմ ձեռքումս են. նրանց հասարակութիւնից օգուտում եմ ինչպէս կամենում եմ. նրանք բնաւ չեն ձանձրացնում ինձ, ընդհակառակն անմիջապէս պատասխանում են իմ հարցերին: Նրանցից ոմանք անցած գնացածի պատմութիւնն են անում ինձ, միւսները բնութեան զազանիքներն են բաց անում իմ առջև: Ոմանք ուսուցանում են ինչ պարելու եղանակը: միւսները մեռնելու: Ոմանք իրենց կենդանութեամբ ցրում են հոգսերս ու թախիժս, միւսներն ամրացնում են հոգիս, ուսուցանելով զսպել բաղձանքներս և ամեն բանում ինքս ինձնից կախումն ունենալ: Մէկ խօսքով նրանք բաց են անում իմ առաջս բոլոր հնարաւոր ձանապարհները դէպի գիտութիւններն ու արուեստները և ես նրանց ցուցմունքների վրայ միանգամայն վստահ եմ»: Մէր Վիլիամ Վելլերը շատ սիրուն կերպով նկատում է գրքերի համար. «Իմ առանձնատեսակումը ես կարող եմ համոզուած լինել, թէ ամենախելօք մարդկանց հետ եմ զրուցատրում. այն տեղից դուրս գալով ես չեմ կարողանում պաշտպանուել անմիտների հասարակութեան դէմ»: Ջօն Հերշլը գրքերն անուանում է «բնութիւն հասարակութիւն բոլոր պատմական ժամանակների»: Կենսական բոլոր հանգամանքներում

մարդուն նեցուկ տուող միակ հրապոյրը, երջանկութիւն և հոգու ազնուութիւն պատրաստող աղբիւրը, մեր ցանկութիւններին հակառակ ընթացող կենսական բոլոր ձախորդութիւնների դէմ մեր պաշտպանն ու նրանց սպանացողը՝ ընթերցանութեան սէրն է: Արծարծեցէք այդ սէրը, գոհացում տուէք նրան և դուք համարեան, երջանիկ կանէք մարդուն, եթէ՝ իհարկէ գրքերի լաւ ընտրութիւն անել կտար նրան: Դուք նրան կը մտցնէք բոլոր ժամանակների ընտիր հասարակութեան մէջ, կը մտեցնէք սրամտութեան, վեհութեան, մաքուր բնաւորութեան օրինակներին, որոնք երբ և իցէ մարդկութեան զարդն են եղել: Դուք կը մտեցնէք նրան բոլոր ազգերի, բոլոր ժամանակների հետ: Գրքերն անձանօթ աշխարհներ են բացանում մարդու առաջ»: Վիլիամ Չաննինգն ասաց գրքերի մասին. «Ընտիր գրքերում մեծ մարդիկը զրուցատրում են մեզ հետ, բաց են անում մեզ իրենց սրբազան խորհուրդները: Գրքերը հեռաւորների և հանգուցեալների ձայներն են: Նրանք իսկական հարթաչափեր են: Ամեն մարդու՝ ով կը կամենայ ըստ արժանւոյն օգտուել նրանցից, նրանք տալիս են ընտիր հասարակութիւն, որ կազմուած է մարդկային ցեղի ամենամեծ ներկայացուցիչներից: Ի՞նչ փնաս որ ես աղքատ եմ, որ բարեկեցութիւնը չի ուզում այցելել իմ խաւար բնակարանին, եթէ ուսումն և բանաստեղծները բարեհաճում են մտնել իմ յարկիս տակ, եթէ Միլտոնն իմ շէմքս կոխելով դրախտն երգէ, եթէ Շէկսպիրն իմ առաջ մարդկային սիրտը բանայ և երևակայութեան աշխարհը տանի ինձ. եթէ Ֆրանկլինի գործնական հմտութիւններով իմ միտքս հարստացնի: Ես չեմ գանգատուի թէ կրթուած հասարակութեան մէջը լինելու պակասութիւնն ունիմ. գրքերը կ'օգնեն ինձ քաղաքակիրթ մարդ դառնալու, եթէ նոյն իսկ ես ընտիր հասարակութիւնից օգտուել չը կարողանամ: Գրքերին ոչ մի բան փոխարինել չի կարող. նրանք միայնակեցի, հիւանդի, նեղեալի ուրախ և հաճելի ընկերներն են: Համայն աշխարհի գանձերը չեն կարող փոխարինել այն օգուտներին, որ նոքա են տալիս: Թող ամեն ոք ջանայ, որքան հնարաւոր է, ընտիր գրքերով շրջապատել իրեն, թող հոգայ գրադարանին մերձեցնել թէ իրեն և թէ իւր ընտանիքին: Գրքերի համար արժէ որեւէ փառակեցութիւն գոհել»: Զարմանալի չէ Ֆենելոնի գեղեցիկ խօսքը. «Եթէ աշխարհի բոլոր թագաւորութիւնների կորադիօններն իմ գարշապարի շուրջը թափէին իմ գրքերիս և ընթերցանութեան սիրոյս փոխարէն, ես արհամարհանքով յետ կը մղէի նրանց»: Պատմաբան Հիբերօնն

այսպէս է ասում. «Գրքերի սէրը իմ կեանքիս փառքն ու պարծանքն է, ես այն չէի փոխի Հնդկաստանի բոլոր գանձերի հետ»:

Մեծ ընթերցողների այս բոլոր իմաստուն արտայայտութիւններն ապացուցանում են թէ մարդս ընթերցանութեան սովորութիւնը զարգացնելով իւր մէջ, ձեռք է բերում ոչ միայն իւր ծառայութեանը պատրաստակամ բարեկամներ, այլ օգտակարութեամբ կարգալով կարող է հաստատապէս ասել. «Իմ գլուխը՝ իմ թագաւորութիւնս է»:

Ի՞ՆՉՊԻՍԻ ԳՐՔԵՐ ԿԱՐԴԱՆՔ

«Ի՞նչպիսի գրքեր կարդանք»: Այս հարցին պատասխանելու համար պէտք է աչքէ անցնել ամբողջ գրականութիւնը. այս հարցն այնչափ կարևոր է, որ մէկ մարդու անձնական կարծիքը՝ որքան էլ բարեխիղճ և ձեռնհաս լինի, վճռել չի կարող: Տարբեր ճաշակներ, տարբեր կարիքներ, պահանջում են և տարբեր ցուցմունք: Ես գերադասում եմ աւելի յայտնի մարդկանց խօսքերով տրտայտել իմ անձնական կարծիքս այս գլխում:

Մասնաւորապէս գրքերի ընտրութեան խնդրի նկատմամբ վճռապէս դատելիս, մենք համոզուում ենք, որ միայն չնչին և անարժէք ձեռնարկներն են, որ ընթերցանութեան կարգաբանալ ընթացքն են նախագրում: Առաւել ողջամիտ մանկավարժներն ամենեւին պէքից չեն փախցնում այն հանգամանքը, թէ գրքերն ընթերցողների համար են և ոչ ընթերցողները գրքերի: «Ընթերցանութեան ընտիր եղանակն, ասում է Էմէրսօնը, բնականն է, այլ ոչ մեքենականը, որ ժամերն ու երեսներն է հաշուում: Ուսանողը մի գլխաւոր նպատակի պիտի ձգտի, այլ ոչ ցրուէ իւր միտքը ամեն ձեռքն ընկածի վրայ: Թող կարգայնա ինչոր իրեն անհրաժեշտ է և չձանրաբեռնէ յիշողութիւնը ամեն տեսակ անիմաստ բաներով: Եթէ ամբողջ ազգերն իրենց քաղաքակրթութիւնը մի գրքից էին բաղում, ինչպէս օրինակ՝ Եւրոպայի մեծ մասը՝ Աստուածաշնչից, Պարսկաստանը՝ Հաֆիզից, Չինաստանը՝ Կօնֆուցիոսից, Սպանիան՝ Սերվանտեսից, ուրեմն շատ հաւանական է, որ մարդկութիւնն աւելի շահ կուենար, եթէ վատ հեղինակների ստեղծագործութիւնները անհետ կորչէին աշխարհի երեսից և միայն գասական հեղինակների լաւագոյն գրքերը մնային, ինչպէս օրինակ՝ Շէկսպիրը, Միլտոն և Բէկօնը Անգլիայի համար»:

էմէրսօնը շարունակութեան մէջ համոզում է «վատ գիրք մի կարդաք»: Գրքի ընտրութեան համար նա հետեւեալ կանոններն է տալիս. Ա. Մի կարդաք այն գիրքը, որի լոյս տեսնելու օրից դեռ մի տարի չի անցել. Բ. Կարդացէք միայն այն գրքերը, որ վարկ ունին. Գ. Կարդացէք միայն այն, ինչ որ ձեզ դուր է գալիս, որովհետեւ ինչպէս ասաց Շէկսպիրը, «Օգուտ չկայ այն բանում, որից հաճոյք չես զգում. սովորեցէք միայն այն, զէպի որը սէր էք տածում»: Ի հարկէ այս կանոններից առաջինն անպայման հետեւել չի կարելի: Միւս կողմից, միայն դասականների փեշիցը բռնելով՝ ընթերցողը ժամանակակից գրականութիւն աչքից կորցնելու վտանգի մէջը կ'ընկնի, թէպէտ և սրանից այնպիսի դժբաղդութիւն չի ծագի, ինչպիսին նորագոյն՝ մեծ մասով անպէտք գրքերի վրայ ծախսած ժամանակի կորստից:

Կարելի է կարծիքով գրքերը երկու խմբակցութեան են բաժանուում՝ ոչխարների և այծերի: Ընթերցողները վտանգ չեն սպասում, մինչդեռ վտանգը մեծ է. նա աճում է ոչ օրերով, այլ ժամերով և դաստիարակի վրայ սրբազան պարտք կայ անխոնջ հետեւելու գրքերի ընտրութեան: Նա պիտի իմանայ որ գրքերը՝ ինչպէս և մարդկային հոգիները, ոչխարների և այծերի են բաժանուում: Իբրև հովիւ՝ նա պիտի ջոկէ վերջիններիս և իւր ձախ կողմը կանգնեցնէ, խիստ հսկելով, որպէս զի նրանց ապականիչ շունչը չդիպչի կրթուող սերնդի մաքուր առողջ հոգուն:

Գրքերի երկու խմբակցութեան ստորաբաժանումն աւելի ճշտութեամբ Ռէսկինն է անում: Նրա կարծիքով գրքերը բաժանուում են բոպէականի և մշտնջենաւորի: Նկատեցէք այս զանազանութիւնը, որ բացառապէս գրքերի արժանաւորութիւնից չէ կախուած: Միայն վատ գրքերը չեն, այլ լաւերն էլ կարող են կարճատև լինել: Բոպէական գրքեր կան և՛ վատ և՛ լաւ: Նախ քան յառաջ գնալը, ես այս երկու խմբակցութիւնները կորոշեմ: Բոպէական լաւ գրքեր կարող են լինել՝ օրինակի համար որևէ հեղինակի հետաքրքիր, օգտաւէտ յայտնութիւնները, որ ուրիշ կերպ չի կարողացել արտայայտել, բայց եթէ տպագրութեամբ... Այս տեսակին են պատկանում ճանապարհորդական զեղեցիկ պատմութիւնները, երգիծական սրամիտ դիտողութիւնները ժամանակակից խնդիրների վրայ, կենդանի բանաստեղծական զրոյցները նորութեան ձևով, անցեալ պատմութեան իրողութիւնների բարեխիղճ հաղորդութիւնը. բոլոր այսօրինակ բոպէական գրքերը, որոնց թիւն

աճում է ուսման ծաւալման հետ, իրենց դարու բնաւորութիւն են ներկայացնում: Անշուշտ, նրանք ահագին օգուտ են տալիս և մենք արհամարհելով նոցա շատ բան ենք կորցնում: Միւս կողմից մենք աւելի վատ արած կը լինենք եթէ այսպիսի շարդրութիւններն իսկական գրքերի տեղը դնենք: Դրանք իսկապէս ասելով գրքեր չեն, այլ տեղեկութիւններ լրագրական ձևով: Մեր բարեկամների նամակները որոշ բոպէում կարող են շատ հետաքրքիր լինել, բայց թէ արժանի է նրանց պահել, այդ դեռ հարց է: Մենք մեծ կարիք ենք զգում լրագրերի, բայց մի անգամ կարդալուց յետոյ նրանց հետաքրքրութիւնը կորչում է: Որևէ տեղի հետաքրքիր նկարագրութիւնը, ճանապարհի, հիւրանոցների, անցած տարուայ եղանակի մասին եղած զրոյցը, որևէ զուարճալի պատմութեան կամ գործի հանգամանքների հաղորդութիւնը՝ թէկուզ գրքոյկով, իսկապէս չի կարելի գրքի տեղ դնել և այդ տեսակ յօդուածների ընթերցումը իսկական ընթերցումն է: Գիրքը թընուցիկ նկատողութիւնների և տեղեկութիւնների բնաւորութիւն պիտի չունենայ. նա պիտի նախասահմանուի երկար դարերի համար: Յաճախ մի գիրք տպագրուում է միայն նրա համար, որ հեղինակը չի կարող միաժամակ խօսիլ հազարաւոր ունկնդիրների հետ. եթէ հնար լինէր նա իւր մտքերը բանաւոր կերպով կարտայայտել. այսպիսի զէպըում գիրքը նրա խօսքի բազմապատկիչն է դառնում: Դուք ուզում էք խօսել ձեր բարեկամի հետ, որ Հնդկաստանումն է, բայց չէք կարողանում և ահա տպագրուած գիրքը ձեր խօսքի հաղորդիչն է հանդիսանում: Բայց գիրքը միայն նրա համար չի տպագրուում, որ մտքի բազմապատկիչ կամ հաղորդիչը լինի, այլև միևնոյն ժամանակ նրա պահարանը: Հեղինակը ընթերցողին հաղորդում է այն, ինչ որ իրեն ճշմարիտ, օգտակար և անկասկած գեղեցիկ է երևում: Նա այնպիսի մտքեր է տալիս, որ ուրիշները դեռ չեն արտայայտել, ընդհանրացնում է նրանց աւելի ճոխ և անշուշտ դիւրըմբռնելի ձևով: Իւր կեանքի ամբողջութիւնն յառաջ բերելով հեղինակն աշխատում է մշտնջենաւորել այն ամենը, ինչ որ իւր հասկացողութեամբ ճշմարիտ է, ինչ որ իսկական իմացականութեան է արժանի, այն ամենը ինչ որ յաջողուել է իրեն՝ իբրև տիեզերքի մի մասնիկի անձամբ փորձել, կրել: Եթէ հնար լինէր նա ապառաժի վրայ կը քանդակէր իւր մտքերն ասելով. «Մրանք են միայն իմ ամենալաւ նսր» մնացած բաներում ես նման էի ուրիշներին՝ ուսում, խմում, քնում, սիրում, առում էի ինչպէս ուրիշները. իմ կեանքս ջրի

շողի էր լոկ, կար և չկայ. բայց ահա ես այս տեսայ և իմացայ, այս իմ մասն է և ձեր ուշադրութեանն արժանի»: Այս ամենը նա գրեց ճշմարիտ ոգևորութեան ազգեցութեամբ ինչպէս որ կարողացաւ և նրա գրածը գիրք եղաւ:

Միտէր Ռէսկինը բացատրում է նոյնպէս թէ գրքի արժանաւորութիւնը չափուում է ընթերցողին տալիք օգտի չափով: «Երկու տեսակ գրականութիւն կայ, ասում է Դը-Կէնսի՝ դրական գիտութիւնների և մտաւոր զօրութեան գրականութիւն. եթէ գիտութիւնը չի կարող զօրութիւն դառնալ, կմնայ իբրև մտքի անպէտք խոտան: Գրքի ընտրութիւնը բաւական կհեշտանար ընթերցողի համար, երբ գիրքը ձեռք առնելիս նա ինքն իրեն հարց տար թէ ինչ օգուտ կարող է քաղել այդ գրքից: Այս հարցը միշտ դէպի լաւ գրքեր կառաջնորդէ և եթէ ոչ միշտ դէպի լաւը, գոնէ դէպի օգտակարը:

Հոմերոս, Պլուտարքոս, Հերոդոտոս, Պղատոն, Վիրգիլիոս, Լիվիոս, Տակիտոս, Դանտէ, Տասսօ, Պետրարք, Սերվանտէս, Թոմաս Գեմբալի, Գէօթէ, Շիլլէր, Չաուսէր, Սպինոզէր, Շէկսպիր, Միլտոն, Բէկոն, Թոմաս, Բրաուն, Բենիամն, Ադրիսօն, Գրէյ, Սկօտտ, Վօրգուօրդ, Հաուսօրն, Էմէրսօն, Մօտլէյ, Լօնգֆէլօ, Բրիանտ, Լօվէյլ, Հօյլման և Վիտիէր—ահա այն հեղինակները, որոնց կարգալիս իզուր ժամավաճառ լինելու վտանգաւոր քայլը չենք անում: Սակայն ճաշակները տարբեր են. մէկը գերադասում է Վօրգուօրդին Կաուպէրից, միւսը Բանկրօֆտին աւելի օգտակար է համարում Հերոդոտոսից, երրորդը հաւատացնում թէ Էբերսի «Ուարդիի» նման, կամ Կինգսլէի «Հիպատիի» նման պատմական վիպասանութիւնները անհամեմատ աւելի խրատական են Գրօտի «Յունաց պատմութիւնից» կամ Հիբբօնի «Հռոմէական կայսրութեան անկումից»: Իւրաքանչիւր ընթերցող պէտք է անձամբ որոշէ թէ ինչն է իրեն աւելի օգտակար. իւր որոշման մէջ նա կարող է առաջնորդուել հեղինակաւոր անձանց կարծիքով, ի հարկէ իւր անձնական հայեացքն էլ պահելով հանգերձ: Գիրք ընտրել միևնոյն է թէ բարեկամ գտնել. եւ մէկ եւ միւս դէպքում մենք բարոյական շահ և բարձր բաւականութիւն ենք սպասում:

Մարիա Արնօլդը, որի խորհուրդները սակայն չի կարելի միշտ անպայման ընդունել, խօսելով ընթերցանութեան կարիքի մասին, մարդու ամենարարձր ձգտումների շարքն է դասում այն. «Քաղաքակրթական զարգացումը աղքատին էլ նոյնպէս անհրաժեշտ է ինչպէս և հարստին. ներկայումս կրթութիւնը շատ քիչ բան է տալիս թէ մէկին և թէ միւսին,

աւելի քիչ աղքատին քան հարստին: Քաղաքակրթական զարգացումը սահմանելով որպէս ամենարարձր իմացականութիւն այն ամենի, ինչ որ աշխարհում խորհուել ու խօսուել է, աւելացնում ենք որ այդ նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհը ընթերցանութիւնն է: Ներկայումս ընթերցանութեան համար ուղի մշակուած եղանակ չկայ, ամեն ոք ինքը պիտի մշակէ այն: Կարգաւորութիւնից զուրկ ընթերցանութեան համար, ինչ վիճակի մէջ որ այժմս է, իրաւացի կերպով կարելի է Բուտլէրի խօսքերն յառաջ բերել թէ «ոչ մի զբաղմունք այնքան ժամանակի ապարդիւն կորուստ չի պատճառում, որքան մեր ընթերցանութիւնը»: Սակայն քաղաքակրթական զարգացումն անհրաժեշտ է. նրա էական պայմանը ընթերցանութիւնն է, բայց ոչ խառն ի խուռն, այլ կարգաբանեալ ընթերցանութիւնը: Այս բանում ով որ գէթ մի փոքր օգնութիւն ցոյց տայ ուսանող սերնդին, նա բարի գործ կատարած և անկասկած խիսկական օգուտ տուած կլինի: Ժամանակի սղութեան պատճառաբանութիւնը ինքն ըստ ինքեան կը ջրուի, հէնց որ մենք մեր զբաղմունքների որոշ բաշխմանն ընտելանանք: «Իւրաքանչիւր աննպատակ կարգացած գիրքը, ասում է Յրիդրիկոս Հարրիսօնը, անդարձ կորցրած ժամանակ է, որ կարող էինք գործ դնել մի ուրիշ՝ մեզ համար աւելի շահաւէտ գրքի ընթերցանութեան վրայ: Ամեն աննպատակ ծանօթութիւն, որ ապարդիւն կերպով զուրկ է լցնում, յետ է մղում այն նպատակայարմար ծանօթութիւնը, որ կարող էր օգուտ բերել: Աշխարհումս այնքան հմտութիւններ, այնքան տեղեկութիւններ, կուտակուած մտքեր և գիտողութիւններ կան, որ նոյն իսկ իրենց ամբողջ կեանքը պիտութեան նուիրած մարդիկ լոկ այն փշրանքներով են օգտւում, որ ճշմարտութեան սեղանիցն է թափւում: Նրանց յաջողում է միայն անսահման, պտղաբեր հողի մասնիկը մշակել. մինչդեռ աշխատանքի մարդիկը միայն կարճատև վայրկեաններ կարող են նուիրել գիտութեան և այս իսկ պատճառով. նրանք չեն էլ կարող մինչև անգամ երևակայել այս անհուն տարածութիւնը և թէ գիտութեան որպիսի աննշան մասը միայն կարող են ձեռք բերել: Յայտնի է թէ ոչ ամեն բան հաւասարապէս ուշադրութեան է արժանի, թէ գրքերը զանազանում են միմեանցից այնպէս, ինչպէս ծովափինայ արմատն աւաղից. շատերը նոցանից գոհիկ, ունայն և նոյն իսկ վնասակար են: Պէտք է սովորութիւն ունենալ խուսափել ժամանակի անվաստակ կորստից և ուղեղն ապարդիւն ծանրաբեռնելուց: Անհրաժեշտ է խիստ գնահա-

1003
10803



տութեան ենթարկել ժամանակակից գրականութեան անզուսպ հոսանքը, որ սպառնում է նսեմացնել անցած դարերի թանկագին ժառանգութիւնը»:

Ով որ ընթերցանութեան մէջ լուրջ օգուտ է տեսնում, նա կաշխատի արժանաւոր գիրք ընտրել և ժամանակ չի կորցնի միջակների վրայ: «Ես այնքան էլ ինքնապաստան չեմ շարունակում է Հարրիսօնը, որ անպայման կերպով ուրանամ ժամանակակից գրականութեան արժանաւորութիւնը. ես չեմ պնդի թէ ժամանակակից արձակ խօսքը հետաքրքրութիւնից և խրատական լինելուց զուրկ է, կամ թէ Միլտօնի տեղը բռնող չափածոյ դրուածքները միանգամայն վատ են. ընդհակառակն, ես պատրաստ եմ ընդունելու, որ նորա երաժշտական գեղեցկութիւն ունին և նայել նոցա վրայ իբրև որոշ պատմական ժամանակի ճշգրիտ պատկերների վրայ. իմ կարծիքով ժամանակակից գրական երկերի մեծ մասը նոյն իսկ չափազանց գայթակղեցուցիչ են և անկասկած գրական ծանօթութիւններ են տալիս: Կասկածել թէ իւրաքանչիւր քիչ թէ շատ օրինաւոր գիրք, որ հաճոյքով է կարդացւում և գրական ծանօթութիւններ է պարունակում, ոչ այլ ինչ պէտք է համարուի, բայց եթէ անարժէք գանձ, նշանակում է լինել մի խաւարամիտ, որ խորտակում է բարերար հաւատը դէպի գրականութիւնն ընդհանրապէս. մի մարդ որ չափազանց յանգցնութեամբ է պաշարուած: Բայց խնդիրը որ իւր բոլոր ճշդող գորութեամբ ծանրանում է ինձ վրայ շուտափոյթ լուծումն պահանջելով՝ այն է, թէ որ գրքերի հետ աւելի կարևոր է մեզ ծանօթանալ, այն կարճատև ժամերում, որ ընթերցանութեան համար ենք որոշած: Գրքի նշանակութիւնն այն աստիճանի սուրբ է մեր աչքում, որ նրանից լոկ վայրկենական հաճոյք պահանջելը նշանակում է մոռանալ նրա բարձր նշանակութիւնը այսինքն՝ խրատել, բարձրացնել և ոգևորել: Պատահական ծանօթութիւնների հաւաքածուն արգելում է մեզ ձեռք բերել ճշմարիտ օգտակարը և անհրաժեշտը»:

Ապատ կամքը հեղինակութիւններով հանդերձ միակ դեկավարը պիտի լինի գրքերի ընտրութեան գործում: Նախապէս մեր նպատակը որոշելով պիտի ընտրենք մի գիրք, ոչ թէ նրա համար որ ձեռնարկէ հանդիսանում, այլ որպէս զի մենք ինքներս համոզուենք, թէ որքան նպատակայարմար է մեր ընտրութիւնը: Յստակ, առողջ միտքը, մեր խիղճը կամ գիտակցութիւնը՝ անհա մեզ առաջնորդող ձեռնարկը, ինչպէս ընթերցանութեան, նոյնպէս և կեանքի այլ պարապմունքների մէջ:

Անհրաժեշտ է այստեղ յիշել թէ որքան կորստաբեր է արդիւնաւոր ընթերցանութեան համար յափշտակութեան և եռանդի բացակայութիւնը, որ փոխարինում է առհասարակ արհեստականութեան և սովորականութեան հետ: Որպէս զի համոզեմ թէ այս կարծիքը հիմնաւոր է, արժէ միայն յառաջ բերել Հարրիսօնի խօսքերը, որն՝ իրաւամբ, ամենախելօք և տաղանդաւոր մանկավարժներից մէկն է համարւում: Իմ ընտրած հատուածի մէջ մենք ուրիշ խնդիրների էլ կհանդիպինք, որոնք շատ մօտ առընչութիւն ունին մեզ զբաղեցնող խնդրի հետ, որը շատ անգամ զանազան ճիւղեր է արձակում այս կամ այն կողմ: «Ես միտք չունիմ, ասում է նա, կանգ առնել վատ գրքերի վնասակար ազդեցութեան վրայ. այդ բոլորովին աւելորդ կլինէր: Իմ խօսքը միայն այն գրքերի մասին է, որոնք միահամուռ կերպով ընդունւում են իբրև անվնաս, հետաքրքիր և խրատական: Բայց այս տեսակ գրքերի հազարն բազմութիւնից արդեօք շատերն են արժանի ուշադրութեան և՛ որ գլխաւորն է, այն ժամանակին, որ այնչափ թանկագին է ուսանողի համար: Գրքերն այնքան շատ են որ մենք չենք կարող բոլորը կարդալ, իսկ նրանցից մի ստուար մասի վրայ նոյնիսկ չարժէ, որ ժամանակ կորցնենք: Այն գրքերը, որ յայտնի են իրենց լուրջ արժանաւորութիւններով, ամենաաննշան տոկոսն են կազմում: Ենթադրելով որ բոլոր գրքերը միևնոյն արժանաւորութիւնն ունին և թէ հարցը միայն նրանումն է թէ ինչ կարգով պէտք է կարդալ նրանց, մեծ սխալ արած կը լինինք: Մենք աչքից փախցնում ենք այն հանգամանքը, որ շատ հեղինակներ գրքեր են գրում զանազան նպատակներով և զրոգումներով և թէ նրանց երկերից շատերը նոյն իսկ գիրք կոչուելու արժանի չեն: Գրքեր կազմելու նպատակները նոյնքան բազմազան կարող են լինել, որքան նոյնինքն մարդկանց գործունէութիւնը. սրա համեմատ գնահատութիւնն էլ տարբեր պիտի լինի: Մեր ընտիր մատենագրանների պարմանքն են կազմում այն աշխարհահռչակ գրքերը, որոնց մէջ, այսպէս ասենք, մեծ մարդկանց մտքից արիւն է հոսում: Սակայն շուտով ստոհում ենք մենք այդ տեսակ գրքերից և սկսում ենք միտքէ արտակենդրոն բան, մի անյայտ հեղինակի գործ որոնել: Որքան յաճախ արդի գրականութեան ամէն մի երեսում աչքի զարկող անարգութիւնն ու անշորհքութիւնը ի բաց են մղում մեր մտքից օրինակելի հեղինակների յաւերժական ստեղծագործութիւնները և ապականում մեր ճշակը, որ դէպի վսեմն ու գեղեցիկն է ուզուած: Հին հոմերո-

սը՝ մաքուր բանաստեղծութեան, բարձր գեղասիրական հաճոյքի այդ աղբիւրը և աղբիւրն այն ամենի ինչ որ ճշմարիտ և բարձր է կեանքում, տեղափոխում է մեզ բարոյական զօրութեան հերոսների, մաքրութեան, շնորհալիութեան աստուածային աշխարհը: Հոմերոսն այն սակաւաթիւ բանաստեղծներից է, որոնց յիշատակը սրբութեամբ է պահպանուում բոլոր ազգերի մէջ: Բայց շատերի արգեօք սեղանի զարդն է նա. շատերն արգեօք ծայրալիւր կարդացել են Ողիսականն ու Իլիականը: Հոմերոսը միշտ երիտասարդ և բազմազան է, լինի նա պատկանելի Գրեկի բազմաճյուղի տողերի մէջ, որ միշտ երիտասարդ, միշտ աշխոյժ է, ինչպէս ամին խփուող ծովի ալիքը, որ անվերջ երաժշտութեան անմոռնչ հրճուանքով լցնում է մարդու հոգին. լինի նա Չապմանի հրաշալի տողերի կամ Պօպի ներդաշնակ տների մէջ. Կուսպէրի, լօրդ Իերբի, Փիլիպպոս Վօրսէլի թարգմանութեան կամ Ողիսականի նոր արձակ թարգմանութեան մէջ,—այդ միևնոյն է: Բայց և այնպէս շատ ենք մենք տեսնում արգեօք այնպիսի մարդիկ, որ յափշտակուէին Գրեկի հին աշխարհի Աստուածաշնչով՝ Ողիսականով: Ժամանակակից գրականութեան հոսանքը հեռու է քշում նրանց անմոռաց բանաստեղծութիւնից. վատ քերթողների և վիպասանների ընթերցանութեան մէջ թաղուածները յիշեցնում են այն կենդանիներին, որոնք արածում են մարգագետնի վրայ և ուտում են խոտը առանց խտրելու: Զօլայի վիպասանութիւնները կարդացող սերնդի համար նոյնքան սակաւ հասկանալի է Հոմերոսը, որքան մի սեպածե արձանագրութիւն: Քաղաքակրթութեամբ մարդու սանութիւնը գէպի Հոմերոսի բանաստեղծութիւնը կարելի է համեմատել թարշածած աշխարհասէր կնոջ սանասարտութեան հետ, որով նա վերաբերում է գէպի երփներանգ ծաղիկներով զարդարուն մարգագետինը կամ գէպի նարգիզների դաշտերը, որ ծածանում են զեփիւռի թեթև շնչով: Ժամանակակից սերնդի ճաշակի բթութիւնը գէպի բանաստեղծութեան վսեմը, գեղեցիկը մնում է իբրև մի հոգեբանական հանելուկ:

Ամեն ոք յիշում է թէ ինչպիսի բաւականութիւն էր տալիս իրեն Հոմերոսի ընթերցումը զպոքական տարիներում, ինչպէս վառուում էին իր այտերը ուրխութիւնից, ինչպէս ուժգին էր խփում զարկերակը. նրա տողերը շատ պարզ, հասկանալի և բազմազան են և բանի կարգում են նրանք այնքան աւելի են դուր գալիս: Սակայն մենք բոլորս էլ տգէտ չերկայուե՞րկիւղից հակամէտ ենք ժամանակակից գրողների չափածոյ

անշնորհքութիւնով հետաքրքրուելու, քան թէ Հոմերոսի բանաստեղծութիւնով: Յիրաւի ինչ պիտի պատասխանենք, եթէ յանկարծ փողոցում պատահող մի ծանօթ հարցնի մեզ. «Կարդացել էք այս ինչ նորաձև յանգագրողի այն ինչ գործը, կամ թէ չէ մի ուրիշը ճաշի վրայ յանկարծ Տրովադայի տեղադրութեան գիտնական դատողութեան մասին խօսք բանայ: Մարդկութեան մտաւոր զարգացման պատմութեան մէջ մի ամբողջ գլուխ կարելի էր լցնել օրինակներով, որոնք ցոյց տային թէ ինչպէս օրուայ գրական նորութիւնների հետամտութիւնը խեղդում է մեր մէջ ճաշակը գէպի հին երգասածութիւնը, որ մարդու երևակայութեան արշալոյսն է ողջունում: Ժամանակակից անտաղանդ գրուածքների մէջ խրուած մի կնոջ կամ մարդու ստիպել, որ Հոմերոս կարդայ, նոյնքան անխորհուրդ է, որքան ստիպել մսավաճառին, որ Բեթհովենի «Աղէհայիդայից» մի երգ սուլէ: Մարդկային ունայնութեան և դատարկաբանութեան ալիքը, որ շրջապատում է մեզ, խեղդում է մեզնում ճաշակը և ձգտումն գէպի գեղեցիկը, թողնելով այնտեղ միայն նոր գրոյցների և վիպասանութեանց ծարաւ: Անա այնտեղ էլ ինչպէս սերմնացանի առակի մէջ, փշերը խեղդում են աշխարհի ամենամեծ ստեղծագործութիւնների բարի ընձիւղները: Թէև իմ խօսքս միայն Հոմերոսի մասին է, բայց նրանից զատ կայ մեծ բանաստեղծների մի բազմութիւն, որոնց ստեղծողական գործունէութիւնը ոչ պակաս հետաքրքրական է:

Վեր առնենք հէնց մեզ ժամանակակից բանաստեղծ Վալտէր Սկօտին, արդեօք շատերն են կարգում նրան պատշաճաւոր յափշտակութեամբ: Շատ անգամ ենք լսում թէ Վալտէր Սկօտի արձակ շարագրութիւնը չափազանց սովորական է և համալսարանական երիտասարդութիւնը խորշում է նրա պարզ ոճից, նրա սահուն նկարագրութիւնից: Նրանք Սվինբօրնին, Մալօկային են գերադասում ինչպէս շատերը սաքսոնական ճեւապակուց շինած հովիւներին գերադասում են էրիկտօնի արձաններից—կարիատիտներից, կամ Ֆէլտինգին թոյլ, իսկ Մօցարտին հնացած են համարում: Այս մարդիկը ընդունակ են ցփնել ձեզ վրայ բարձրագոյ ճոռոմախօսութիւններ, կարծես թէ ճոռոմախօսութիւնը ինքրստիքեան առանց մտքի, զգացմունքի, գաղափարի և այն ամենի ինչ որ վսեմ է մարդու մէջ՝ մի նշանակութիւն ունի: Վալտէր Սկօտը այն բանաստեղծներից է (իսկ բանաստեղծ ենք ընդունում մենք անխտիր մտքի մեծ ստեղծագործողին, լինի սա արտայայտուած արձակ թէ չափաւոր ձևով) որը երբէք չի կշտացնի

լիովին, ինչպէս որ Բեթհովենի երգը լսելուց կամ արեգակի-
 ծագելուց կամ մայր մտնելուց միևնոյն չափով բաւականու-
 թիւն ենք ստանում, քանի անգամ էլ որ զգացած լինինք: Ես
 այնպէս եմ կարծում, որ ամեն տարի կարող էի կարգաւ
 «Հնագէտը», «Լամբրմուրի հարսը», «Իվանօհէն», «Կվէնթին
 Դուրվարթը»: Միայն Վալտէր Սկօտի երկերը կարող են մի
 լաւագոյն գրադարան կազմել... Վալտէր Սկօտի ահագին կըր-
 թական նշանակութիւնը խոստովանելով հանդերձ, ես չեմ
 պահանջում, որ բացառիկ նախապատուութիւն տրուի նրան
 կամ առհասարակ որևէ բանաստեղծի կամ բանաստեղծների
 դասի. բարերարողարար նոքա նոյնքան բազմազան են, որքան
 մարդկային ընութիւնը: Եթէ ես հիանում եմ Վալտէր Սկօ-
 տով, միևնոյն ժամանակ նոյնքան սիրում եմ և Ֆէլլիքսին,
 Ռիչարդսոնին, Ստէրնին, Հօլմիտին և Դէֆօյին: Պէտք է ա-
 լելագնեմ նրանց վրայ Կուպերին, Մարիէտային, Միսս Էջվօր-
 տին, Միսս Աուստէնին, սահմանափակուելով Անգլիոյ դասա-
 կաններով առանց ժամանակակից վիպասանութեան շրջանումը
 դեգերելու: Մենք պիտի զգուշանանք որ մեր երկրպագութիւ-
 նը անզուգական Շէկսպիրին չը նսեմացնէ մեր աչքում ուրիշ
 աշխարհների մեծ բանաստեղծներին, որոնք մարդկութեան
 զարգացմանը նպաստել են և իդէալների ու նախատիպերի
 շարքեր են պարգել նրա առաջ բարձր-գրական ձևով: Պէտք չէ
 մոռանալ և այն բարձր գեղարուեստական պատկերները, որ
 հեռու անցեալն է մեզ տուել առասպելի, ժողովրդական պա-
 րերի, երգերի, զրոյցների, առածների և բարոյախօսութիւննե-
 րի ձևով, որոնք մեզ են հասել իբրև օրինակ նախնական հա-
 սարակութեան զարթած մտքերի: Կրկնում եմ, ես այս կամ
 այն դպրոցի կողմնակիցը չեմ, եզրակացնում է Հարրիսօնը, ես
 մեծ մարդկանց դպրոցին կողմնակից եմ և արհամարում եմ
 միջակութիւնը:

Ես ջանացի մեծ մանկավարժի խօսքերով հաստատել իմ
 սեպհական համոզմունքը թէ ընթերցանութեան ժամանակ
 պէտք է ընտրել միայն օգտակարը և մեր նպատակներին հա-
 մապատասխան գրքերը. եթէ այս կանոնին հետևելով ցանկալի
 ընտրութիւնը չի յաջողում ընթերցողին, յանցանքը էլի իրեն՝
 ընթերցողինն է:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԼԱԻ ԺԱՄԱՆԱԿԸ.

Ընթերցանութեան ժամանակի ընտրութիւնը՝ ինչպէս և
 գրքերի ընտրութիւնը, ընթերցողի ազատ կամքին է թողնուած:

Կարգաւ կարելի է երբ կամենաս. անքուն գիշերուայ ժամերին,
 վաղ առաւօտու թանգագին ժամերին, նախաճաշից առաջ, նա-
 խաճաշից յետոյ, ձմեռուայ երկար երեկոներին, միայն թէ
 մարդ կարգաւու սէր ունենայ: Իսկ եթէ կարգաւու տրամա-
 դրութիւն չկայ, եթէ մարդու ուղեղը յոգնած է և ուշադրու-
 թիւնը դժուարութեամբ է կենդրոնանում, այն ժամանակ աւելի
 լաւ է յետաձգել ընթերցանութիւնը և զբաղուել մի ուրիշ բա-
 նով: Մի ուրիշ անգամ, յարմար հանգամանքներում, հինգ ըո-
 պէի մէջ աւելի շատ բան կանենք, քան թէ մի քանի ժամ շա-
 րունակ անօգուտ կերպով բռնադատենք մեր ուշադրութիւնը:

Ամեն ոք, ինչքան էլ զբաղուած լինի, կարող է կարգա-
 լու ժամանակ գտնել: Եղել են օրինակներ, որ կանայք՝ թէև
 մինչև բուկը թաղուած տնային գործերի մէջ, բայց և այնպէս
 կարգալու ժամանակ գտել են, թէև ընդհատումներով բայց
 շահուէտութեամբ մտաւոր դարգացման համար մի քանի տող
 միայն կարգալով այն ժամանակ, երբ կերակուր պատրաստե-
 լիս են եղել, կամ երեխային նայելիս: Եղել են օրինակներ,
 որ դարձնոցի փուքս-փչողներից, խանութպանի սեղանի ետևից
 կամ տպագրատան մամուլի կշտից ուսումնականներ են դուրս
 եկել: Չկայ մի պաշտօն, չկայ մի այնպիսի զբաղմունք, որ ու-
 սանելու պահանջին գոհացում տալու արգելք լինի, եթէ միայն
 այդ կարիքը կայ մարդու մէջ:

«Մինչև որ դուք կը մտածէք թէ ձեր որդուն ինչ գիրք
 տաք կարգալու, նրա ընկերն այդքան ժամանակում երկու
 գիրք կը կարգայ, ասում է Ջօնսօնը: Օրական հինգ ժամ կար-
 դացէք և դուք շուտով կը հարստանաք նոր ծանօթութիւննե-
 րով»: Բայց հինգ ժամը քիչ ժամանակ չէ. իմ կարծիքով լաւ
 գրքի նուիրած հինգ ըոպէն անգամ տարեկան գումարի մէջ
 իւր բաժին օգուտը կունենայ: Այդ ըոպէները մարդու կեանքի
 մէջ աւելի մեծ նշանակութիւն ունին, քան ամբողջ օրուայ մե-
 քենական աշխատութիւնը: «Մանկական ամենաքաղցր յիշողու-
 թիւններիցս մէկը, ասում է Մէրի-Ուարը, այն ժամանակն է
 երբ ես բարձրաճայն կարգում էի ժօրս մօտ: Տնտեսական շատ
 հոգսեր ունէր նա. որտեղ էլ լինէր՝ խոհանոցում, կաթնատանը
 թէ հիւրասենեակում, ամեն ժամանակ նա պատրաստ էր ինձ
 լսել և բացատրում էր ինձ համար անհասկանալի տեղերը:
 Մտաւոր աշխատանքը նրանից անբաժան էր տնային ամեն
 տեսակ զբաղմունքնորի ժամանակ, բայց երբէք բարեքման
 չը հասցրեց նրան տնտեսութեան մէջ. այս բանի շնորհիւ նա
 պահպանեց իւր մտքի թարմութիւնը մինչև ութսուն տարեկան

հասակը և համակրութիւնը դէպի բոլոր շրջապատող իրերը»:
 Ընթերցանութեան ժամանակ անհրաժեշտ է մտաւոր ոյժերի ծախսի նկատմամբ խիստ տնտես լինել: «Անհերքելի ճշմարտութիւն է, ասում է Փիլիպպոս Համերտօնը, թէ այն մարդիկն անգամ, որ իրենց ժամանակի տէրն են, և՛ նրանք պիտի ի հաշիւ անեն այս տնտեսութիւնը. այս բանում շատերը շատ ուշ են համոզուում»: Նոյն իսկ այն մարդիկ, որ իրենց նուիրել են բացառապէս գրականութեան, նոքա էլ յաճախ վատնում են իրանց ժամանակը առանց պարտ ու պատշաճ շահեկանութեան: Կրթուած մարդկանցից քչերն են կարողանում տնտեսութեամբ գործադրել իրենց ժամանակը: Մի որևէ առարկայ ուսումնասիրելու համար աւելի ժամանակ կորցնելը շատ վտանգալից է անհամար և կը սովորեցնի անուշադիր լինել՝ ուր մտքի առանձին լարումն է պահանջուում: Ժամանակի խնայողութեան ամենալաւ ճանապարհը հաստատակամութիւնն է ուսումնասիրութեան գործում և երանել խոչնդոտներին յաղթելու համար: Այս կամ այն առարկան ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ է նպատակ դնել որոշ չափով կատարելութեան հասնելու. հակառակ դէպքում մեր աշխատանքը նոյնքան անօգուտ կը լինի, որքան մեքենագործինը որ չը վերջացրած մեքենան դէն է ձգուում: Ամեն մէկը մեզնից շատ ձիրք ունի, որոնք ապարդիւն են մնում հէնց այն պատճառով, որ լիովին մշակուած չեն, մենք դիտենք մի քանի օտար լեզուներ, բայց չենք կարողանում ո՛չ խօսել և ո՛չ գրել այդ լեզուներով. հատուկ ուրիշներով ծանօթ ենք գիտութեան հետ. յաճախ որևէ արուեստ իմանում ենք լոկ այնքան, որ չենք կարողանում բաւականութիւն պատճառել ո՛չ մեզ, ո՛չ ուրիշներին: Այդպիսի պայմաններում նման զբաղմունքի վրայ գործ դրած ժամանակը կորուստ կարելի է համարել. այդ տեսակ պարապմունքի վրայ գործ դրած եռանդը կարող էր մտքի վարժութեան ծառայել, իսկ գիտութեան և արուեստի վերաբերութեամբ այդպիսի զբաղմունքը զուտ ժամավաճառութիւն է: Բայց մտքի մարզանքի կարելի է հասնել միայն համառօտ և լաւ խորհած ծրագրով»:

Սակայն վերևի ասածից չի հետևում թէ մենք չը պէտք է սովորենք այնպիսի գիտութիւններ, որոնց մէջ միտք չունենք կատարեալ լինելու. շատ ծանօթութիւններ հէնց հարկից ստիպուած պէտք է լինին հատուկ ուրիշ և օգտակար: Յիշեալ հեղինակը զգուշացնում է մեզ միայն վայրիվերոյ, անօգուտ

զբաղմունքներից: «Շատ ընթերցողներ, ասում է Բրէտուէտ, ճանճրոյթի ժամերը «օգտակար զուարճութեան» ժամեր են դարձնում, բազմաթիւ գրքեր թերթոտելով. բայց երկար նայելու համբերութիւնից զուրկ լինելով նրանց ցրուած ջանքերը, թէ արձակ գրուածքի և թէ բանաստեղծութեան վերաբերութեամբ, գոհացուցիչ արդիւնք չեն տալիս: Մարդկանց մի ուրիշ աւելի մեծ դասակարգ կայ, որ ծուլութեան և անհոգութեան է մասնուծ իրեն ուսանելու մէջ, ինչ որ հասարակութեան և իրեն առջև պատասխանատու կրթուած մարդուն վայել չէ: Այդ դասակարգի մարդիկ որևէ գիրք ձեռք աննելիս՝ մտածելու անափոքր ցանկութիւն անգամ չեն ունենում. նոյն իսկ հեղինակի պատրաստի մտքերը իւրացնելու ջանքը նրանց համար ծանր բեռն է թուում. միայն ժամանակ անցնելուց յետոյ ենք համոզուում թէ որքան թանգազին և անդառնալի ժամանակ ենք գործ դրել լրագրերի, ամսագրերի աննպատակ ընթերցանութեան վրայ լոկ ճանճրոյթ վանելու պատճառով: Այս ամենի դէմ մի արմատական միջոց կայ՝ ճիշտ որոշուած նպատակ և նրան հասնելու անյողողո՞ղ ձգտումն: Այդպիսի առաջնորդող նպատակ մաղնիսի նման կարող է գտնուել նոյն իսկ հողի մէջ և քաշել դէպի իրեն այն ամենը ինչ որ անհրաժեշտ է, ինչ որ օդտակար է: Առանց դրան ընթերցանութիւնն անօգուտ է. այդպէս ժողոված պաշարը անմիտ կերպով իրար վրայ թափթրիած, աւելի շուտ ի գուր տեղ գրաւող մի անկարգ շեղձ է նմանում, քան թէ ծառայում է օգտաւէտութեան և զարգաբանքի: Այնտեղ, ուր լուրջ նպատակ չկայ վտանգս ասիքան մեծ է, որ կեանքը դատարկ, անօգուտ ժամավաճառութեան մատնելու է սպանում»:

Գերմանացիները, որոնք գիտնական ասպարիզում մեծամեծ արդիւնքների են հասել, կարող են մեզ համար օրինակ լինել ընթերցանութեան ժամերի խոհական բաշխման նկատմամբ. նրանք ասում են, որ մտաւոր աշխատանքը չը պէտք է ընդհատուի, այլ պէտք է միայն մերթ ընդ մերթ բազմազանել այն նիւթի փոփոխութեամբ և հանգստութեամբ: Իւր ամբողջ կեանքը մտաւոր զարգացման նուիրած Վիկտոր Փակմօնի պէս մի մարդու հիանալի նամակներում, ասում է Համերտօնը, մի տեղ կայ, ուր նա յիշում է գերմանացիների մտաւոր աշխատանքի մասին «Զարմանալով գերմանացիների ձեռք բերած ծանօթութիւնների ծաւալի ընդհարձակութեան և բազմազանութեան վրայ, ես հարցրի իմ ծանօթներից մէկին, որ ծագմամբ սաքսոնացի էր և եւրոպացի առաջնակարգ երկրա-

բաններից մէկը, թէ ինչ եղանակով նրա հայրենակիցները կարողանում են այնքան շատ բան իմանալ: Ահա նրա իսկական պատասխանը. «Գերմանացին (բացի ինձնից, որ մարդկանց մէջ ամենապարագորդն եմ) ձմեռ թէ ամառ վեր է կենում կանուխ՝ ժամի հնգին. պարապում է չորս ժամ մինչև նախաճաշիկը: Այդ ժամանակ նա ծխում է, որ երբէք չի էլ ընդհատում նրա պարապմունքը: Նախաճաշի համար նա գործ է դնում կէտ ժամ: Նախաճաշիկից յետոյ կէս ժամ նա խօսակցում է կնոջ հետ կամ խաղում է երեխաների հետ: Ապա պարապում է վեց ժամ: Ճաշում է առանց շտապելու: Ճաշից յետոյ ծխում և խաղում է մի ժամի չափ երեխաների հետ: Մինչև քնելը պարապում է էլի չորս ժամ: Եւ այդպէս ամեն օր, շատ քիչ անգամ դուրս գալով տնից: Այդպիսի կեանքի շնորհիւ գերմանացի ամենաառաջին բնա-փիլիսոփայ էրստէզը դարձաւ միևնոյն ժամանակ և ամենամեծ բնագէտը, բնագանցագէտ Կանտը՝ եւրոպացի ամենալաւ աստղաբաշխներից մէկը. Գեօտէն՝ գերմանացի ամենամեծ և ամենաբեղմնաւոր գրիչը, միևնոյն ժամանակ և բաջ բուսաբան, հանքաբան և բնա-փիլիսոփայ էր»: Գերմանացիներին յատուկ այդ նստակեցութեամբ մինչև իսկ սահմանափակ ուղեղները փայլուն արդիւնքների են հասնում, այն ինչ կողմնակի մարդուն թւում է թէ գերմանական գիտնականները գարեջրի և ծխախոտի մէջ են թաղուած միայն: Մտաւոր աշխատանքի մէջ տոկուն լինելու միջոցառման արդիւնքների մասին՝ իհարկէ փոփոխուող բազմազանութեամբ հանդերձ, Համերտօնն այսպէս է ասում. «Այն ժամանակում, երբ շատ շնորհալի մարդիկ կարողանում են յառաջ գնալ մի քանի ճիւղերում իրենց ընդունակութեան շնորհիւ, ուրիշները՝ որ այդպիսի ձիրքերով չեն օժտուած, յառաջանում են մի որևէ ճիւղի մէջ իրենց նստակեաց աշխատանքի շնորհիւ իրենց տրամադրութեան տակ մի քանի ազատ ժամ միայն ունենալով: Ամենագլխաւորը ժամանակի կարգաւորելն է այնպէս, որ կարելի լինի օրական երկու ժամ ընթերցանութեան նուիրել առանց փնասելու առողջութեանը և սեփական ընթացիկ գործերին: Գուցէ կասեն թէ օրական երկու ժամը շատ քիչ է. բայց ես պնդում եմ այդքան ժամանակի վրայ, աչքի առաջ ունենալով չը խանգարել մեր օրական աշխատութիւններն ու զուարճութիւնները: Թող գործադրեն միայն երկու ժամ, բայց կանոնաւոր կերպով, ամեն օր և զբաղմունքները յաջողութեամբ կը յառաջանան»:

Ընդհատումներից խուսափելու համար մենք մինչև ան-

գամ մեր ընտանիքի անդամներից կարող ենք առանձնանալ. բայց դէպքեր են պատահում երբ ամուսնու կամ բարեկամի հետ ընթերցանութիւնն աւելի արդիւնաւոր է լինում, քան առանձին: Շատ պարզ է, որ ժամանակն ընթերցանութեան վրայ ծախսելն աւելի խելացի է, քան ընկերական շրջանին նուիրուելը: Աշխարհիկ կեանքը և մտաւոր զբաղման կեանքը իրար հետ չեն հաշտուում և պէտք է ընտրել կամ մէկը, կամ միւսը:

«Աշխարհիկ կեանքն ու մտաւորականը անհաշտ են, ասում է Մ—ր Համերտօնը. եթէ ընտրում ենք մէկը, պէտք է զոհենք միւսը: Եթէ դուք մտաւոր կեանքը կընտրէք, դուք կը ստանաք այնպիսի հաճոյքներ, որոնք կունենան հանդարտ խորին բնաւորութիւն, բայց կը զրկուիք աշխարհային բաւականութիւններից, որոնք այնուամենայնիւ սերտ կապ ունին մարդկային բնութեան հետ: Անգլիայում կարողանում են զուարճալին օգտակարի հետ միացնել՝ վարժութիւններ թէ մարմնի և թէ մտքի համար: Խնճոյքների և ամեն տեսակ բաւականութիւնների մէջ ժամանակ անցնող հարուստ դասակարգերը Ոլիմպոսի աստուածների նման վերելիցն են նայում աշխատող մարդիկների վրայ. նրանք օգտուում են այդ աշխատանքի արդիւնքներից, ոչ մի մասնակցութիւն չունենալով նրանում: Աշխարհային զուարճութիւնների փոխարէն մտաւորական կեանքը ձեզ տալիս է միայն մի բան. բազմամեայ նստակեաց կեանքի աշխատանքից յետոյ՝ թէկուզ ամենահամեստ, բայց մի տեղ կը բռնէք միւս գիտնական գործիչների շարքում: Այդ արդիւնքին հասնելու ճանապարհին դուք շատ բան՝ իբրև խոտան, դէն կը ձգէք: Գոցանից դուք կընտրէք մէկը կամ երկուսը, իբրև ձեզ աւելի յարմար: Բազմամեայ ջանքերից յետոյ որևէ ասպարիզում, դուք հանգիստ անձնապատուութիւն կզգաք, և որ ամենից քիչ է պատահում, դուք կը սովորէք յարգանքով վերաբերուել դէպի ձեր շրջապատը: Խուսափելով ամենայն դատարկ և շլացնող բաներից, դուք կը սկսէք ապրել ճշմարիտ գիտութեամբ՝ այն մարդու նման, որ երես է դարձնում թատրոնական-բեմական սարքերից, բնութեան յաւիտենական գեղեցկութիւններով բաւականութիւն ստանալու համար»:

Այս բոլոր ասածներից ընթերցողը տեսնում է, թէ որքան սերտ կապ ունի ընթերցանութեան ժամանակի ընտրութեան խնդիրը ժամանակն ամենաարդիւնաւոր կերպով գործադրելու խնդրի հետ: Գրքերին նուիրելով մեր պարապոյ ժամերը կամ

րուպէները, մենք չը պէտք է մոռանանք, թէ որքան ընդարձակ է ընթերցանութեան շրջանը և թէ որքան քիչ ժամանակ ունենք դրա համար մեր տրամադրութեան տակ. միայն այդ ժամանակ կարող ենք յուսալ, որ մենք մեր նպատակներին հասնելու շաւղից չենք շեղուի:

ՈՐՔԱՆ ԿԱՐԴԱՆՔ...

Որքան դժուար է կերակրի քանակը որոշել կամ ֆիզիքական աշխատանքի սահմանը գծել, նոյնքան էլ դժուար է և ընթերցանութեան քանակը սահմանել: Ճաշակներն ու պայմանները խիստ բազմազան են իւրաքանչիւր դէպքում: Շատերը կարողում են շատ արագ, միևնոյն ժամանակ և օգտաւէտ կերպով: Ինչ ասել կուզի, որ վէպերն և նման գրուածքները կարգացուած են անհամեմատ աւելի արագ քան օր. Յունաստանի պատմութիւնը: Ճարտար, աշխոյժ ձեռքով գրուած նորածն օտանաւորի մի հատած աւելի քիչ ժամանակ կը պահանջի կարգալու համար, քան թէ նոյն մեծութեամբ մի հատած Միլտօնից կամ Հոմերոսից: Պարզ, գողտրիկ ոճով գրող մի հեղինակ, ինչպէս Լօնգֆէլլօն, աւելի հեշտութեամբ է կարգացուած, քան մթին, արուեստական մի գրող՝ ինչպէս օր. Ռոբէրտ Բրաունինգը:

Առհասարակ ընթերցանութիւնը միայն այն ժամանակ կարելի է գոհացուցիչ համարել, երբ ընթերցողը կարգացած էջը՝ լինի դա վէպ, պատմութիւն, հուժուրական վիպասանութիւն կամ վարդապետական ոտանաւոր, բոլորովին իւրացրել և զրոշմել է յիշողութեան մէջ: «Ընթերցանութիւնը միշտ ինձ մտածելու է տրամադրում, ասում է Մ. Բ. Բիչերը, ես չեմ կարողանում գատել գաղափարներ կազմակերպելու գործողութիւնը սպաւորութիւններից, որի հետեանքն այն է լինում, որ ընթերցանութեան ժամանակ իմ մտքերս ցրուած են այս ու այն կողմ, որից և ընթերցանութիւնը դանդաղում է»: Գուգարտ Ստիւարտը մտածելու անհրաժեշտութիւնը ընթերցանութեան ժամանակ բացատրում է այսպէս. «Յիրաւի ոչ մի բան այնքան չի նսեմացնում ոչ միայն ստեղծագործական այլ և ընդհանրապէս մտաւոր ոյժերը, ինչպէս շատ՝ բայց առանց խորհրդածութեան կարգալու արմատացած սովորութիւնը: Մտաւոր ոյժերի գործունէութիւնը հետզհետէ բթանում է վարժութիւնների սակաւութիւնից և յաճախ մեր բոլոր համոզմունք-

ները կորչում են կարգացած մտքերի անկարգ թոհուրոհի մէջ»:

Չոն Լոկը շատ ուղիղ է նկատել. «Ով որ շատ է կարգացել՝ երևակայում է թէ շատ էլ բան գիտէ. բայց այդ միշտ ուղիղ չի լինում: Ընթերցանութիւնը մեզ միայն մտքի պաշար է տալիս և միայն մտքի աշխատանքն է օգնում այդ նիւթը իւրացնելու: Այս դէպքում մենք նման ենք որոճող կենդանիների դասին: Բաւական չէ միայն գլուխը լցնել գրքերից քաղած ծանօթութիւնների ծանրութեամբ. մինչև որ օրգանիզմը նրանց չը մարսէ, նրանք չեն կարող մտքին ոյժ և սնունդ տալ»: Ուսուցչապետ Ատկինսօնն այսպէս է արտայայտում. «Սովորողի համար կարևորն այն չէ, թէ որքան պէտք է կարգալ. նրա համար կարևոր է կարգացածի որակը և ընթերցանութեան հզանակը: Մեծ նմանութիւն կայ ֆիզիքական և մտաւոր սննդի մարսողութեան մէջ: Առօրեայ կեանքից մի օրինակ բերենք. երկու հոգի ձոխ սեղան նստեցին. մէկը՝ որ լաւ ախորժակ ունի և հասկանում է մարմնի համար սննդաբար կերակրի նշանակութիւնը՝ ընտրում է ամենապարզ կերակուրները. միւսը որ քմահաճոյ, ինքնահաճ ճաշակի տէր է և կերակրի բնալուծական և բնախօսական յատկութիւնների մասին գաղափար չունի, ընտրում է մեծածախս, համադամ խորտիկները: Առաջինը սեղանից վեր է կենում կուշտ և կազդուրուած, երկրորդը թեթեւացած գրպանով, բայց դատարկ ստամոքսով: Երբ մենք ուսումնասիրում ենք բնախօսական բնալուծութիւնը և մարմնի սննդառութիւնը, ինչո՞ւ պէտք է արհամարհենք մտքի բնալուծութիւնը և մտաւոր կերակրի ընտրութիւնը: Ես վնասակար գրքերի մասին չեմ խօսում այստեղ, չէ որ մենք կերակրի մէջ էլ թոյն չենք խառնում: Ես խօսում եմ միայն այն սննդաբար նիւթի մասին, որ ցրուած է բազմաթիւ գրքերի մէջ: Բրէտուէտ՝ ամերիկացի հեղինակը, որ այս հարցով զբաղուած է, ասում է. «Միտքն առողջ կերակուր է պահանջում. թեթև ընթերցանութիւնը թուլացնում է մարդու ընդունակութիւնները»: Լօրդ Բէկօնը սրամիտ կերպով նկատել է. «Կարգացէք ոչ նրա համար որ վիճէք, հերքէք՝ կամ այնպայման հաւատաք, այլ նրա համար, որ ձեր կարգացածը կշռադատէք և լաւ խորհէք: Այս բանի մէջն է օգտակար ընթերցանութեան և գրքերի յաջող ընտրութեան բոլոր գաղանիքը: Եթէ գրքերի իսկական արժէքը որոշէին, որքան ժողովրդականութիւն ստացած գրքեր պիտի դուրս ձգուէին անպէտք իրերի շարքը մտնելու համար: Յաւալի է տեսնել որ մարդկային միլիօնաւոր գլուխներ նուիրուած են այնպիսի եր-

կերի ընթերցանութեան, որոնց մէջ իսկապէս ոչինչ չկայ սնա-
 փառութեան ունայն փայլից գատ: Ինչպիսի բազմութիւն
 մարդկանց նախ քան Ֆիզիքահյան կատարեալ զարգացման
 հասնելը, անկանոն պարապմունքների շնորհիւ դառնում է ար-
 դէն փոքրահասակ, շղային, հրէշաւոր և խեղանդամ: Դատարկ,
 վնասակար գրքերի ընթերցանութիւնը խեղդում է այն ընա-
 ծին ձգտումները, որ տանում են մարդուն դէպի բարձր բա-
 ւականութիւնները, սպանում է եռանդը և ստորացնում է մար-
 դու մտաւոր զարգացումը»:

«Կոլրիջը անուշադիր ընթերցողին համեմատում է աւա-
 զի ժամացոյցի հետ. ինչքան էլ նա աւաղ թաւալէ, ապակու
 վրայ հետք չի մնայ. կամ՝ սպունգի հետ. ամեն պատահական
 բան ծծելուց յետոյ նա հեշտութեամբ իւր առաջուալ դիրքն է
 ընդունում բան չը պահելով իրենում բացի կեղտից. կամ քա-
 միչի հետ, որ իւր միջով ամեն ինչ անց է կացնում, բացի
 դիրտից և աւելորդութիւններից: Բայց կան ընթերցողներ, ո-
 ռոնք Հոլկոնդայի բանուորին են յիշեցնում, որն արմատ
 գտնելով խնամքով պահում է, իսկ խոտանները դէն է ձգում»:
 Գրքի օգուտը ոչ միայն իրեն՝ գրքի մէջն է, այլ և ընթերցողի
 գլխի մէջը: Պետրարքն ասում է, ընթերցանութիւնը ոմանց
 հմտութիւնների հասցրեց, իսկ ոմանց խելագորկ արաւ: Ինչ-
 պէս որ կերակրի չափազանցութիւնը յաճախ բաղցից աւելի է
 վնասում մարդուն, նոյնը և խելքի նկատմամբ. գրքերի ընտ-
 րութիւնը ինչպէս և կերակրինը համապատասխան պէտք է լինի
 ընթերցողի ոյժերին»:

Գրականութեան միջակ երկերով զուլի լցնելը, ասում է
 Ֆրիդրիկոս Հարրիսօնը, նշանակում է բոլոր իսկական օգտա-
 կար բաների առաջ արգելք դնել: Իմ կարծիքով՝ խելացի ըն-
 թերցանութեան սովորութիւն ձեռք բերելու խնդիրը ամենա-
 զժուար խնդիրներից մէկն է. այդ բանին կարելի է հասնել
 միայն չափազանց ջանքերով և հաստատուն վճռականութեամբ:
 Կարգալ միայն կարգալու համար, փոխանակ կարգացածից օ-
 գուտ քաղելու, ամենատարածուած և ամենավնասակար սովո-
 րութիւններից մէկն է: Ինչո՞ւ հաւասարապէս հիանա՞ք գրա-
 կանութեան ամեն մի երկով, քանի որ նրա մէջ լաւ բաների
 հետ մէկտեղ համարեա կիսով չափ և անպէտք բաներ կան:
 Մարդիկ կան որ կարգացած գրքերի շատութեամբ են պարծե-
 նում, ինչպէս որ ոմանք հպարտանում են կուլ տուած խմիչք-
 ների քանակութեամբ, մոռանալով, որ ձեռք ձգած գրքերի ան-
 խրտիր ընթերցումը սպանում է մեր մէջ գրքերից օգտաւէտը

քաղելու ընդունակութիւնը: Անմահ Միլտօնը հետեւալ խօս-
 քերն ասաց, որն անգիր գիտէ ամբողջ Անգլիան. «Լաւ գիրք
 սպանելը նոյնն է, թէ մարդ սպանել: Ես աշակրջութեամբ կը հե-
 տեմ գրքերին, աւելացրեց նա. նրանցից շատերը ամենախիստ
 դատի են արժանի, ինչպէս չարամիտ յանցագործներ»: Ով որ
 իւր թանգագին ժամանակը անպէտք գրքի վրայ է վատնում,
 նա մահացու հարուած է տալիս ընտիր գրքին, որի մէջ հեղի-
 նակը կենդրոնացրել է կենսական իմաստութեան բոլոր էու-
 թիւնը ի խրատ ապագայ սերնդի: Զանազան գործերով զբա-
 ղուած մարդիկ պէտք է բաւականանան քիչ գրքերի ընտրու-
 թեամբ: Յագեցնելով իրենց միտքը անպէտք երկերով, հէնց
 դրանով նրանք սպանում են այն գրքերը, որոնց Միլտօնն ան-
 մահ է կոչում. վերջիններն՝ ինչպէս թաղուած են մնում»:

Այստեղ վստահանում եմ կրկնել նոյն միտքը յառաջ բե-
 րելով յոռետես Շոպէնհաուէր փիլիսոփայի խօսքերը. «Գրակա-
 նութեան մէջ, ինչպէս և կեանքի մէջ, որ կողմն էլ որ շուտ
 գաս, հեղինակութիւնների անագին բազմութեան կը հանդի-
 պես, որոնք վնասակար հետք են թողնում, ինչպէս ձանձրալի
 ձանձերի խումբը ամառնային տօթ եղանակին: Բազմաթիւ ան-
 պէտք գրուածներ վայրի որոմի նման խեղդում են բարի ըն-
 ձիւղները: Այդ տեսակ գրքերն ապարդիւն կերպով ի չարն են
 գործ դնում ժամանակը, փողը և մարդկանց ուշադրութիւնը,
 որ արժանի է առաւել բարձր նպատակների. նրանք գրում
 են բացառապէս շահասիրական նպատակով: Բաւական չէ. որ
 այդտեսակ գրականութիւնն անօգուտ է. այլ ուղղակի վնաս է
 բերում: Մեր գրականութեան ինն տասներորդ մասի միակ
 նպատակն է հասարակութեան գրպանից մի կամ երկու տալէր
 դուրս կորզել. հեղինակը, հրատարակիչը և տպարանը համե-
 րաշխ միանում են այդ նպատակի համար: Ամենավնասակար
 աւերիչները գրողանոց խզողներն են, որոնք ձանապարհ են
 հարթում իրենց համար գրական ասպարիզում և ապականում
 հասարակութեան ճաշակը»:

Սրանից հետեւում է թէ պէտք է նոյնպէս կարողանանք
 խուսափել մօղնի գրքերի ընթերցանութիւնից, որոնք մեծ
 ազմուկ են հանում իրենց լոյս տեսնելով և մի քանի հրատա-
 րակութիւններ են ունենում իրենց կեանքի առաջին և վերջին
 տարին: Չը պէտք է մոռանալ, որ յիմարների համար գրողը
 միշտ բազմաթիւ ընթերցողներ է ունենում: Մենք պէտք է
 մեր պարապոյ ժամերի ամենակարճ ընթացքն ենք անգամ նուի-
 րենք բոլոր ժամանակների և ազգերի նշանաւոր մտածողնե-

րին, որոնք մարդկութիւնից բարձր են կանգնած. միայն այդ տեսակ հեղինակներն են մեզ զարգացնում և դաստիարակում: Մենք ամեն ժամանակ կարող ենք կարդալ անպէտք գրքեր մեր ուզեցածին չափ, այն ինչ երբէք չի յաջողուի մեզ բաւարարար քանակութեամբ լաւ գրքեր կարդալ: Վատ գրքերը՝ կատարեալ թոյն են, որ քարքայում են բանակութեան հիմքը: Եւ որովհետեւ շատերն շտապում են կարդալ գրականութեան ոչ թէ լաւագոյն, այլ լոկ նորագոյն արտադրութիւնները, ուստի և հեղինակներն էլ ձգտում են հասարակութեան այդ տեսակ պահանջին բաւականութիւն տալ. նրանք միեւնոյն մտքերի նեղ շրջանի մէջ են պտտում և իրենց դարը ճահճային անշարժութեան մէջ են թաղում: Այն հմտութիւնները, որոնք ձեռք են բերում առանց բանականութեան քննադատական գնահատութեան՝ մեզ հետ նոյն յարաբերութիւնն ունին, ինչ որ մեր մարմնի արուեստակեալ մասերը, որոնք մեր մերկութիւնը ծածկելու են ծառայում. մինչդեռ մեր մտքի մշակութեան ենթարկուած ծանօթութիւնները մարմին ու արիւն և մեր մտքի անկապտելի սեփականութիւն են դառնում: Հէնց այստեղից էլ յառաջ է գալիս խորհրդածողի և իմաստակի մէջ եղած զանազանութիւնը: Մեծ մտածողի մտաւոր սեփականութիւնը նման է մի գեղարուեստական պատկերի, որի գոյների ներդաշնակ դասաւորութիւնը, լուսոյ և ստուերի ամենաաննշան խաղն անգամ դիտողի աչքին է ընկնում, մինչդեռ հասարակ ուսումնականի միտքը կարելի է նմանեցնել նկարչական նկարատնխտակի, որ ծածկուած է բաց գոյներով առանց որևէ դասաւորութեան և ներդաշնակութեան: Միայն այն հեղինակներն են մեզ իրական օգուտ տալիս, որոնց միտքն աւելի կայտառ և աւելի պայծառ է մեր մտքից. մի որոշ ժամանակ մենք նրանց խելքովն ենք մտածում. նրանց հեղինակութիւնները ընթերցման ազդեցութեան տակ մեր մտքերը կենդանանում են և մենք համարձակ բարձրանում, սաւառնում ենք այնպիսի խաւերում, որոնք անմատչելի են մեզ առանց նրանց օգնութեան»:

Եթէ մենք երես առ երես կարդալիս համոզուում ենք թէ այդ ընթերցումից մեր միտքը ոչինչ չի շահում, այդ նշանակում է թէ ընթերցանութիւնը պէտք է ընդհատել, որտեղ էլ մենք կանգնած լինենք՝ գրքի սկզբում թէ մէջտեղը, — միեւնոյն է: Նախընթաց գլխում մենք արդէն պնդում էինք, որ ընթերցողը ամենից առաջ պէտք է հաշիւ տայ իրեն, թէ ինչու համար է ընտրում որևէ գիրք՝ արդեօք գիտնական նպատակի,

թէ լոկ գուարճութեան համար: Երկու դէպքումն էլ եթէ գիրքը նպատակին չի ծառայում, այն ժամանակ պէտք է մի կողմ դնել և մի այլ բանով զբաղուել:

«Շատ բան մի անգամից մի կարդաք, ասում է Էդուարդ Հէլը, կանգ առէք իսկոյն երբ յոգնածութիւն զգաք և շարունակելուց առաջ կարդացածը վերլուծեցէք»: Ընթերցանութեան նպատակը գլխաւոր տեղը պիտի բռնէ: Արդեօք ծանօթութիւններ ձեռք բերելու համար ենք կարդում թէ լոկ գուարճութեան՝ մենք պէտք է կարդանք ճիշտ այնքան ժամանակ, որքան որ լարուած է մեր ուշադրութիւնը: Եթէ պատմութիւնը կամ վիպասանութիւնը սկսում են ծանրանալ մեզ վրայ ինչպէս մի բեռն, նշանակում է թէ խիստ շատ կարդացիւք:

Շատերը միեւնոյն ժամանակում կարդում են և՛ շատ և՛ քիչ: Միանուագ նոքա շատ գրքի են ձեռք տալիս, բայց և ոչ մէկը չը իւրացնելով, նախ գոհացում չեն ստանում, որովհետեւ նրանք չեն կարողացել մի առարկայի վրայ կենդրոնացնել իրենց ուշադրութիւնը: «Շատերը սովորել են կարդալ առանց խորութեան, ինչ որ պատահի, ասում է Բօստօնի-Գրական-Աշխարհը, շառաջնորդուելով իրենց ընտրութեան մէջ բարձրագոյն նպատակներով, որոնք միայն կարող են ցանկալի արդիւնքների հասցնել: Անկարելի է կարդալ բոլոր հրատարակուող գրքերը, չի կարելի նոյն իսկ նրանց վերնագիրները յիշել. մնում է միայն գրքերի որոշ ընտրութիւն անել, ուշադրութիւն կենդրոնացնելով մի որևէ առարկայի վրայ»: Ապա շարունակում է. «Շատ լաւ կը լինի եթէ գրքեր ընտրելիս մարդ իւր ուշադրութիւնը կենդրոնացնէ բացառապէս որևէ պատմական շրջանի վրայ, որևէ ականաւոր գործչի կամ գիտութեան կամ արուեստի որևէ բաժնի վրայ, և ուսումնասիրէ կանոնաւոր մշակուած եղանակով: Ի մի հաւաքեցէք ձեր ընտրած նիւթի իրողութիւնները և փաստերը, լուսաբանեցէք այն ամեն կողմից և բոլոր հնարաւոր կապակցութիւններով: Ընթերցանութեան այդպիսի եղանակը կենդանի հետաքրքրութիւն կը պահպանէ ձեր պարապմունքների մէջ. նա քիչ ժամանակ կը պահանջէ, բայց կը հարստացնէ ձեր միտքն ընդարձակ ծանօթութիւններով»: Պօտէր եպիսկոպոսն էլ գովում է այս եղանակը. «Շարագրութիւնների նիւթերն ուսումնասիրեցէք, այլ ոչ շարագրութիւններն ընդհանրապէս. համեմատեցէք նոյն նիւթը մշակող զանազան հեղինակներ, տեղեկութիւններ հաւաքեցէք զանազան աղբիւրներից, առողջ տրամաբանութեամբ եզրակացութիւններ հանեցէք կարդացած շարագրութիւններից: Այդպիսի

նպատակ ընտրելով աշխատեցէք ամենափոքր շեղում անգամ չանել, որպէսզի զուր ժամանակ չը վատնէք և աւելորդ ընթերցանութեամբ չը ծանրաբեռնուիք: Օրինակ, ով որ մտքովը դրել է Գրինի անգլիական ազգի Համառօտ պատմութիւնը կարդալ և միևնոյն ժամանակ գիշերներ է լուսացնում նորելուկ վիպասանութիւններով՝ նա անխոհեմ է վարւում. ընդհակառակն ով որ զբաղւում է ժամանակակից հեղինակների ուսումնասիրութեամբ և քննական գնահատութեամբ, նա անխոհեմ կը լինի, եթէ Գրինի պատմութիւնից երկու հարիւր երես դաս վերցնի: Ապա ուրեմն, ինչոր որոշ պայմաններում արդիւնաւէտ և գովելի է, ուրիշ տեղ յաճախ վնասակար է լինում և դատափետութեան արժանի:

Այստեղ պէտք ենք համարում կարդացածի կրկնութեան համար մի քանի խօսք ասել. «Ով որ կամենում է լրջօրէն ուսումնասիրել մի որևէ առարկայ, ասում է Լիւտէրը, նա պէտք է շատ թէ քիչ անգամ կրկնէ աչքի ընկնող հեղինակութիւնները, որովհետև շատ զանազան գրքեր կարդալիս յաճախ մտքերի շփոթութիւն է յառաջ գալիս: Ով որ քիչ-քիչ ամեն տեղ ապրում է, երբէք իւր սեփական օջախը չի ունենայ»: Լաւ գիրքն արժէ երկրորդ անգամ կարդալ. մեզնից իւրաքանչիւրը իւր սիրած հեղինակներն ունի. յաճախ դառնում ենք նրանց և խօսակցում՝ ամեն անգամ մի նոր բաւականութեամբ: Լաւ գրքի առաջին, երկրորդ, երրորդ չորրորդ անգամ կարդալը կամ նրանից նոյն իսկ մի գլուխ կարդալը մեծ օգուտ է մտքի և յիշողութեան համար: Սակայն պէտք չէ այս սովորութեամբ չափազանց տարուիլ: Մենք ստիպուած ենք ոչ ամեն ինչ պահել մեր յիշողութեան մէջ, որովհետև մեր ուղեղի կազմութիւնն այնպէս է, որ չի կարող ամեն կարդացած բովանդակել առանց բացառութեան: Պէտք էլ չէ մի քանի հեղինակների կրկնակի ընթերցանութեամբ սահմանափակուիլ ի վնաս միւսների ծանօթութեան: Առանց այն էլ բազմաթիւ ընտիր հեղինակութիւններ անձեռնմելի կմնան ժամանակի սղութեան պատճառով: Կարդացէք ուշադրութեամբ և լաւ որոճացէք կարդացածը, նորից վերագարձէք աչքի անցրէք լաւագոյն կտորները. բայց մի յուսահատուէք, եթէ ձեր յիշողութիւնը դաւաճանում է ձեզ և մի բռնազատէք այն, պահանջելով նրանից ինչոր անկարելի է: Իբրև եզրակացութիւն այս գլխի անհրաժեշտ է երկու հանգամանք ևս բացատրել. կան մարդիկ, որոնք լիք լեցնում են իրենց և ուրիշների գլուխը չափազանց ընթերցանութեամբ որ պատճառ է դառնում ֆիզիքական և բարոյական խօթու-

թեանց և մահուան: Բայց կան և այնպիսի մարդիկ, որոնց համար ուրիշների խորհուրդը ընթերցանութիւնը սահմանափակելու նկատմամբ բոլորովին աւելորդ է, ամենապարզ պատճառով. այդպիսիները կարդալու սովորութիւն չունին ամենևին:

Լսենք թէ ինչ է ասում Հերբէրտ Սպէնսէրը մտաւոր բեռնաւորութեան վնասի մասին. նրա խօսքը վերաբերում է թէ մանուկներին և թէ հասակաւորներին. «Թէ երիտասարդի և թէ հասակաւորի վրայ ժամանակակից կեանքի դրած կնիքը աւելի և աւելի խորն է գնում: Որ կողմ որ աչքներդ դարձնէք մատաղ սերդի խանգարուած առողջութեան օրինակներ կտեսնէք, որ հետևանք է անկանոն պարապմունքների: Անդադար կարիք են զգում աշակերտողները իրանց խանգարուած առողջութիւնը վերականգնելու համար աւելի կամ պակաս տևողութեամբ հանգիստ առնել: Քիչ չեն նաև ուղեղի քրոնիքական բորբոքման դէպքեր, որ ամիսներ է տևում և որ կարող է աւելի երկարել: Շատ անգամ ենք լսում տենդի մասին, որ չափազանց յոգնածութիւնից է յառաջանում դպրոցներում: Երբեմն աշակերտը քայքայուած առողջութեան պատճառով ստիպուած լինելով առ ժամանակ դադարեցնել իւր պարապմունքները, ժամանակից առաջ է վերադառնում ուսումնարան և դասարանում ուշաթափւում է: Մենք բերում ենք այս օրինակները, որովհետև երկու տարում մենք կարողացել ենք արդէն բաւական դիտել: Մենք դիպուածով նկատել ենք և այն՝ թէ ինչպէս դպրոցական անկանոն պարապմունքներից յառաջացած չարիքը ազդում է յետագայ սերնդի վրայ. առողջ ծնողների գաւակ մի երիտասարդ կին, որ իւր ուսումնաւարտել էր Շոտլանդական մի գիշերօթիկ դպրոցում, այնքան էր քայքայել այնտեղ իւր առողջութիւնը, որ առաւօտները միշտ տանջուած էր գլխի պտոյտովը: Նրա երեխաները ժառանգեցին նրա մաշուած ուղեղը և անընդունակ դարձան նոյն իսկ ուսման ամենաչնչին մասերն ըմբռնելու. հէնց որ սկսում էին կարդալ՝ գլխի ցաւը և պտոյտը նրանց տանջում էր: Մենք մի երիտասարդ աղջիկ էլ ենք ճանաչում, բոլորովին հիւանդ գիմնազիական դասընթացի չափազանց մտաւոր աշխատանքից: Նա կորցրել էր ախորժակը. ձեռքերն ու ոտքերը՝ նոյն իսկ ամենատաք եղանակին, սառն էին. նա այնքան թոյլ էր, որ նոյն իսկ մի փոքրիկ զբօսանքն անգամ դանդաղ քայլերով յոգնեցնում էր նրան. սանդուխտները բարձրանալիս նրա սիրտը սաստիկ բարբախում էր. նրա աչքերն զգալի կերպով տկարացել էին. կարճահասակ էր մնացել և կազմուածքի գործուածքն

էլ քայքայուել էր: Նոյն վիճակի մէջ է և նրա ընկերուհին, որի հետ միասին էին սովորում. նա նոյնպէս թոյլ է, ուշաթափութեան ենթակայ և ստիպուած եղաւ դասընթացն աւարտելուց յառաջ թողնել ուսումը: Եթէ հնար է միայն աչքի ընկնող բազմաթիւ դէպքերից օրինակներ բերել, քանի, ուրեմն, նոյնպիսի՝ առաւել նսեմ օրինակներ աննկատելի են մնում: Իւրաքանչիւր հիւանդական մի դէպքին, որ անշուշտ յառաջանում է չափազանց նստակեցութիւնից մտաւոր աշխատանքի համար, գալիս է առնուադն վեց դէպք, երբ հիւանդութեան հասցրած մնասը ակնյայտնի չի լինում, երբ հիւանդութիւնը դանդաղ կերպով է դիւրում: Կազմուածքի ֆունկցիայի մէջ հետզհետէ քայքայումն է նկատուում, ֆիզիքական աճեցողութեան վաղաժամ դադարումն է նշմարուում և բարակացաւի տրամադրութիւնը զօրանում է. այժմ յաճախ կրկնուող հոգեկան խօթութեան նշաններ են երևում, որոնք աւելի ևս ակնյայտնի են դառնում ֆիզիքական և բարոյական զարգացման ընթացքում: Որ մտաւոր անհամաչափ աշխատութիւնը քայքայում է կազմուածքը, այդ երևում է խելագարութեան բազմաթիւ օրինակներով մարդկանց մէջ, որոնք իրենց վաստակաւոր կեանքը անցնում են այս կամ այն մտաւոր ասպարիզում. այդպիսի աշխատանքն աւելի ևս քայքայող ազդեցութիւն է գործում մատղահաս երիտասարդների դեռ ևս չկազմակերպուած մարմնի վրայ: Նրանք անկարող են տանել այդպիսի աշխատանք, այդ տեսակ մտաւոր և ֆիզիքական լարումն, ինչպէս հասակաւորները: Եթէ մտքի անհամաչափ ճիգը այդքան աղետալի է հասակաւորների համար, ուրեմն կարելի է երևակայել, թէ որքան մնասաբեր է մատաղ սերդի համար»:

Ես կցանկայի, որ անգլիայի վերոյիշեալ երկու նշանաւոր մանկավարժների խօսքերը ի լուր նրանց կարգացուէին, որոնք չեն կամենում անձամբ ծանօթանալ մեր առաջարկած շարադրութեան հետ: Յարգելի մ—ր Կուիկը՝ իբրև պատասխան Մարկոս Պատտիսօնի այս խօսքերին թէ՛ «Գրքերի պակասութիւնը անգլիական ժողովրդի միջին դասի մտաւոր անշարժութեան ապացոյցն է» առարկում է. «Տարակուսելի է, որ մայր ցամաքի բոլոր միջին դասն աւելի գիրք ունենայ: Միայն լրագրեր կարդալու սովորութիւնն արմատացել է ամէն տեղ, որ աւելի զբաղատրութեան նման է, քան գրականութեան: Նոյն իսկ զարգացած մարդկանց մէջ գրականութեամբ հետաքրքրուողների քիչ կպատահես: Մեծամասնութիւնը ծանօթ չէ նոյն իսկ Շէկսպլերի, Միլտօնի, վալտեր Սկոտի և Տէնիսօնի ստեղծագոր-

ծութիւնների հետ: Այս դասի ամբողջ ժամանակը, միտքն ու շահերը կենդրոնանում են մասնական պարապմունքների վրայ, որ շատ քիչ դէպքերում են շփուում գրականութեան հետ. մնացած ժամանակը նուիրւում է ընտանիքին, հասարակութեան կամ դատարկ զուարճութիւնների, որ գրականութեան հետ ոչ մի առնչութիւն չունին: Մշտական ընթերցանութիւնը դեռ ևս գրականութիւնը սիրելու ապացոյց չէ: Այդ սէրն արտացոլում է երկերի գեղեցկութիւնը գնահատելու հմտութեան մէջ. իսկ թէ որքան քիչ են ձգտում այդ բանին երևում է նրանից, որ շատ քչերն են կրկնում կարդացածը: Ընթերցողը սովորաբար կատարեալ անտարբերութեամբ է վերաբերում ոճին և ջանք չի գնում կարդացած մտքերը ջոկջոկելու: Նա բաւականանում է ժամանակաւոր հրատարակութիւններով, քաղելով նրանցից հաճոյական սպաւորութիւնների մի անվերջ շարք»: «Գաղափարը, ասում է Վատիսօնը զրգոտւած է միտքը, ինքը մտքի արդիւնք լինելով, ուրիշի մտքի մէջ էլ արձագանք է յառաջ բերում, բայց շատերն ընդհակառակն՝ գիրքը ձեռք են առնում հանգստանալու դիտաւորութեամբ»:

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Յաճախ դառն ճշմարտութիւնը մեզ համոզում է թէ կարդացածը որքան արագ թռչում է մեր մտքից: Պատմութիւն սովորելիս ժամանակագրութիւնը և անունները շատ շուտով մոռացւում են: Ամբողջ դիւցազնեղութիւններ, որ մենք առաջ բերան գիտէինք, վիպասանութիւնների բովանդակութիւնը, մասնաւոր մարդկանց բնաւորագիրը, նոյն իսկ մեզ քաջ ծանօթ հեղինակութիւնների վերնագրերը շատ անգամ այնպէս են անհետանում մեր յիշողութիւնից, որ կարծես թէ երբեք չը գիտէինք էլ:

Նախորդ գլխում մենք արդէն ասացինք, թէ մարդու ուղեղն այնպէս է կազմակերպուած, որ ամեն բան առանց բացառութեան չի կարող պահել, այլ միայն այնքան, որքան կարող է տեղաւորել: Մեր ձեռք բերած ծանօթութիւնների մեծ մասը մեզ համար լոկ իբրև մտաւոր վարժութիւններ և մտաւոր սնունդ են. նեղանալ այն պատճառով, որ մեր յիշողութիւնը դաւաճանում է մեզ, այդ միևնոյն է եթէ մենք զայն բանայինք, որ չենք կարողանում մտաբերել թէ մի տարի առաջ նախաճաշին ինչ ենք կերել կամ թէ չէ ճշտութեամբ ո-

ըռշել թէ մի շարաթ առաջ առաւօտեան դրօսանք կատարելիս՝ որքան ժամանակ գործ դրինք: Եթէ կարգացած գրքի մեծ մասը մոռացել ենք, այդ դեռևս չի նշանակում թէ անօգուտ կերպով կարգացինք: Ուրիշ դէպքերում շատ անգամ նոյն իսկ մխիթարական է, որ մոռանալու շատ բան մոռացուել է:

Թոյլ յիշողութիւնն այնպիսի բան է, որ կարելի է զգալի չափով ամրացնել: Յիշողութիւնը սրելու ամենամեծ միջոցը կատարեալ ուշադրութեամբ կարգալն է: «Կան մարդիկ, ասում է Նախագահ Պորտէրը, որոնք զարմանալի յիշողութիւն ունին. բաւական է աչքի անցնեն մի երես որ իրենց յիշողութեան մէջ զըռշումի: Ոմանք էլ կարգում են հէնց միայն նրա համար որ իսկոյն մոռացութեան տան նոյն իսկ ամենապարզ իրողութիւնները: Մենք յանձն չենք առնում բացադրել այս երևոյթները, այլ մատնացոյց ենք անում միայն ընթերցածը ըստ կարելոյն կատարելապէս իւրացնելու անհրաժեշտութեան վրայ, որը յիշողութիւնը վերականգնելու միջոց է: Նախագահ Պորտէրը խորհուրդ է տալիս բնական ընդունակութիւնների և հակումների սահմաններից դուրս չը գալ և յիշողութիւնը չը ծանրաբեռնել ոյժից վեր աշխատանքով: «Կարգալիս ասում է նա, ընթերցողը պէտք է մտքով ձուլուել հեղինակի հետ: Եթէ հարկաւոր լինի այդ բանի համար կարգացածը նորից կրկնել, չը պէտք է արհամարհել կրկնութիւնը: Եթէ հատուածական արտագրութիւնները օգտաւէտ լինին, այն ժամանակ անհրաժեշտ է և այդ միջոցները գործ դնել: Այս միջոցն իսկապէս ասած մի հրապուրիչ բան չէ, բայց իբրև մեջոց կարևոր է նպատակի հասնելու համար. իսկ նպատակը մտաւոր եռանդ և գործունեայ ուշադրութիւն զարթեցնելն է»: «Յիշողութիւնը ոյժ չէ, ասում է Բլակվուդ-Մագադինը, այլ միայն օժանդակ միջոց է. նա ձեռք բերելիք հմտութիւններն է հաւաքում և ձանաչում է միայն իւր արդիւնքներով»:

Փիլիպպոս Համերտօնն այս կարծիքը յայտնեց թէ՛ Թոյլ յիշողութիւնը անբուժելի չարիք չէ: Յիշողութիւնը մի շոկշկոզ ընդունակութիւն է, ասում է նա, որը կարողանում է պահել իրենում միայն օգտակարը և դէն է ձգում անպէտքը: Ինչ որ մեզ իսկապէս հետաքրքրում է այն մենք շատ հեշտութեամբ յիշում ենք առանց մտապահութեան արհեստական միջոցների գիծելու. և միայն այն է անհետ կորչում մեր յիշողութիւնից դէպի որը բոլորովին անտարբեր ենք եղել: «Եթէ Գեօթէն մնար լոկ հասարակ ուսանող և թաղուէր իրեն քիչ հետաքրքրող իրաւաբանական գիտութիւնների մէջ,

այն ժամանակ գուցէ ամբողջ աշխարհն էլ չկարողանար համոզուել թէ նա բարձր ստեղծագործական տաղանդի տէր է: Այսպիսով այն մարդիկ, որ այլոց կամքով միայն ստիպուած են յիշողութիւնը ծանրաբեռնել այնպիսի մտաւոր մնդով, որ հակառակ է իրենց հակումներին, յիշողութիւնից բոլորովին զուրկ են երևում և վերջ ի վերջոյ իրենք էլ ընտելանում են նոյն կարծիքն ընդունել իրենց նկատմամբ: Վատ յիշողութիւնը շատ դէպքերում ամենալաւն է հանդիսանում, որովհետև նա շոկշկոզ յիշողութեան կարգին է պատկանում: Այդ տեսակ յիշողութեամբ դժուար է յաջող բնութիւն տալ, բայց գրականութեան և արուեստների մէջ կարելի է համարձակ կերպով անուն ժառանգել: Նա անհամեմատ աւելի լաւ է խտրութիւն չընող յիշողութիւնից, որն արկղի նման ընդունում է իւր մէջ այն ամենը, ինչ որ նրա մէջ դնում են: Հեղինակի կամ գեղարուեստագէտի համար պէտք չէ բազմաբովանդակ յիշողութիւն, որը փոստատան նման ընդունում է ամեն բան, ինչ որ բերեն. պարբերական ընտիր հրատարակութեան նման տպագրում է միայն այն, ինչ որ համապատասխանում է իւր մտաւոր կեանքին»:

Ես կատարելապէս համոզուած եմ թէ հնարաւոր է յիշողութիւնը զարգացնել և կարգ ու կանոնի վարժեցնել: Յիշողութիւնը կատարելագործելու ճանապարհը ընթերցանելի գրքի հետաքրքրութեան աստիճանական զարգացման մէջն է և ոչ երբէք յիշողութիւնն ամրացնելու կեղծ ու պատիր հնարների մէջ: Յիշողութեան բուն էութիւնը առարկանների իրար հետ ունեցած յարաբերութիւնն և նրանց ներքին կապն իւրացնելն է և ոչ թէ նրանց արտաքին նկարագրութիւնը: Յիշողութիւնը պէտք է մեր մտաւոր աշխատանքին օգնէ, իսկ եթէ նա միայն ծանրաբեռնում է և մթնեցնում, այն ժամանակ նա վատ ծառայութիւն է անում:

Չպէտք է մոռանալ, որ ոչ ոք իրաւունք չունի ուրիշների խելքը կառավարելու և ինչ ինչ կանոններ սահմանելու, օրինակ՝ յիշողութեան համար: Իսկ ինձ համար կասեմ, ես այնպիսի յիշողութեան տէր եմ, որ առանց դժուարանալու կարող եմ յիշել ոչ միայն կարգացած գրքի հեղինակի անունը, հրատարակչինը և տպարանինը, այլ և տառերի ձևը, երեսի թուրթը և տպագրութեան տարին: Երկու-երեք անգամ կարգալով գիմնագիտի աշակերտների ցուցակը, ես կարող եմ յիշել բոլորի անունները, ազգանուններն ու ծննդավայրերը: Մի անգամ միայն աչքի անցնելով ուղեցոյցը ես յիշում եմ այն ամեն-

նը, ինչ որ պէտք է իմ ճանապարհորդութեան համար. հասնելով որ և է բաղաբ ես կարող եմ զարմացնել ամենքին իմ ծանօթութեանց պաշարով, այնպէս որ շատերն ինձ հնախոյզի տեղ են դնում: Այս բոլորը յաջողուում է ինձ առանց ամենափոքր դժուարութեան և ես զարմանում եմ թէ ինչպէս կարելի է այդպիսի դատարկ բաները չը յիշել: Բայց ես ամենևին իրաւունք չունիմ պահանջելու, որ ուրիշներն էլ այդ բոլորը յիշեն, ճիշտ այնպէս, ինչպէս որ ոչոք չի կարող ինձ ստիպել բերան ասելու Կօլրիշի «Ծերունի ծովագնացը» կամ երրորդ պունիկական պատերազմի տարին յիշելու: Մի խօսքով չի կարելի պահանջել, որ ուրիշներն էլ—յիշէին այնքան որքան մենք: Անհրաժեշտ է միայն որ ամեն մարդ աշխատի կարգացածը բարեխղճաբար իւրացնել և լաւ որոճալ:

Յիշողութեան բազմազանութեան մասին շատ գեղեցիկ է արտայայտել կարգինալ Նիւման. «Մենք կարող էինք վերացական գաղափար կազմել յիշողութեան մասին, թէ նա այնպիսի ընդունակութիւն է, որ կարող է պարունակել մեր բազմամեայ փորձառութեան բոլոր իրողութիւնները— բայց այդ մտլորութիւն կը լինէր. այդպիսի ամենաբովանդակ յիշողութիւն գոյութիւն չունի: Մենք ամէնքս յիշում ենք այն չափով, որ չափով մենք դատում ենք զանազան իրողութիւնների մասին. իսկ յիշողութիւնն ինչպէս մտաւոր զօրութիւն ուրոյն կարողութիւն չէ. նա կարող է միայն որոշ շրջանի նիւթեր յիշել, այլ ոչ թէ ամեն շրջանի: Մէկը կարող է ամբողջ գիւցագներգութիւն կամ լսած ճառը բառացի կրկնել, բայց ոչ թուր. միւսը չափազանց ընդունակ է լեզուներ սովորելու, բայց մոռանում է մօտիկ անցեալի գէպերը: Երրորդը կարգացածի բովանդակութիւնը յիշում է, իսկ անձնաւորութիւնները միտ պահելու յիշողութիւն չունի: Ես այնպիսի մարդիկ եմ ճանաչում, որոնք անսխալ յիշում էին թէ մի քանի տարի առաջ Ջատիկը երբ է եղել. կամ յիշում էին բոլոր՝ նոյն իսկ սակաւածանօթ մարդկանց անունները: Բայց ես հաւատացած եմ, որ այդպիսի բացառիկ յիշողութիւնը չի կարող հաւասարապէս ծաւալուել բոլոր առարկաների վրայ առանց բացառութեան: Հազար ու մի տեսակ յիշողութիւն կայ, ճիշտ այնպէս, ինչպէս որ հազար ու մի տեսակ առաքինութիւն կայ:

ՅՈՒՇԱՏԵՏՐԵՐԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Ընթերցանութեան ամենալաւ եղանակի մասին առաջար-

կած մեր տեսութեան մէջ անհրաժեշտ է մի առանձին գլուխ նուիրել յուշատետրերի օգտակարութեան խնդրին: Այս բանի շարժառիթը այն ընդհանրացած իրողութիւնն է թէ՛ յուշատետրը պէտք է համարել ծանրաբեռնութիւն և ոչ հեշտութիւն ընթերցանութեան մէջ: Յուշատետրն՝ իբրև օժանդակ միջոց ընթերցանութեան և մտածողութեան, անտարակոյս օգտակար կարող է լինել: Բայց շատ յաճախ ընթերցողը համոզուելով թէ այդ եղանակը ամենաշահաւէտն է, ձեռք է բերում անազին մեծութեամբ մի յիշատակարան այբ-բենական ցանկով և, սկսելով, դիցուք, Տէնի «Անգլիական գրականութեան» ընթերցումը, եռանդով կտորներ է արտագրում առաջին երկու-երեք գլխից. բայց որովհետեւ նա՝ միևնոյն ժամանակ կարդում է և՛ լրագրեր և՛ ամսագրեր և ուրիշ ձեռքն ընկած գրքեր, ուստի և ուրիշ նկատողութիւններ էլ մտցնում է նա նոյն տետրակի մէջ: Մի քանի օրից կամ շաբաթից յետոյ նա այլ ևս անյարմար է համարում ընթերցանութեան ժամանակ ամեն անգամ գրիչ ու թանաքով յուշատետրի ետևիցն ընկնել. արտագրութիւններն ու նկատողութիւնները սկսում են հետզհետէ նուազլիս յուշատետրն անպէտք է դառնում և տեղափոխուում է գրադարանի վերին դարակը կամ ոչնչութեան է՝ դատապարտուում: Վերջի վերջոյ նա բռն է դառնում ընթերցողին, առանց գէթ մի փոքր օգուտ բերելու:

Յուշատետրը մի համեստ բան պիտի լինի և ծառայէ միայն իբրև օժանդակիչ յիշողութեան:

Շատ ընթերցողներ և հեղինակներ յուշատետր են պահում և չափազանց օգտակար են համարում: Ուրիշներն էլ հերքում են յուշատետրերի օգուտը: Միտէր Հովէն՝ Բօստօնի մի լրագրի խմբագիրն ասում է. «Ընթերցողի ուղեղն ամենալաւ ամենայուսալի յուշատետրն է. նա միշտ մօտդ է և որքան աւելի ես գործադրում, նոյնքան աւելի օգուտ է բերում. և ոչ ոք չի կարող կարգալ այդ գրքոյկը, բացի ուղեղի տիրոջից»: Մասամբ ես միանգամայն համաձայն եմ Միտէր Հովէի հետ և կարևոր համարելով ծոցատետր ունենալը, ոչնչացնում եմ իսկոյն, երբ այլ ես նրա անհրաժեշտութիւնը չեմ զգում: Երբեմն իմ նկատողութիւններս ծրարների մէջ եմ հաւաքում, որոնց վրայ ժողովածուի բովանդակութիւնն եմ նշանակում: Բայց այս դիպուածումն էլ չի կարելի ուրիշների համար որևէ օրէնք նախասահմանել: Ամերիկական լաւագոյն հեղինակներից շատերը յուշատետր պահելու սովորութիւնն ունէին և շատ օգտակար էին համարում: Էմէրսօնի յուշատետրը յայտնի է ամբողջ

աշխարհին և նրա գեղեցիկ նկարագրութիւնների մեծ մասը, ինչպէս ասում են, ուրիշ բան չեն, բայց եթէ նրանից մշակուած արտագրութիւններ: Նա արձանագրում էր ոչ միայն իր կարծիքներն ու հայեացքները, այլ և ուրիշներինը: Մի քանի տարի առաջ ես պատահմամբ կարդացի երկու ամերիկացի հեղինակների՝ Բրատուս Այլկոտի և Ռէյ Պալմերի գրագրութիւնը. նրանք իրենց ամբողջ կեանքի ընթացքում շարունակեցին նամակագրութիւնը և ի լոյս ընծայեցին առանձին հատորներով: Այս գրագրութիւնը պարունակում էր հետաքրքրութեամբ լի դէպքեր նրանց առօրեայ կեանքից: Այդպիսի ժողովածուները յուշարձանների նշանակութիւն ունին և որոշ ժամանակի պատմական գնահատութեան համար անգին նիւթեր են:

Պատկանելի Յովսէփ Կուկի եղանակն էլ ուշագրութեան արժանի է. նա լրագրերից կտորներ էր հաւաքում, խիստ զըննութեան էր ենթարկում և իւր ուզած անհրաժեշտ տեղեկութիւնները պարունակող կտորներից կազմում էր իւր յիշատակարանը: Նա սովորութիւն ունէր նկատողութիւններ էլ գրելու և իւր գրքերի վրայ. «Այս կերպ, ասում էր նա, ես սովորեցի գիրքը վերստին կարդալ լուսանցքներում գրած նկատողութիւններով, որոնք իմ ամենալաւ յիշատակարանն էին կազմում: Սօսքս անշուշտ իմ սեպհական գրքերի մասին է»: Միստէր Բիչէրը յուշատետրի օգնութեանը չի ապաւինում, բայց խորհուրդ է տալիս ուսանողներին այդ եղանակին հետևելու. «Գլխաւորապէս, ասում է նա, պէտք է խորասուզուել կարդացածի մէջ». այդ դէպքում ոչ մի գիրք ձանձրալի չի երևայ:

Հանգուցեալ Վիլիամ Ռիդը՝ Ամերիկացի լաւագոյն բէլէտորիստներից մէկը, իրաւացի կերպով է խօսում տպագրական հատուածների մասին, որ յարմար է գալիս նաև յուշատետրերին: Ինչպէս որ բժշկի առանձասենեակում պատրաստի պահուում են վիրաբուժական զանազան գործիքներ, որոնք ծածկուած են կողմնակի մարդկանց աչքից, այնպէս էլ հեղինակի կամ պերճախօսի գրադարանում կայ մի սրբազան անկիւն լի զանազան նկատողութիւններով, արտագրութիւններով և ստուգիչ բառարաններով: Այսպիսի ժողովածուներից սովորաբար օգտուում են ուսանողները իրենց շարագրութիւնների համար ամեն տեսակ մակագրութիւններ հանելու, որպէս զի ցոյց տան թէ չափազանց շատ են կարդացել: Այսպիսի եղանակն անօգուտ է: «Այդ տեսակ ծանօթութիւններն, ասում է բանաստեղծը, անդարձ կորած ժամանակն են ցոյց տալիս»: Փոխ ա-

ռած հատուածներից կազմուած շքեղ պատկերաւոր շարագրութիւնները խորութիւնից զուրկ, վայրիվերոյ խելքի են ապացոյց և փորձուած քննական հայեացքը հեշտութեամբ որոշում է այդպիսի մտքերը ինքնուրոյն ստեղծագործութիւնից: Ժողովածուներն ու բառարանները սեպհական մտածողութեան տեղ բռնել չեն կարող. նրանք յիշողութեան համար լոկ օժանդակ միջոցներ են: Նոյն նշանակութիւնն ունին և յուշատետրերը. նրանք մտքի ստեղծագործութեան փոխարինել չեն կարող, նըրանք ձեռնհաս են միայն հաստատել և զինել միտքը»:

Մասաչուզէտի արհեստագիտական դպրոցի ուսուցչապետ Գ. Ատկինսօնը ընթերցանութեան վերաբերեալ մի դասախօսութեան մէջ համակրանքով է խօսում յուշատետրերի վերայ: «Դասախօսութիւնս չեմ կարող ամփոփել, ասում է նա, առանց մի փոքրիկ գործնական խորհուրդ տալու ձեզ. նաւապետ Կէտլէից օրինակ առէք. մի միտք յղանալիս իսկոյն ուշատետրի մէջ առէք. սրամիտ ծերունի Քոմաս Ֆուլիէոն ասում է. «Ձեր ծանօթութիւնները հաւասար բաժին արէք ձեր յիշողութեան և յուշատետրի մէջ. վերջինս հնարաւորութիւն կտայ ձեզ ամբողջ ծանօթութիւնների ահագին խումբ կազմել, երբ նրանց պահանջ զգար»: Այս խօսքը մի քանի տարի յառաջ արտագրել եմ և ի միջի այլոց պահում եմ իմ յուշատետրում: Բանը նրանում չէ թէ ինչ և ինչպէս պէտք է կարդանք, այլ թէ ինչպէս պէտք է խորհենք կարդացածի վրայ: Ընթերցանութիւնը վառելիք է, միտքը կրակ, որ ընդունակ է այրել այն ամեն՝ ինչ որ վառուղի նիւթ է պարունակում: Մենք չենք կարող ամեն ժամանակ նախատեսել թէ որ աղբիւրները յարմար այրուող նիւթ կտան մեզ: Երբեմն մեզ համար անհրաժեշտ տեղեկութիւնները անսպասելի կերպով պատահում են մեզ լրագրեկութիւնները անսպասելի կերպով պատահում են մեզ լրագրերի սիւնակների մէջ կամ մի գրքում, որ վաղուց ի վեր մուսացութեան մոխրով ծածկուած է եղել: Երբեմն ամենադատարկ խօսակցութիւնները կարող են մտքի սնունդ լինել: Բարձր կրթութիւն ստացած բանասէր Լօրդ Ստրանգֆօրդը բաւակախութիւն էր գտնում այն անունների ստուգաբանութեանց մէջ, որոնք պատահում էին երկաթուղիների ցուցակներում: Սակաւունակութեան տէր մտքի համար, ընդհակառակն, մի ամբողջ գրադարանն էլ կարող է անպտուղ անապատ երևալ: Ձեզ հետաքրքրող առարկային վերաբերեալ բոլոր տեղեկութիւններն և մտքերը մի տեղ ժողովեցէք և պիտի գարմանաք այն կարգի և հետևողականութեան վրայ, որով նրանք տեղ կբռնեն ձեր մտածողութեան մէջ և կը հարստացնեն նրան: Այս է ինքնա-

կրթութեան ուղիղ հնարը, եթէ լոկ մեքենական աշխատանք չգառնայ: Այսօրեղ անհրաժեշտ է մտքի գործունէութիւնը, առանց սրան նոյն իսկ ընթերցանութիւնը լոկ զուարճութիւն կգառնայ, Անհրաժեշտ է նոյնպէս մի որոշ եղանակ մշակել: Ես ինքս գրականական յուշատետր եմ պահում. ամեն օր գրում եմ այն ամեն, ինչոր հետաքրքիր է երևում ինձ և ազատ ժամերում ընթերցանութեանս ու գիտողութիւններիս արդիւնքները կարգի եմ բերում»:

Իբրև ամփոփումն այս գլխի ես Չարլս Դերֆիի խօսքերն եմ յառաջ բերում նոյն նիւթի մասին. «Յուշատետրն, ասում է նա, գրականութեամբ պարապող մարդկանց համար նոյն է, ինչ որ հաշուէգիրքը՝ վաճառականների համար. նա օգտակար է միայն այն դէպքում, երբ կարգով է յառաջ գնում և ամեն ժամանակ միևնոյն նպատակին է ձգտում: Հաշուէգրքի մէկ երեսը կարող է ամբողջ գործի ընթացքը պարզաբանել, այդպէս էլ յուշատետրում խիստ կարգ ու կանոն պիտի պահուի ստուգութիւնների յարմարութեան համար: Գրական գործիչներից շատերը, ժամանակի սղութեան պատճառով, սահմանափակուում են միայն ակնարկներով և ուրուագծերով առանց որևէ կարգաբանութեան: Ժամանակ անցնելուց յետոյ նոյնիսկ իրենք չեն կարողանում որոշել այն խառն ի խուռն, երբեմն էլ իրար հակասող նիւթերը:

Իարձեալ մի քանի խորհուրդ, որոնք փորձերից են հանուած: Յուշատետրերը շատ փոքր պիտի չլինին, որ իրենց քանակովը դժուրացնեն գործը և ոչ էլ այնքան մեծ, որ գարձեալ անյարմար է: Իւրաքանչիւր տետրը թուագրած երեսներ պիտի ունենայ և յաջորդական համար: Ամեն մի նկատողութիւնը ստորագծած վերնագիր պիտի ունենայ, որոնց մէջտեղում մի քանի բաց տող. չպէտք է մոռանալ որ վերնագիրն անշուշտ այբբենական կարգով պիտի լինի, որպէս զի ստուգելիս կարելի լինի աչքի անցնել գրքոյկները ինչպէս մի շարագրութեան յաջորդական հատորների շարք: Գրականութեան կամ նրա մի ճիւղին նուիրուած մարդկանց համար, այս ձևը պէտք է փոխուի մանրամասնութեանց ներմուծութեամբ. այբբենական ցանկը շուտով կորցնում է իւր կարգը, իսկ արտագրութիւններն ու նկատողութիւններն՝ իրենց յարաբերական տեղը.

Այս անյարմարութիւնից խուսափելու համար առաջարկուում են յուշարար տոմսակները՝ նրանց միշտ կարելի է կարգի բերել, երբ որ նոր նիւթ հաւաքուի: Հասարակ այբ-բենա-

կան ցուցակում չի կարելի շարունակ վերնագրեր աւելացնել, որով բազմազան և անխտիր կդառնան նրանք: Իսկ տոմսակներն, որ հաստ-թղթից են կտրատուում, դրուած են մի արկղի մէջ և բաժանուած են գլխագրերով, որոնք գրուած են տոմսակի աչքի ընկնող ծայրում, ամենալաւ և շատ կողմից յարմարութիւններ ունեցող այբ-բենական ցուցակ են կազմում:

Այդ տոմսակներն երկու բթաչափ լայնութիւն և հինգ բթաչափ երկարութիւն ունին: Տոմսակների այս եղանակը կարող է ամեն առարկայի և նրանց վերնագրերի համար յիշատակարանի տեղ բռնել. նա նշանաւոր ծառայութիւն կարող է անել գիտութեան որևէ ճիւղի ուսումնասիրութեան կամ գրականութեան ասպարիզում:

ՃԱՇԱԿԻ ՉԱՐԳԱՅՈՒՄՆ.

Ճաշակն անտարակոյս զարգանում է. այս մի անհերքելի ճշմարտութիւն է, որ ոչ մի ապացոյցի կարօտ չէ: Սակայն մի քանի ընթերցողներ կասկածում են այս բանում, «Ես բանաստեղծութեան ճաշակ չունիմ» ասում է մէկը, «Պատմութեան ընթերցումից ոչ մի բաւականութիւն չեմ գգում» նկատում է միւսը. «Կենսագրութիւնները հիանալի բաներ են, բայց նրանցից ոչ մէկը մինչև վերջը ես երբէք չէի կարող կարդալ» բացականչում է երրորդը. «Ես հաւատացած եմ, ասում է մի ուրիշը, որ վալտէր Սկոտն և Ժորժ Էլիոտն աւելի օգտակար են քան Ջէմսն ու միսս Բրէդդօնը, բայց իմ ճաշակովս, ես վերջիններին եմ գերադասում»: Այսպիսի նկատողութիւններ շատ են լուծման կազմակարգները, որոնք ուզում են ազդեցութիւն գործել ընթերցանութեան ճաշակի վրայ: Այս ազդեցութեան հնարաւորութիւն մերժողները մոռանում են, որ բնութեան մէջ ամէն ինչ աճման և կատարելագործութեան է ենթակայ. նրանք կարծում են թէ գրական ճաշակը մի անփոփոխ բան է, թէ նրան փոփոխել չի կարելի, ինչպէս որ երկրի բնակիչը լուսնի վրայ տեղափոխուել չի կարող:

Լօրդ Լիտտօնը, որին ես անաչառ հեղինակ էլ չեմ համարում, որին կարելի է ամեն ժամանակ դիմել կեանքի կասկածաւոր խնդիրների որոշման համար, այնուամենայնիւ ճաշակի զարգացման վերաբերութեամբ իւր վիպասանութեան հերոսներից մէկի բերանում հետևեալ խօսքերն է դրել թէ՛ առողջ դատողութիւնը և լաւ ճաշակը առողջ մտածողու-

թիւնից և առողջ վարձունքից են ստացուած. վերջիններն էլ արդիւնք են ինքզինք մշակելուն և ոչ բնածին խառնուածքի: «Առողջ իմացականութիւնը, ասում է նա, բացառապէս մտքի սեփականութիւնը չէ, այլ մտաւոր և բարոյական ընդունակութիւնների հաւասարակշռութիւնն է: Մոլի մարդիկը, որոնք գերուած են իրենց կրքերից, յաճախ հանճարաւոր են լինում, բայց կեանքի մէջ շատ քիչ է պատահում, որ առողջ իմացականութիւն ունենան. այդպիսիները երբեմն փայլուն արդիւնքների են հասնում՝ բայց միայն պատահականութեան շնորհիւ: Կեանքի ուղիղ, ազնիւ ճանապարհով ընթացող մարդը աւելի օգտակար անձնաւորութիւն է թէ իւր, թէ այլոց համար, քան հանճարով օժտուածը: Այդ տեսակ մարդու համար ասում ենք թէ առողջ իմացականութիւն, ուղղամտութիւն, զէպի իւր անձն յարգանք և անձնուրացութիւն ունի: Հազարաւոր փորձանքները, որոնց միջից յաղթանակով է դուրս գալիս նա, փորձաքար են նրա ազնութեան և մարդկային բարդ բնաւորութեան ուրիշ գանազան կողմերի: Այս տեսակ մարդիկ դժուար թէ առողջ զատողութեամբ օժտուած լինէին, եթէ ջանքեր չանէին ազատ պահել իրենց անձը նախանձի հաշոյ ոգուց, սնափառութիւնից և ուրիշ մոլերեցնող հոգեկան զրգումներից: Հետևաբար առողջ իմացականութիւնը վերացական գաղափար կամ եզակի տաղանդ չէ. նա ուղիղ, պայծառ մտածողութեան արդիւնք է և զանազանում է փաստաբանի կամ դատախազի նրբամտութիւնից այնպէս, ինչպէս Սոկրատէսի փիլիսոփայութիւնը Գորգիասի պերճախօսութիւնից: Ինչպէս որ անձնական յատկութիւնների ամբողջութիւնը հասկացողութիւն է տալիս մարդու մասին այնպէս էլ նոյնանման յատկութիւններով օժտուած ամբողջ մի խումբը գաղափար է տալիս մի ամբողջ ազգի մասին: Անգլիան յայտնի է իւր առողջ խոհականութեամբ, բարեխղճութեամբ՝ գործնական յարաբերութեանց մէջ, սիրով՝ արդարութեան և արդարադատութեան մէջ, համեմատաբար սակաւ յանցագործութեանց մէջ մայր ցամաքի համեմատութեամբ, եռանդով և տոկունութեամբ՝ ձեռնարկութիւնների մէջ. այս բոլոր յատկութիւնները համարձակ և առողջ կազմուածքի պտուղներ են»:

Լօրդ Լիտտօնի՝ տպաւոր անգլիացուն վերագրած համարձակ և առողջ կազմուածքը անխոնջ կերպով ձգտում է զէպի լաւը, զէպի այն՝ ինչոր կարող է բարձրացնել և ոչ ստորացնել: Այդպէս է և գրքերի ընտրութեան նկատմամբ: «Ահնայտունի ճշմարտութիւն կարելի է համարել, ասում է Պօտտէր եպիսկոպոսը, որ մարդկանց մտքի մակերևոյթը նրանց կարգացած

գրքերից բարձր լինել չի կարող: Եթէ մարդ չի ձգտում աւելի վսեմ ընթերցանութեան, նշանակում է թէ նա ի նկատի չունի ազգել իւր մտաւոր ընդունակութիւնների զարգացման վրայ»: Նախագահ Պօտտէրն ասում է. «Ոգևորութիւնը, հանճարեղութիւնը, անձնական ճաշակը դեռ ապացոյց չեն ինքնաճանաչութեան. եթէ հանճարեղութիւնը մարդու բնաւորութեան մէջն է, այն ժամանակ նա ինքնագիտակցութեամբ կարող է իւր անհատական կատարելութեանը հասնել»: Ով որ մտառութեամբ է կարգում, նա կիմանայ թէ ինչ վիճակի մէջ է իւր մտաւոր զարգացումը և ժամանակով ինչի կարող է հասնել: Իւր միտքը վարժելով նա կաշխատի մաքառել իւր ախտաւոր կրքերի հետ և փոխել նրանց բարձր զրգումներով:

Մենք պիտի սովորենք ճանաչել գրքերն այնպէս, ինչպէս սովորում ենք ուրիշ առարկաները ճանաչել: «Ով կարող է լաւ գրքերի արժանիքը գնահատել, բացականչում է ուսուցչապետ Ատկինսօնը, մտքի այս նաւերի արժանիքը, ինչպէս որ սրամտութեամբ անուանում է նրանց Իէկօնը, որոնք շրջում են ժամանակի ալիքների վրայ և իրենց թանկագին բեռը խնամքով մէկ սերնդից միւս սերնդին են տանում: Այդտեղ ընտիր գլուխները անցեալ ու ներկայ ժամանակի իմաստութիւնն են յանձնում մեզ, որ բազմամեայ մտածողութեան արդիւնք է. երևակայութեան առաջին շողերը տիեզերքի գեղեցկութիւններն են լուսաւորում մեզ համար, բնաւորութիւններ և տիպեր պարզաբանում, որոնց իզուր ենք աշխատում նմանել: Այս բոլորը գրքերիցն է իմացուում և այս գիտութիւնը կրթուած մարդու նախանձելի արտօնութիւնն է»:

Այս տեղեկութիւնները ոչ պատահմամբ քաղել կարող ենք և ոչ մեր գլխով անցած գնացած փորձերի վրայ հիմնուելով. «Երբ ես մարդ գարձայ, ասում է Պօրոս առաքեալը, իմ բոլոր մանկութիւնս մերկացայ»: Հէնց այդպէս էլ իւրաքանչիւր խոհուն ընթերցող պիտի դէն ձգէ մանկական սովորութեամբ հրապուրուել առասպելական պատմութիւններով, պատկերներով, մոռացութեան տալով գիտութիւն և մտքի զարգացումն ձեռք բերելը: Ընթերցողներից շատերը, եթէ ոչ բոլորը, մանկական հասակի սահմաններից չեն ելնում. լինում է և այսպէս որ մանկութեան օրերում նրանք աւելի շատ են կարդացել քան հասակն առած ժամանակը:

Ոչ միայն գրքերի ընտրութեան այլ նոյն խիւ ընթերցանութեան մէջ պէտք է կարողանալ ընտրել գրքից այն, ինչ որ աւելի վսեմացնում է միտքը: Այստեղ մի քանի շահեկան խոր-

հուրդներ յառաջ կրերեմ, որոնք տպուած են Բօստօնի «Գրականական աշխարհում»։ «Գրեթէ ամեն մի մանդարար նիւթ թոյնի մի մասնիկ է պարունակում իւր մէջ. մեր կազմուածքի ամենանշանակոր պաշտօններից մէկն էլ այն է, որ օգտակարը ինամբով իւրացնում է և վնասակարը մի կողմն է ձգում։ Դեղձը կապտաթթուոյթ է պարունակում, թրթնջուկը թթուաշու-թիւն. թէյը, տոմաթէսը, գետնախնձորը այնքան վնասակար նիւթեր են պարունակում, որ նրանց գործածութիւնը մահա-բեր պիտի լինէր մարդու համար, եթէ նրա կազմուածքը մար-միններն օգտակար և վնասակար մասերի լուծելու զօրութիւ-նը չունենար։ Եթէ մարդս օժտուած չլինէր ինքնապաշտպա-նութեան ընդունակութեամբ, նա չպիտի կարողանար իբրև կերակուր գործածել կէսն անգամ այն նիւթերի, որոնք այժմ ոչ միայն մտուց են տալիս նրա մարմինն այլ և պարարում են նրա քիմքը։ Սրա նման մի բան էլ պահանջուում է մարդուց ընթերցանութեան գրքեր ընտրելիս։ Խելքը՝ փիղիքական գոր-ծարանների նման, առաջարկուած կերակուրներիցը միայն օգ-տակարը, հաճոյական և անվնասն ընտրելու ընդունակութիւնը պիտի պահպանի և միևնոյն ժամանակ դէս ձգի այն ա-մենը, ինչ որ վնասակար և անօգուտ է։ Գրականութեան մէջ սակաւ կպատահին այնպիսի գրքեր, որոնց մէջ երկու տարրը՝ վատը և լաւը միասին չլինին։ Պատմութիւնը վտանգաւոր օրի-նակներով լիքն է, բանաստեղծութիւնը բոբբոբոզ պատկերնե-րով առատ, զրոյցներն ու վիպասանութիւնները շատ անգամ անբարոյականացուցիչ ազդեցութեամբ են երևան գալիս։ Բայց սրանով հանդերձ եւ վատ գրքերը լաւութեան մի մասն են պարունակում. այնտեղ կարելի է գտնել ուշադրութեան արժա-նի պատկերներ, նմանելու արժանի օրինակներ։ Փորձուած մանկավարժները եւ տեսութեամբ և գործնականութեան մէջ ի-րենց բոլոր ուշքը պիտի դարձնեն ընթերցողներին սովորեց-նելու գրքերից հանել լաւը, ճշմարիտը և զեղեցիկը, իսկ վատը, կեղծը և խոտելին անուշադիր թողնել։ Այս եղանակն իւրաց-նելով երիտասարդները գոնէ ապահոված կլինին իրենց վնա-սակար գրքերի ազդեցութիւնից և մտաւոր զարգացման յաջող ճանապարհը կըռնեն»։

Մեծ հեղինակները միևնոյն ժամանակ և օգտակարներն են. նրանց մէջ երբեմն պատահող թոյլ տեղերը, կոպիտ ոճը, սեթևեթութիւնը կամ չարութիւնը միայն պատահական բաներ են։ Օրինակելի հեղինակները կարդալիս դէս ձգելու քիչ բան է լինում, գրեթէ բոլորը պէտք է իւրացնել։ Մեր կեանքի ա-

մենալաւ վայրկեաններում բարձրանում, ինչպէս ասում են, նրանց մակերևոյթին ենք հասնում. նրանց մեծութեան շուքը և մեզ վրայ է անդրադառնում, որովհետև մենք գիտակցում ենք այդ մեծութիւնը. այդ գիտակցութիւնը մեր փառքն ու պարծանքն է, նա մեր սեփական ոյժերի և ձիրքերի չափն է։ Էմէրսօնը առանց չափազանցելու ասում է. «Մեր քննադատու-թիւնն աղքատ է. մեծ մարդիկ քիչ ունինք, մնացածները մեզ համար միջակութիւն են։ Քննադատութիւնը Հոմերոսի, Շէկսպիրի, Նիւտօնի, Սոկրատէսի նմաններինն է միայն գնահատել, բայց մեր միտքը իւր ծաղկման ամենալաւ վայրկեաններում յուզուում է այդ յափշտակութեան դէմ։ Սոկրատինը՝ Սոկրա-տին տալով, Պղատոնինը՝ Պղատոնին, Սէն-Ջօնինը՝ Սէն-Ջօնին, չպէտք է մոռանալ և ուրիշներին։ Լաւ ընթերցողը ամեն մի գրքում կարող է և լաւ տեղեր գտնել. երբեմն նա կարծում է թէ այդ տեղերը բացառապէս իրեն համար են գրուած»։

Գիրքը հեղինակի պատկերն է և եթէ ընթերցողին յա-ջողուում է մի գիրք ընտրել կամ նոյն իսկ մի գլուխ այն գըր-քից, այն ժամանակ նա միաւորուում է հեղինակի հոգեկան կե-նաց ամենալաւ կողմի հետ, կենդանի համակրութիւն է գգում դէպի նրա հերոսը և ոչ թէ դէպի որևէ բացասական անձնա-ւորութիւն, բուն հետաքրքրութեամբ հետևում է մտքի հսկա-յին և ոչ գաճաճին, որով և ապացուցանում է թէ որչափ է զարգացել իւր սեպհական ճաշակը։

Վիկտօր Հիւգօն իւր շարագրութիւնների հրատարակու-թեան նախաբանի մէջ շատ խորիմաստ կերպով ասում է. «Հե-ղինակի գրած իւրաքանչիւր գիրքը ինքն հեղինակն է, գիտակ-ցօրէն թէ անգիտակցօրէն՝ այդ այդպէս է։ Իւրաքանչիւր գըր-քից, լինի այն վատ կամ շատ լաւ, մի պատկեր է ձևանում և այդ պատկերը նոյն ինքն հեղինակն է. եթէ պատկերը փոքր է թող պատիժ լինի նրա համար, եթէ մեծ՝ վարձատրութիւն։ Տրովադայի պաշարոււմը կարդալով մենք մեր առաջն ենք տես-նում Աքիլլէսին, Հեկտորին, Ուլիսին, Աեաքսին, Ագամեմնոնին. մենք գգում ենք նրանց մեծութիւնը և այդ մեծութիւնը հեղի-նակինն է։ Վեր առնենք՝ ընդհակառակն, Ջօյիլին և տեսնենք թէ ինչ թողեց նա իրենից յետոյ։ Նա գրամատիկոս էր, մեկնաբան և նրա իւրաքանչիւր տողը կվկայէ թէ Ջօյիլի գը-րածն է։ Բայց երբ ձեր առջև բաց դրած է «Իլիականը» գուք դարբերի ձայներն էք լսում, որ Հոմերոսի անունն են տալիս։ Սրա նման մի բան էլ յառաջ է գալիս Էսքիլէսի, Արիստոֆա-նի, Հերոդոտի, Պինդարի, Թէոկրիտի, Պլաթոսի, Վիրգիլիոսի,

Հորացրոսի, Յորնաղի, Տակիտոսի, Դանտէի ընթերցումից: Փոքր հեղինակների համար էլ կարելի է նոյնը ասել. բայց ինչ կարիք կայ նրանց յիշել: Գրքերը գոյութիւն ունին այնպէս, ինչպէս ստեղծել են նրանց հեղինակները, լինին պատմական, փիլիսոփայական թէ վիպական, նրանք միշտ նոյնը կմնան ինչպէս որ են իսկպպէս: Բայց սրանով հանդերձ, նրանցից փոքր ինչ հեռու նրանց ստուերն է երևում, այսինքն հեղինակի պատկերը: Յարատև, փոթորիկներով և ձախորդութիւններով լի կեանքի վախճանին միայն յայտնուում է այս ճշմարտութիւնը մտքի մշակի առաջը: Հանգէս է գալիս պատասխանատուութեան գիտակցութիւնը, որ սերտ կապուած է անսահման ազատ գործողութեան իրաւունքի հետ: Այդ տողերը գրող մարդը հանգիստ է զգում իրեն ինչպէս յաւիտենականութեան մէջ. ի պատասխանի այն հարցերի որ տգիտութիւնը կարող է առաջարկել, նա պատասխանում է՝ ես իմ իմացականութեան պտուղներն եմ տալիս: Եւ եթէ ամեն ոք մարդը սրտով այսպիսի պատասխան տայ, այդ բաւական է հասկանալու թէ նա երկրաւոր կեանքի ամբողջութիւնն զգում է. ամբողջութիւն, որի մէջն է ամփոփուած այն, ինչ որ պարզ և աւելի խորիմաստ է: Իմ հեղինակութիւններիս արժանիքի գնահատութիւնը, որոնք իրենց ամբողջ լրութեամբ հասարակութեան առջնն են, ապագայի դատաստանին է մնում: Բայց հեղինակին յատկապէս ուրախացնում է մի հանգամանք, որ ներկայումս էլ, կարծիքների շրջադարձութեանց և կանխակալ հայեացքների զօրեղութեան մէջ անգամ, նրա գրուածքների ընթերցումն անկարելի է առանց հեղինակի գնահատութեան:

Ինչպէս նախնիաց գլխումն արդէն ասացի, ճաշակի գործացումն չի արագանալ, այլ ընդհակառակն կդանդաղի, եթէ ընթերցողը լաւ համարէ այն, ինչ որ իրեն դուր չի գալիս: Անկեղծութիւնն ու բարեխղճութիւնն անհրաժեշտ են թէ ներկայում, երբ ճաշակը զարգացած էլ չէ, թէ ապագայում, որպիսի վսեմ նպատակի էլ ձգտելու լինինք: Եւ յիշուի ինչ օգուտ եթէ մենք խաբենք թէ մեզ և թէ ուրիշին: Անհրաժեշտ է ճաշակի անկումը բարձրացնել՝ դժուար չէ խաբերայութիւնն ու ձևանալը երևան հանելը. որչափ ճարտարութեամբ են գործադրուում նրանք, այնքան աւելի վնաս են բերում: Անմեղ տգիտութեան օգնել դժուար չէ, բայց երբ երևան են գալիս յիմար և անմիտ ստութիւնն ու կեղծիքը՝ դժուար է: Ժամանակակից հեղինակներից մէկը, գրականական ճաշակի կեղծութեան մասին խօսելով այն կարծիքն է յայտնում թէ ստախօսութեան

սովորութիւնը գրական պարագմունքների մէջ ընդհանրական երևոյթ է: Սովորել են գովարանել այնպիսի հեղինակութիւններ, որոնց հետ շատ քիչ ծանօթ են, որոնք նոյն իսկ միանգամայն անհետաքրքիր կարող էին դառնալ աւելի մօտիկից ծանօթանալիս: Մի քանի օրինակելի գրքեր խոր կերպով արմատ են քցել անգլիական հողի մէջ. մեր մեծամասնութիւնը մեծ պատկառանքով ծոնկ է իջնում նրանց առաջ և իւր յարգանքը դէպի նրանց կռապաշտութեան է հասցնում: Դրանք անշուշտ այն հեղինակութիւններն են «առանց որոց ոչ մի կյաննաւոր գրադարան լրիւ համարուել չի կարող», ինչպէս որ սովոր են յայտարարել գրքերի աճողախօսութեան ժամանակ: Դրական երկերին կեղծ ու պատիր երկրպագութիւն մատուցանելու պատճառը շատ յաճախ անարժան երկչոտութիւնն է: Ընդհանրապէս սիրուած մի երկ վատաբանող համարձակ մի մարդ յիմար կոչուելու վտանգին է ենթարկում իրեն: Բաւական է միայն հասակն իմանալ այն մարդու, որ ասում է թէ «սաստիկ սիրում եմ գրքեր, բայց ժամանակ չունեմ կարդալու» որպէս զի կարելի լինի գուշակել թէ ինչ կուռքեր ունի նա գրականութեան մէջ: Դրանք նրա պատանեկութեան կուռքերն էին և նոյնը մնացին, որովհետև նա ուրիշը չգիտէ: Սակաւ է պատահում որ այդպիսի մարդիկ գրականութեան մասին կարծիք յայտնեն. եթէ յայտնում էլ են ակամայից միայն. նրանք անվնաս և մաքրասիրտ են: Հասարակաց միտումն է ոչ միայն գովել սիրուած երկերը, որոնց չեն էլ կարդացել այլ և ազնիւ զարոյթ արտայայտել դէպի այն ընթերցողները, որոնք կարդացել են այդ գրքերը և բաւականութիւն չեն ստացել: Այս յօդուածի հեղինակը շարունակութեան մէջ խօսում է «գրականութեան մէջ տիրող կեղծաւորութեան վրայ» ասելով թէ շատերն անկարող են և չգիտեն գնահատել այն շարադրութիւնները, որոնց հաւանում է հասարակութիւնը: «Մասամբ հէնց սրանումն է թագնուած պատճառը, ասում է նա, թէ ինչու շատ հանճարեղ երկեր առանց կարգացուելու են մնում: Երբեմն աշակերտը գովուած գրքի ընթերցումն սկսելիս, ամէն մի տողի մէջ անզուգական գեղեցկութիւններ է որոնում և շատ պատճառով որոնածը չգտնելով եւ, ի միջի այլոց՝ նրա համար որ երբեմն էլ գեղեցկութիւն չի լինում գրքում, ընթերցանութիւնն ընդհատուած է համոզուելով, որ իրեն խաբել են կամ թէ ինքն ընդունակ չէ գնահատել գեղեցկութիւնը. բայց նա իւր թէ մէկ և թէ միւս ենթադրութեան մէջ սխալուում է: Այլոց կարծիքներովը զեկավարուելու սովորութիւնը միշտ կորստաբեր ազդեցութիւն է

գործում, որովհետև խլում է մարդու պատուի մասնը և մտջի անկախութիւնը և ճաշակը լուր մեքենական է դարձնում: Այս կեղծ մեքենական ճաշակն անշուշտ չի կարող շահաւէտ լինել ոչ հասարակութեան և ոչ անհատին: Այդ բանի դէմ յիշեալ հեղինակը հակազդեցիկ միջոց է համարում հետևեալը. «Հարկաւ, ոչ ամեն ոք կարող է իւր սեպհական կարծիքն ունենալ ընդհանրապէս, մանաւանդ գրականութեան մէջ. սակայն ամեն ոք կարող է խոյս տալ այլոց կարծիքներն արտայայտելուց, որոնք իրեն չեն պատկանում»:

Եւ յիշուի այս ելակետից աւելի լաւ բան չկայ նրա համար, ով որ ուզում է իւր ճաշակը զարգացնել: Մի գովէք ինչ որ ձեզ չի դուր գալիս. մի ասէք թէ գիտենք, ինչ որ չգիտէք. մի բաւականացէք ձեր ճաշակով և ձգտեցէք միշտ բարելաւելու այն. մի յուսաք թէ դուք գնահատում և հասկանում էք ամենայն ինչ՝ առանց բացառութեան, ինչ որ գրել են մեծ մարդիկ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ.

Ոմանք մեծ հաճոյք և օգուտ են տեսնում բանաստեղծական երկերի ընթերցանութեան մէջ. կան էլ որ ժխտում են բանաստեղծութեան արժանիքը, թէև գրականութեան միւս ճիւղերից շատ կարգացած մարդիկ են դրանք:

Պէտք է արդեօք բանաստեղծական երկերի ընթերցանութիւնը պարտք համարել. պարտաւոր են իրենց ճաշակը դէպի բանաստեղծութիւնը զարգացնել նրանք, որոնք բնական հակամէտութիւն չունին դէպի նա. թէ պէտքէ բաւականանալ այն գիտակցութեամբ, որ ոչ ամենքին է տրուած բանաստեղծական երկերի ըմբռնումն և գնահատութեան կարողութիւնը:

Բառի բացորոշ իմաստով սէր ունենալ դէպի բանաստեղծութիւնը չի կարող պարտաւորական լինել. բայց հարկաւ ցաւալի կլինէր, եթէ որ ընթերցողը զրկէր իրեն գրականութեան այդքան ընդարձակ և հաճելի մի հատուածից: Բանաստեղծական ճաշակի բացակայութիւնը երևակայելու ոյժի պակասութեան նշան է, և ի՞նչ է կեանքը առանց երևակայութեան, առանց պատրանաց: Բանաստեղծական երկերի ուսումնասիրութիւնն ու ընթերցանութիւնը, ասում է Պօրտէր նախագահը, զարգացնում են երևակայութիւնը և՛ հետևաբար նպաստում են մտաւոր զօրութեանց աճման: Անհնարին է որ բանաստեղծական երևակայութեան արտադրած երկը կարգալիս անմասն մնայ նաև ընթերցողի երևակայութիւնը. բանաստեղծութիւն

կարգալ նշանակում է երևակայութեան մէջ վերարտադրել այն պատկերներն ու տեսարանները, որ բանաստեղծն է ստեղծել:

Եթէ ընթերցողը նկատում է, որ իւր մտածողութեան սովորական գործողութեանց մէջ քիչ տեղ է բռնում իդէալականն ու բանաստեղծականը, նա ցաւելով պիտի խոստովանի, որ Արարչի լաւագոյն պարգևներից մէկը խոյս է տալիս իրենից. պարգև, առանց որի նրա մտաւոր կարողութիւնները հետզհետէ ծիւրում են. առանց որի կեանքն օրաւոր մոայլուում, դաժանանում է: Մանուկները բանաստեղծներ են. նրանք կոտրած խեցիներից, պատուտրած և քթերը բեկուած խրճիկներից առասպելական աշխարհ են ստեղծում: Երևակայութեան զօրութիւնը անբաժան է նրանցից առօրեայ կենաց զբաղմունքների մէջ. դուք չպէտքէ հալածէք նրանց սովորութիւնը, որով իրականը իդէալականի են վերածում. հակառակ դէպքում դուք վնասաբեր հարուած կտաք նրանց ինքնուրոյն գոյութեան և բնաւորութեան: Հարկաւ կան բանաստեղծական ընդունակութիւնից զուրկ մարդիկ, որոնք անկարող են զարգացնել իրենցում այդ ունակութիւնը. բայց այդ թերութիւնը, եթէ յիշուի կայ այդպիսի թերութիւն, ցաւ կարող է պատճառել իբրև մտաւոր կուրութիւն և խլութիւն, որ մարդուց ծածկում են վայելչութիւնների մի ամբողջ աշխարհ:

Փանտաստիկական բնաւորութիւն ունեցող շատ երկեր կան գրականութեան մէջ, որոնց սակայն, բառի նեղ իմաստով բանաստեղծական կոչել չի կարելի. բայց ով որ ընդունակ է գնահատել Հաուսթօնի կամ Րիխտէրի գեղեցկութիւնները, նա աւելի մեծ հաճոյքով կկարգայ դիցուք Շիլլերի «Զանգակի երգը»:

Մենք պէտքէ լուսաբանենք և ինքերքուստ զգանք երկի բանաստեղծական ոգին, ինչ ձևով էլ նա արտայայտուած լինի: Բայց ի՞նչ է նշանակում բանաստեղծական ոգի: Այդ բանը որոշելու համար փորձեր շատ են եղել, բայց մենք ստիպուած ենք Շիլլի խօսքերով ասել «Առ ոգին բնութեան օրհներգից» թէ՛ «ամենքը քեզ զգում են, բայց դեռ ոչ ոք քեզ չի տեսնում». կամ նրա խօսքերով ով որ Շիլլի նման է բնորոշում բանաստեղծութիւնը (նոյն պօէմայի մէջ). «Երկրի լուսաբեր, ուր էլ որ դու թափանցում ես, ամէն ուրեք մթին ձևերը պայծառ լուսով ես զգեստաւորում»:

Ուսուցչապետ Ատկինսօնի դասախօսութիւնից բանաստեղծութեան վրայ՝ մի բանի խօսք յիշենք. «Ես մտադիր չեմ, ասում է նա, բանաստեղծութիւնը սահմանել, թէպէտ հաճու-

թեամբ մի դասախօսութիւն կկարգայի ձեզ թէ ինչպէս պէտք է կարգալ բանաստեղծութիւն: Արիստոտէլի օրինակով նմանութիւն անուանենք բանաստեղծութիւնը թէ Բէկօնի նման՝ աստուածութեան մասնակցութիւն ենթադրենք նրա մէջ, որովհետեւ նա ընդունակ է վերասլացնել միտքը դէպի ինչ աշխարհ էլ ուզես, մինչդեռ բանականութիւնը զսպում է նրա թօնիչը իրական աշխարհի սահմաններում, կամ ըստ Շէլլի բանաստեղծութիւնը կոչենք «լաւագոյն մտքեր լաւագոյն թարգմանց» թէ Մաթիւ Արնօյլդի հետ անենք թէ «բանաստեղծութիւնը ամենաազնիւ և արտայայտիչ եղանակն է քո մտքերն հաղորդելու այլոց» և կամ «բանաստեղծական արտադրութիւնները ժամանակների ամենալաւ և լիակատար բնորոշումներն են», այս ամենը այն եզրակացութեանն են հասցնում, որ բանաստեղծութիւնը գրականութեան այն ճիւղն է, որ առաւել արժանի է ուսումնասիրութեան և թէ առանց ուսումնասիրութեան նա մեզ սակաւ մատչելի կլինի:

Հետևաբար չենք կարող բանաստեղծութիւնը բնահանգր համարել. նրա ընթերցումն վայրիվերոյ, առանց որևէ իմաստի չպէտք է լինի: Նախագահ Պօրտէրն ասում է թէ «բարձրագոյն բանաստեղծութեան ճաշակը արդիւնք է բարձրագոյն քաղաքակրթութեան»: Այդ քաղաքակրթութեան առհաւատչեայն ամեն մարդի մտքումը կայ, մնում է միայն շրջապատող գանձերի մէջ պատշաճաւոր նիւթը գտնել և ամենայն ջանք գործ դնել նրա վրայ ցանկալի նպատակին հասնելու համար: Մարդ երբ իւր ճաշակը զարգացնելու նպատակն է դնում, պէտք է որևէ բանաստեղծական երկ ընտրէ, մի քանի անգամ կարդալ խորամուխ լինի ընթերցումի իմաստի և նպատակի մէջ: Առանց ուշք դարձնելու սկզբնաւորութեան վրայ, ընթերցողը չպէտք է յուսակտուր լինի լաւագոյն շարունակութեան համար. նա վերջիվերջոյ կթափանցէ հեղինակի միտքը, պատկերներներն և տեսարաններն աւելի պայծառ գոյն կստանան և անզգալի կերպով ոգևորութիւնը կհամակէ ընթերցողին:

Միտտէր Հօշէնը, մէկն առաջին դրամատնատէրերից և քաղաքատնտեսներից, ասում է որ երևակայութեան զարգացումն անհրաժեշտ է այն մարդկանց, որոնք նուիրել են իրենց քաղաքակրթութեան, գիտութեան կամ վաճառականութեան: Ոչ ոք իրաւունք չունի պատճառաբանելու թէ ինքը սահմանափակ հասարակ մարդ է, գործնական կեանքի հոգսերով խեղդուած, որպէս զի իւր երևակայութեան ոյժը զարգացնելու պարտաւորութիւնիցն ազատ համարուի, նա մանաւանդ որ բո-

լոր այն ջանքերը, որ գործ են դրուում իւրաքանչիւրիս մէջ թագնուած երևակայութեան ընձիւղներն աճեցնելու ի գուր չեն կորչում: Ով որ խորապէս է մտածում, ով պայծառ է ըմբռնում ինչոր մտաւոր աշխատութեանց անվարժ մի ուրիշի աչքից փախչում է, նա աւելի լաւ է պատրաստուած երկի գեղեցկութիւններն ըմբռնելու քան նա, որի միտքը դանդաղ, թոյլ է գործում և ուղեղը թմրել է վարժութեան պակասութիւնից:

Բանաստեղծութիւնը ընտրեալների համար չէ միայն, այլ ամենի համար: Ամբողջ աշխարհին յայտնի ոտանաւորները ի շնորհս իրենց ոճի պարզութեան և մտքերի պայծառութեան առանց բացառութեան մատչելի են ամենքին. նրանց արժանիքը դարերով է գնահատուած: Մտքի մթութիւնն ու խրթնութիւնը առաւել ժամանակակից հեղինակներին են յայտնի, մինչդեռ Հոմերոսը, Վիրգիլիոսը, Դանտէն, Չօուէրն և Շէկսպիրը լուսաբանութեան պէտք չունին, Մարկոս Անտօնիոսի նման նրանք արտայայտում են իրենց մտքերն ուղղակի և բացարձակ: Մի ոտանաւոր եթէ պարզ չէ, նշանակում է երկրորդական է և լուրջ ուշադրութեան արժանի չէ: Եթէ բանաստեղծը պարզ չի արտայայտում իւր միտքը և դուք՝ որ ի հարկէ մտաւոր սովորական ձիրքերն ունիք, կարգացածը չէք հասկանում, մեղքը ձերը չէ՝ այլ նրանը: Ինչպէս որ արեգակի լոյսը, օդը, ջուրը ամենքի սեպհականութիւնն են, ճիշտ այդպէս էլ բանաստեղծութիւնը չպէտք է սահմանափակ լինի և միայն քչերի սեփականութիւն:

«Ոճի մաքրութիւնը, ասում է մի հեղինակ, նրանումն է, որ որևէ տեսարանի, բնաւորութեան կամ զգացմունքի նկարագրութիւնն անելիս ընթերցողը կարողանայ թափանցել առարկայի ամենախորը և ոչ թէ մակերևոյթով սահի: Այդպիսի արտադրութիւնները շատախօս չեն. նրանց իւրաքանչիւր արտայայտութիւնը ուղղակի նպատակին է դիպչում: Նման բանաստեղծութեան օրինակ են սաղմոսները և մարգարէութիւնները, Դանտէի ստորերկրեայ աշխարհի պատկերները համեմատած Վերգիլիոսի աւելի արուեստական պատկերների հետ: Նման ոճի օրինակ են նոյնպէս Վօրտսվօրտի բոլոր երկերը, մանաւանդ քնարականներն ու հնչեակները: Նա ունի հարուստ պատկերներ, գծագրուած սակաւ՝ բայց ոյժից խօսքերով: Լաւ ոճի յատկանիշն այն է, որ զօրեղ տպաւորութիւնների հետից չի ընկնում, այլ ի նկատի ունի տպաւորութիւնների ամբողջութիւնը որ ձեռք է բերուում ուրոյն ուրոյն մասերի ներդաշնակ ենթարկումով մի զլխաւոր նպատակի. նրա պատկերաւորութիւնը չա-

փազանցեցրած չէ, ընթերցողի ուշադրութիւնը չի հրաբուրուում պատկերների խայտաբղէտութեամբ և փայլով: Ամէն տեղ ներդաշնակութիւն է տիրում: Արուեստական կանոններով չի կարելի ոճի այդպիսի կատարելութեան հասնել. հարկաւոր է որ բանաստեղծն իւրացնէ իւր առարկան, խորապէս զգայ և այնպէս խորստուգուի նրանում, որ նոյն իսկ ինք զինքն և իւր ոճը մոռանայ և հակիրճ, պատկերաւոր խօսքերով այլոց հաղորդէ իւր հոգու տիսիւնները: Սեթևեթ ոճը բոլորովին այլ է: Բայց անուս և թերուս մարդկանց բազմութիւնը թէ գրականութեան և թէ արուեստների մէջ գերադասում է սեթևեթ, կեղծ ոճը և հեղինակներն ու գեղարուեստագէտները համակերպելով այդ պահանջին, յարմարուում են այդ ճաշակին: Աւելի կըրթուած մարդկանց խղճին է մնում այդ չարիքի առաջն առնելու, սակաւակիրթ ընթերցողների մտածողութիւնը բարձրացնելու և ճաշակը զարգացնելու պարտաւորութիւնը: Շատ զարգացած միտք ունեցող մարդկանց պարզ ոտանաւորն աւելի դուրեկան է: Բանաստեղծն իւր առարկան լուսաբանելուց յետոյ, պէտք է ամբողջովին նուիրուի նրան և առանց ոճի վրայ մտածելու պէտք է հոգայ միայն իրականութիւնը հաղորդել. քանի առաւել սերտ է ձուլուում նա իւր նիւթի հետ, այնքան աւելի պարզ, մաքուր և կենդանի կլինի նրա ոճը: Մի բարոզչի խորհուրդը որ կեանքի համար է տրուած, կարելի է գործադրել և գրական ստեղծագործութեան համար: «Մի նպատակ ունեցէք աչքի առաջ և ձեր խօսքերը համապատասխան կլինին. զգուշացէք սնամիտութիւնից և մի ջանաք ինքնակերպ երևալ. խորհեցէք ինչ որ խօսում էք և խօսեցէք ինչ որ խորհում էք: Երբ մարդ մխուած է իւր նիւթի մէջ և զինուել է խօսքի ոյժով խօսում է հասարակ և պարզ. ոյժը, նազելիութիւնը, երգիծանքն ու պաթոսը իրենք իրենց են հոսում նրա լեզուից. նրա ոճը տիպարն է մտքի, տիպարն է նոյն ինքն հեղինակի»:

Որքան տարբերուում է բանաստեղծական այս օրինակ խօսքը մթին, խճողուած գորովականից: Մի ամսագրի ասած խօսքերը Բայրօնի մասին վերաբերելի է ամեն բանաստեղծի. «Բայրօնն էլ այնպիսի տեղեր ունի, որ քննադատութեան չեն գիմանայ. նրանք աւելի գոգոում են քան հիացնում. և երբ ընթերցողը խիստ է վերաբերուում այդպիսի տեղերին, համոզուում է թէ բացի գոգիւից նրանք ուրիշ բան չթողին նրա հոգու մէջ: Ընթերցողը աղօտ կերպով գիտակցում է թէ կանգնած է մի շատ պերճախօս մարդու առաջ, որ այսպէս ասենք, սաստիկ գոգոում վիճակի մէջ է և թէ ինքն էլ կամայ թէ

ակամայ պէտք է զգայ իրեն այդ դրութեան մէջ»:
 Ծշմարիտ բանաստեղծութիւնն աւելի վսեմ կոչումն ունի, քան հրաբուրելը կամ գոգուելը: Բանաստեղծութիւնը ձայնն է այն ամենի, ինչ որ լաւագոյն է մարդու մէջ, Ո՛չ ամենքը կարող են այդպէս խօսել, բայց ամենքը կարող են լսել և վերընդունել ինչ որ լսում են:

ԹԵՐԹԵԼՈՒ ՀՄՏՈՒԹԻՒՆ.

Գրքերի և նրանց ընթերցանութեան վերաբերեալ ծամծրմած ասացուածներից մինը՝ որ լօրդ Բեկօնինն է, միևնոյն ժամանակ ամենաբանաւորն է երևում. այսինքն. «Կան գրքեր, որոնց կարելի է ճաշակել միայն, կան որոնց պէտք է կլանել, իսկ ամենափոքր մի մասն՝ ծամել և մարսել. ուրիշ խօսքով կան գրքեր, որոնցից կտորներ միայն կարելի է կարդալ, կան էլ որ ամբողջովին, բայց ոչ առանձին հետաքրքրութեամբ և ամենասակաւ մասը միայն ամբողջովին և լիակատար ուշադրութեամբ ու ջանքով»:

Այս խորհրդի կատարումը շատ օգուտ կրերէր: Յիրաւի, ոմանք կարծում են թէ լաւ գիրքը պէտքէ կարդալ անպատճառ առանց ամենափոքր բանն անգամ բաց թողնելու. բայց այդ նոյնքան անմիտ է, որքան ճաշի նստելիս նպատակ դնէինք ուտել այն ամէնը, ինչոր սեղանի վրայ մատուցուի: Ովոր որոշում է կամ ամբողջ գիրքը կարդալ կամ նրանից ոչինչ չկարդալ հաւանօրէն արդէն համոզուած է թէ՛ է՛, գիրք է՛ էլի, թէ՛ և մէջը մի լաւ բան էլ չլինի: Այդ տեսակ ընթերցողների համար աւելի ևս օգտակար է լօրդ Բեկօնի խորհուրդը. նրանք ինքեանք շուտով կհամոզուին թէ իրաւացի ճշմարտութիւն է այն:

Ուշադրութեան արժանի գիրքը գնահատուում է հէնց առաջին հայեացքով. ընթերցողը գրեթէ հոտառութեամբ գուշակում է թէ արդե՞ք իզուր ժամավաճառ պիտի լինի թէ ոչ: Երբեմն նոյնիսկ մի ժամ կամ մի վայրկեանը հերիք է համոզուելու թէ գիրքը պիտանի է կամ անպէտք: Եթէ վատ է և անօգուտ, դուք արագութեամբ թերթելով վերջացնում էք: Թերթելիս թէ որ լաւ տեղեր պատահին՝ կարդացէք, մնացեալը բաց թողէք: Թէ որ ձեզնում կասկած զարթեց զբքի արժանիքի և անարժանութեան վրայ, ձեր ներքին ձայնին ունկնդիր եղէք և նա ձեզ կշնշայ արդեօք ի զուր էք կորցնում ձեր ժա-

մանակը թէ ոչ: Վատ գիրք կարդալիս դժուար չէ համոզուել նրա կասկածելի արժանաւորութեան վրայ, նրա թերութիւններն ամեն մի քայլափոխում աչք են ծակում:

Գիրք թերթելու հմտութիւնը նրանումն է, որ մարդ խոյս տայ գրքի վատ տեղերից. երբ դուք համոզուեցիք թէ գիրքը, կամ որևէ գլուխ վատ են, մի վախենաք ամենայն արագութեամբ քաղել. իսկ եթէ դրա հետ մէկ տեղ եւ անօգուտ է եւ անմիտ, հանգիստ կերպով մի կողմը դրէք, եթէ միայն ինքնեզրդ ունայն զուարճութիւն չէք որոնում: Եթէ գրքի թերութիւնները վարպետութեամբ քողաւորուած են, դուք առաջին նուազ դժուար կարողանաք նկատել, բայց ձեր հոտառութիւնը իսկոյն ձեզ կզգուշացնի, որ դուք գրական վատ հասարակութեան մէջն էք գտնուում:

Այնպիսի գրքեր էլ կան, որոնք ինքն ըստ ինքեան լաւ են, բայց ոչ ամեն ժամանակ և ոչ ամենքի համար օգտակար: Չկայ մի այնպիսի գիրք, որ ամենքի համար անսպայման օգտակար լինի: Ինչպէս արդէն նախորդ գլուխներում նկատել ենք, իւրաքանչիւր ոք իւր ճաշակը, իւր պահանջը պիտի ունենայ. նա չպիտի ենթարկուի այլոց ճաշակին: Ամեն ոք իրաւունք ունի այնպիսի երեսներ բաց թողնել կամ քաղել, որոնց մի ուրիշը գրեթէ բերան է անում: Ամեն մի ընթերցող ինքն իրեն հարց թող տայ, ինչի համար եմ կարդում այս, ինչ՞ շահ կտանամ ես այս ընթերցանութիւնից. չեմ արհամարհում արդեօք մի այլ բան որ կարող էր ինձ օգուտ տալ: Ինչպէս ուրիշ խնդիրներում, այնպէս էլ այստեղ հարցերի բանալին այն նըպատակի մէջն է որ դրել է ընթերցողը:

Ընթերցողը հեղինակի աշակերտ, ընկեր և բշխատակիցն է և ոչ նրա ստրուկը: «Իմաստալից գիրքը սկզբից մինչև վերջը լաւ է», ասում է Միստէր Այլիօտը. այդպիսի գիրքն ամբողջովին պէտք է կարդալ, իսկ այն գրքերը որոնք տեղ-տեղ միայն խելօք են, կտոր-կտոր էլ պէտք է կարդալ: Շարունակութեան մէջ Միստէր Այլիօտն ասում է. «Ես գրքերն առաւելապէս նրա համար եմ գնահատում, որ նրանք միտք են արծարծում և ոչ թէ միայն նրա համար, որ ծանօթութիւններ են տալիս. նրանց իմաստալից խօսքերը տիրում են հոգուս և ստիպում են ազատ ժամանակս խորհել իրերի փոխադարձ յարաբերութեան և նրանց կենսական խորունկ նշանակութեան վրայ»: Հատուածական ընթերցանութիւնը մեծ օգուտ է բերում, երբ խորհրդածութիւն է յառաջացնում: Նա առաւել հասուն և աւողջ պտուղներ է բերում քան մեքենական, կարգաբանալ ըն-

թերցանութիւնն ու ուսումնասիրութիւնը: Երբեմն ընդունակ մտքի պարարտ հողի մէջ ընկած մի երեսը կամ մի ասացուածքը լաւ է մի ամբողջ մատենագարանից, որ մարդիկ կարդում են լոկ պարտականութեան զգացումով և ոչ իրենց բնոյթի ճշմարիտ պահանջով:

Պէտք չէ վախենալ թէ այդպիսի ընթերցանութիւնը կարող է վայրիվերոյ կրեալ, Մի հեղինակ, որի անունը չեմ յիշում գժբախտաբար, ասում է. «Իէպք ունեցել էք երբեիցէ լօրդ Բէկօնի այն խորհրդածութիւնը լսելու, ուր նա խօսում է վայրիվերոյ ուսումնասիրութեան վնասի մասին. «ամէն բանից սակաւ չափով գիտեանալուց՝ լաւ է ոչինչ չգիտենալ:» Բայց այդ իրաւացի չէ ամենեին. լաւ չէ այն ժամանակ միայն, երբ թերուսութիւնը լիակատար, ճիշտ գիտութեան տեղն է բնում: Օրինակ քիմիայի և անդամազննութեան թեթեակի ծանօթութիւնը կարող են բաւարար լինել իրաւարանի համար, մինչդեռ բժշկի համար անբաւարար կթուին. և ընդհակառակն՝ օրէնքների թեթեակի ուսումնասիրութիւնը իրաւարանի համար անհնարին է»:

Միստէր Համբրտօնը այս խնդրի վերաբերութեամբ մի քանի սուր խօսք է ասել. ամենաէականը՝ չպէտք է շտապել. ոչ նուազ կարևոր է գիտեանալ ընթերցութիւն անել ընթերցանութեան գործում, որպէս զի նա աւելի համապատասխանի մեր նպատակներին, Այդպէս էլ պէտք է հոգալ գրելու գործում որ մեր խօսքերը իսկութեամբ արտայայտեն մեր միտքը սեղմ ձևով: Ընթերցանութեան արուեստը թերթելու հմտութեան մէջն է: Այդպէս կարելի է քաղել ամբողջ ժամանակակից գրականութիւնը նրա արդիւնքները ժամանակակից քաղաքակրթութեան մէջ տեսնելով առանց խորապէս սուզուելու այդ հարցում: Նախապէս կարելի է վստահ լինել, որ նոյն իսկ մեր ընթերցանութեան համար ընտրած գրքում կլինին այնպիսի անհետաքրքիր կտորներ, որոնք յաջորդ օրն իսկ կմոռացուին. անհրաժեշտ է գիտեանալ բաց թողնել այդպիսի տեղերը, կանգ առնելով միայն ինչ որ մեզ օգուտ տալ կարող է: Այդ հմտութիւնը ոչ ոք չի կարող դնել մեր մէջ, որովհետև մեզնից զատ ոչ ոք չի կարող մեր հոգեկան պահանջները գիտեանալ: Պէտք է միայն հաստատ համոզմունքով ընտրել, չղեկավարուիլ կողմնակի կարծիքներով և ազատ լինել արմատացած սովորութիւններից:

Գրքերի ընտրութեան կամ նրա ստուգութեան գործում հարկաւ մենք որոշ չափով կարող ենք վստահիլ և կողմնակի-

անձի: «Համեմատելով լաւ գրքերի բանակը մարդկային կեանքի կարճատևութեան հետ, անհրաժեշտ է առաջնորդուել քննադատութիւններով, թէ որ մեղմում լաւ քննադատներ լինէին, ասում է էմէրսօնը: Անհրաժեշտ է նոյնպէս օգտուել հմտալից ուղեցոյցներով, որտեղ գրքի մասին եղած կարծիքների հետ զրուած են հատուածներ թէ բանաստեղծութիւնից թէ բանաստեղծութիւնից, որոնք հասկացողութիւն են տալիս գրական երկի վրայ: Արդարև, այդպիսի ուղեցոյցները կարող են բաց թողնել հէնց այն, ինչ որ մեզ դուր գալ կարող էր, բայց մի-թէ մենք չենք կարող բաց թողնել ամենահետաքրքիր և ամեխրատական բաները: Ոչ մի գործիչ առանց կողմնակի օգնութեան կառավարուել չի կարող աշխատանքի ասպարիզում, առաւել ևս աշակերտողը. նա պիտի հետևի գիտութեան ռահահորդների իմաստուն խորհուրդներին և ականջ դնէ քննադատութեան ձայնին, երբեմն էլ, ինչպէս էմէրսօնն է ասում, մենք կարող ենք ուրիշին յանձնել ոչ միայն գրքի ընտրութիւնը, այլ նոյն իսկ ընթերցանութիւնը:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԱՆՅ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ.

Հարկաւոր է այստեղ մի բանի խօսք ասել օրինակելի երկերի թարգմանութեանց մասին օտար լեզուներից, որովհետև ընթերցանութեան սովորական ուղեցոյցներն այդ մասին լուում են, իսկ նոյն իսկ ուսեալ ընթերցողների մեծամասնութիւնը շատ քիչ ուշադրութիւն է դարձնում թարգմանութեանց վրայ: Եթէ անգլիացիներին կարելի է մեղադրել որ հայրենի գրականութիւնը կարդալու քիչ սէր ունին, առաւել ևս տեղին կլինի մեղադրանքը օտար գրական երկերի թարգմանութեանց վերաբերութեամբ անգլիական լեզուով:

Գրքերի ընտրութեան մասին խօսելիս մենք ի նկատի ունինք և օտար երկրների գրական երկերը, այսինքն՝ Ֆրանսիայինը, Գերմանիայինը, Իտալականը, Յունականը, Սպանականը: Ինքնըստինքեան հասկանալի է որ Անգլիացիքն ու Ամերիկացիքն առաւելապէս իրենց հեղինակների երկերն են կարդում, բայց շատ ցաւալի կլինէր եթէ դրանով էլ սահմանափակուէին, մոռանալով որ լաւ բաներ կլինին և ուրիշ երկրներում, ուրիշ ժողովրդների մէջ: Յիրաւի, որչափ կարող էր աղքատանալ մեր քաղաքակրթական զարգացում, եթէ մենք լեզուներ չիմանալու պատճառով հասկացողութիւն անգամ չունենայինք Հո-

մերոսի, Վիրգիլիոսի, Դանտէի, Գէթթէի, ստեղծագործութեանց մասին: Կարելի է գրեթէ հաստատապէս ասել, որ ուրիշ երկրների բոլոր լաւագոյն երկերը թարգմանուած են անգլիերէն լեզուով: «Բօնի ընտիր թարգմանութիւնները գրականութեան համար նոյն ծառայութիւնն արին, ինչ որ երկաթուղին միջազգային յարաբերութեանց համար, ասում է էմէրսօնը: Առանց երկար ու բարակ մտածելու ես այդ գրքերից մէկն ու մէկը կկարգամ: Գրքի մէջն ինչ որ լաւ է, լինի այդ հեղինակի անձնական հայեացք թէ հանրամարդկային տպաւորութիւն, այն էլ հեշտ թարգմանելի: Աւելին կասեմ. Աստուածաշունչն և ուրիշ բարձր բարոյական դրոշմ ունեցող գրքերն ակամայից ներշնչում են թարգմանչին բնագրի և՛ յանգը և՛ ոգին: Իտալացիները մի անարգական ասացուածք ունին թարգմանիչների վրայ «y traditori traditori» (թարգմանիչները դաւաճաններ են) ասում են նրանք: Իսկ ես ոչ այնպէս. ես անկեղծօրէն շնորհակալ եմ թարգմանիչներից: Յունարէն, լատիներէն, գերմաներէն իտալերէն և նոյն իսկ Ֆրանսերէն գրքեր ես շատ քիչ եմ կարդում, երբ ձեռքիս տակը լաւ թարգմանութիւններ ունիմ: Ծատ հաճելի է ինձ տեսնել թէ ինչպէս ամեն կողմից համաշխարհային գրականութեանց գանձերը հոսում և խորասուզուում են անգլիական ձոխ լեզուի լայնարձակ ծովը: Ի՞նչ պէտք որ ես բնագրերի ընթերցանութեան վրայ ժամավաճառ լինիմ, մինչդեռ նրանք իմ մայրենի լեզուով թարգմանուած են»:

Եթէ էմէրսօնի նման հեղինակաւոր անձն խոստովանում է թարգմանութեանց օգտակարութիւնը, ուրեմն սովորական ընթերցողը չպէտք է արհամարհէ նրանց լոկ այն պատճառով որ համոզուած է թէ օտար հեղինակներ կարդալու համար անհրաժեշտ է բնագրով կարդալ կամ անհրաժեշտ համարէ մոռանալ, որ իւր հորիզոնից այն կողմ գրականութեան որպիսի ասհագին ծաւալ կայ:

Միտէր էմէրսօնը իւր ժամտնակի ամենագիտուն անձնաւորութիւններից մէկն է. իւր շարադրութեանց համար նա դարաւոր իմաստութիւնից է օգտուել, այնպէս որ եթէ ենթադրենք թէ կայ մէկը, որ թարգմանութիւնների ընթերցանութիւնից բարձր է կանգնած, դա ի հարկէ նա է: Լսենք դարձեալ թէ նոյն նիւթի մասին ինչ է ասում Փիլիպպոս Համերտոնը, որից հակառակ կարծիք սպասելու իրաւունքն ունենք, որովհետև երկար ժամանակ Ֆրանսիայումն է ապրել, ամուսնացած էր Ֆրանսուէզու վրայ և անգլիականին հաւասար կատարելութեամբ տիրում է Ֆրանսերէն լեզուին: Նա ասում է.

«Այրական հասակն այնքան բազմազան պարտաւորութիւններ է բերում իւր հետ կեանքի մէջ, որ մտաւոր զարգացման համար շատ քիչ ժամանակ է մնում. և այն մարդիկ, որոնք լրջութեամբ և անկեղծութեամբ են հոգում զբա համար պարտաւոր են աւելի ևս տնտեսել ժամանակը. մինչդեռ ոչ բոլորովին ծանօթ լեզուով կարգալը ժամանակի վատ խնայողութիւն է հանդիսանում: Օրինակ ի նկատի առնենք ծառայող մի մարդ, որը թէև մանկութեան ժամանակ ուսել է յունարէն լեզուն, բայց ոչ այն չափով, որ Պղատոն կարգայ բնագրի վրայ. դիցուք թէ կարող էլ է կարգալ բնագրով, բայց այդ ընթերցանութիւնը նրանից այնքան ժամանակ կխլի, որ նա կջանայ որչափ կարելի է շուտ փոխարինել բնագիրը թարգմանութեամբ: Սա արհամարհանք չէ զէպի յունական քաղաքակրթութիւնը, ընդհակառակն նրա հետ ծանօթանալու ցանկութիւնն է, որովհետև թարգմանութեան ընթերցանութիւնն առաւել յարմար է»: Միտէր Համբրտօնը մատնացոյց է անում նոյնպէս թէ օտար լեզուի նոյնիսկ նստական և հիմնաւոր ուսումնասիրութիւնը ոչ միշտ հերիք է այդ լեզուի ոգին և ձևերի հարստութիւնը լիովին իւրացնելու համար: Ենթադրենք թէ մի ֆրանսիացի, որ իւր օրում անգլիերէն լեզուով կենդանի խօսք լսած չէ բուն անգլիացու շրթունքներից, բառարանով ու բերականութեամբ անգլիերէն ուսումնասիրելուց յետոյ, ակաէր նոյն լեզուն դաս տալ համաքաղաքացիներին. երևակաւում եմ թէ ինչ լեզու կըլինէր այդ: Ես երկու ֆրանսիացի գիտէի, որոնք անգլիական գրականութիւնը ճիշտ այնպէս էին ուսումնասիրել, ինչպէս ԺԶ-րդ դարու ֆրանսիացիք ուսումնասիրում էին հին Հռոմի գրականութիւնը: Նրանցից մէկը մանաւանդ կարող էր իւր հմտութիւններով ապշեցնել մարդու, եթէ միայն խօսքը մեռած լեզուի մասին լինէր: Նա ծանօթացաւ անգլիական ամենալաւ երկերի հետ և կարողանում էր քննադատօրէն համեմատել մէկը միւսի հետ: Գերազանց յիշողութեան տէր լինելով, որի նմանը երբէք տեսած չեմ, նա այնպիսի հմտութիւններ ձեռք բերեց, որ կարող էր վիճել որ և է կրթութեամբ անգլիացու հետ. սակայն նա չէր կարողանում այնպէս կարգալ ու գրել, որ անգլիացու համար հասկանալի լինէր: Նա բոլոր բառերը գիտէր, բայց բոլորովին ուրիշ գոյն էր տալիս նրանց, այնպէս որ դուրս էր գալիս մի ինչոր կեղծ անգլիական լեզու: Նրա հայեացքներն անգլիական հեղինակներին՝ մասնաւորապէս բանաստեղծների վրայ այն աստիճանի տարբերում էին անգլիական քննադատների ընդունած հայ-

եացքներից, որ պարզապէս ցոյց էր տալիս թէ նա հեղինակներին բոլորովին այլ կերպ էր ըմբռնում, քան նրանք: Այս ենթադրութիւնը հաստատոււմ էր և նրանով, որ նա յաճախ ատենախօսական բանաստեղծութիւնը շփոթում էր իսկական վսեմագունի հետ և նրա ականջը չէր կախարդուում ոչ Բայրօնի և ոչ Տէնիսօնի երաժշտական գեղեցկութեամբ: Եւ ինչպէս կարող էր նա գնահատել նրանց գեղեցկութիւնները, երբ անգլիական բառերի հնչիւնները չգիտէր:

Օտար երկերի թարգմանութիւնը ոչ միայն ծանօթացնում է օտար գրականութեան հետ, այլ և ուղիղ հասկացողութիւն տալիս հեղինակի մասին, որն անհնարին է, եթէ ընթերցողը կատարելապէս չի տիրում օտար լեզուներին: Ուսանողների մեծ մասը՝ իրենց հմտութիւններովը Եւրոպական հին և նորագին գրականութեան վրայ, դեռ մանուկներ են, չնայելով 6—7 տարի լատիներէն, 4—5 տարի յունարէն և 2—3 տարի ֆրանսերէն ու գերմաներէն են սովորել: Այդ ժամանակի ինն տասներորդ մասը գործ է դրուած բերականական ձևերի, ստուգաբանական նրբութիւնների և համաձայնական կառուցումների վրայ. թարգմանութիւնները կատարուել են հատուածներով և ոչ մի հասկացողութիւն չեն տուել բնագրի արժանիքների մասին, առաւել քիչ՝ այն գրականութեան մասին, որից առած էր հատուածը: Ստուգաբանութիւնը գրականութիւն չէ, համաձայնութիւնը՝ նոյնպէս, բայցերի խոնարհումը՝ նրանից էլ քիչ: Նրանք կարող են և չեն կարող գրականութեան ուսումնասիրութեան դարպաս լինել. մեծ մասով չեն, մանաւանդ դպրոցական կրթութեան արդի եղանակով: Գերականութեան ուսուցումն, ինչքան էլ օգուտ բերելու լինի, այնուամենայնիւ աշակերտեալը չպէտք է կարծէ թէ քերականական վարժութիւններն ու գրականութեան ուսումնասիրութիւնը միևնոյն բանն է: Ես քերականութեան նշանակութիւնը չեմ հերքում, այլ միայն պնդում եմ թէ բանասիրութիւնը ուրիշ բան է, օտար գրականութեան ոգու ըմբռնողութիւնը՝ ուրիշ: Անգլիացի հիւսիսային բարձրագոյն դպրոցներում անհամեմատ աւելի քիչ են հոգում հայրենի և օտար գրականութեան դասաւանդման վրայ, քան հարաւի և արևմտքի՝ համեմատաբար աղքատ, փոքր հաստատութիւնները: Գրականական կրթութեան նկատմամբ հին նշանաւոր համալսարաններից շատ գերազանց են նորագոյնները: Այն կրթական հաստատութիւնները, ուր միայն քերականական նրբութիւններ են աւանդուում, գրական կրթութիւն տալ չեն կարող և ոչ համեմատութեան կրիմանան այն վարժա-

րանները հետ, ուր բանահիւսութեանը ընդարձակ տեղ են տալիս, ուր աշխատում են ներչնչել ուսանողին թի Հոմերոսի բանաստեղծութեան գեղեցկութիւններն ըմբռնելը բարձր է յունական բայերի խոնարհումից: Վերոյիշեալ կրթարանները գիտնական աստիճանով են բաց թողնում աւարտող ուսանողներին, մինչդեռ երկրորդ տեսակի կրթարանները մի օրուայ մէջ այնպիսի մարդիկ են տալիս, որպիսին օրինակ 1825 թուին Լօնգֆելլօն ու Հաուսօրն էին, մէկը ամենամեծ բանաստեղծ, միւսը՝ արձակ գրուածոց մէջ ամենամեծ հեղինակ:

Ամեն մի ընթերցող, ուր էլ որ ուսում առած լինի, կարողանայ սուրբ գիրքը վեց լեզուով կարդալ թէ ոչ, պէտք է յիշէ որ իրեն համար անհրաժեշտ է գաղափար ունենալ համալսարանային գրականութեան վրայ: Եթէ նա կարող է բնագրով կարդալ՝ աւելի լաւ, իսկ եթէ նա, ինչպէս որ մեծ մասով լինում է, կկարօտի թարգմանութեանց դիմել, այդ բանը ամենեւին չի խանգարի նրան հիմնովին ծանօթանալու օտար գրականութեան հետ:

ԻՆՉՊԷՍ ՊԷՏԲ Է ԿԱՐԴԱԼ ԼՐԱԳԻՐ ՈՒ ԱՄՍԱԳԻՐ

Ընթերցանութեան ստուերագիծը կազմելիս անխոհեմութիւն կլինէր՝ դէն ձգել լրագրերն և ուրիշ պարբերական հրատարակութիւնները և նայել նրանց ընթերցանութեան վրայ, որպէս «կորուստ ժամանակի»: Անտարակոյս եթէ վերցնենք մի միջակ գիրք և միջակ լրագիր, գիրքն աւելի օգտակար կլինի սակայն սրանից ամենեւին դեռ չի հետևում թէ գիրքը միշտ լաւ է լրագրից: Մեր դարում, որ պարբերական հրատարակութիւններով է հարուստ, համարեա ամեն բան ինչ որ աչքի ընկնող է գրականութեան մէջ, ամենից առաջ նրանումն է տեղադրուում. բայց այդ հանգամանքից դատ, մեր ընթերցանութեան ծրագիրը լրիւ չի լինի, եթէ օրուայ նորութիւններին չհետեւենք: Ընթերցողը չպէտք է անպայման անձնատուր լինի հին ժամանակների և նրանց գրականութեան ուսումնասիրութեան ի վնաս մեր ժամանակի աչքի ընկնող անցքերի և ղեկավարող սկզբունքների ծանօթութեան:

Համերոսնի «Մտաւոր կեանք» շարադրութեան մէջ, որից ես միշտ հատուածներ եմ քաղել, իբրև մտաւոր կազմակերպութեան խելացի խորհուրդների օրինակներ, մի գլուխ կայ նուիրուած իւր բարեկամին (մի վերին աստիճանի զարգացած մարդու) որ պարծենում էր թէ «Լրագիր կարդալուց ձեռք է վերց-

րել»: Միտէր Համերոսն ընդունում է որ իւր բարեկամը մասամբ շահուեցաւ, այսինքն նա տարուայ ընթացքում մտաւորապէս հինգհարիւր ժամ կլինայի, որոնց կարող է գործադրել որևէ գործի վրայ: «Այս հինգ հարիւր ժամում, ասում է նա իւր բարեկամին, դուք կարող էք գիտութիւն կամ օտար լեզու սովորել: Ձեր մտածողութեան մի քանի կողմերը, որոնք բաւարար չափով չեն զարգացած, ուստի և ձեզ չէին գոհացնում, դուք կկարողանաք կարգի բերել և մշակել, որպէս մի պտղաւետ այգի. դուք կարող էք մի ամբողջ կամ նոյն իսկ մի քանի հեղինակ ուսումնասիրել, որոնց վրայ դուք յառաջ ուշադրութիւն չէիք դարձնում ժամանակի սղութեան պատճառով»: Դրա փոխարէն ստիպուած կլինիս քաղաքական և ընկերավարական տեղեկութիւնները գոհ տալ, առօրեայ կեանքի ժամանակակից խնդիրների վրայ դատողութիւն տալու ընդունակութիւնը կորցնել և կապը խզել շրջապատող աշխարհի հետ, որ այնքան անհրաժեշտ է մտքի և բնաւորութեան զարգացման համար: Մէկ խօսքով ժամանակակից պարբերական հրատարակութեանց ընթերցանութիւնից ձեռք քաշելով՝ տգէտ և եսական դանալու վտանգին կենթարկուիս: Ով որ սովոր չէ ամեն օր լրագիր կարդալ, ասում է Ատկինսօնը, նա դժուար թէ շահուեցուցեմք կարգայ Հիբբօնին կամ Դրօտին: Ով որ իւր աչքի առջև կատարուող հասարակական շարժման պատմական ընթացքին չի հետևում, նա չի հետաքրքրուի Հոմօր կամ Պոմպէյի վրայ գրուած գրքերով: Պօրտէր նախագահն ասում է. «Ամենքն էլ խոստովանել են, որ պարբերական հրատարակութիւնները շատ կողմով անագին օգուտ են տալիս մտաւոր զարգացման: Նրանք կրճատում են աշխատանքը և անհատական անձանց ուսումնասիրութեանց արդիւնքներն ընդհանրացնում են: Յաճախ լրագրական մի յօդուածը մի ամբողջ գիրք արժէ»: Նոյն միտքն է արտայայտում Պերկինսը հետևալ խօսքերով. «Կարգացէք պարբերական հրատարակութիւններն և մի կարծէք թէ դա իզուր աշխատանք է և ժամանակի անշահ կորուստ. դուք նրանցով ուսումնասիրում էք ժամանակակից շրջանի ճշմարտութիւնները, առանց աչքաթող անելու անցեալը: Ժամանակի ընթացքում հետզհետ է աւելի յաճախ սկսան երևան գալ խելօք, ընտիր մտքեր այդ ժամանակաւոր հրատարակութեանց մէջ: Բայց որ գլխաւորն է, չպէտք է անձնատուր լինել բացառապէս մի որևէ հանդիսի, այլ որքան կարելի է նրանցից շատ քանակութեամբ աչքի անցնել և քաղել, ինչ որ ուշադրութեան արժանի է, մնացեալը բաց թողնելով»:

Արդ, պարբերական հրատարակութեանց օգտակարութիւնն ընդունելով և նոյն իսկ պնդելով թէ նրանք անհրաժեշտ են, այնուամենայնիւ պէտքէ խոստովանուել որ նրանց ընթերցանութեան վրայ ոչ սակաւ ժամանակ է կորչում իզուր: Համոզուելով հանդերձ, որ լրագրերի և ամսագրերի ընթերցանութիւնն անհրաժեշտ է, մենք երբէք չպէտք է յուսանք թէ նըրանցում կգտնենք միայն բացարձակ օգտակարը: Կարող եմ գրեթէ առանց սխալուելու ասել, որ այս տողերիս կարգացողը հաւանօրէն ժամանակի կէսն իզուր է վատնում պարբերական հրատարակութիւններ կարգալիս, որովհետև չի կարողանում նրանցից անհրաժեշտն ընտրել և մնացեալը աչքաթող անել, մինչդեռ հէնց դրանումն է յաջողակ ընթերցանութեան մեծ գաղտնիքը: Այդպէս վարուելիս ժամանակն իզուր չի կորչի. նա աւելի օգտակար գործադրութեան համար կերթայ: Պարբերական հրատարակութեանց անկապ և անմիտ ընթերցանութիւնը միտքն այնպիսի վիճակի մէջ է գնում, որ մարդ որևէ մտքի, որևէ առարկայի վրայ կենդրոնանալու ընդունակութիւնը կորցնում է: Եւ եթէ, ինչպէս յաճախ պատահում է, ծառայութեամբ զբաղուած մարդը բացի լրագրերից ուրիշ բան չի կարդում, նրա միտքն ընթերցանութեան նկատմամբ միայն կիսով չափ է գործում: Նրա համար երկար, մէկմէկու կապակցաբար յաջորդող մտքերն այլ ևս անտանելի են դառնում. նա թեթեակի սահելով երեսանց և չթափանցելով առարկայի էական յատկութեանց մէջ, չի կարողանում կենդրոնանալ նրա վրայ: Յիշուի վիճակում միտքը գուարճութիւն, գոգիտ է որոնում միայն, բայց ոչ կրթութիւն:

Բայց ինչպէ՞ս ի գործ գնենք այն նշանաւոր ճշմարտութիւնը, որ նախագահ Պօրտէրն այսպէս է արտայայտում. «Լրագիրը ծառայի զեր պիտի կատարէ, այլ ոչ տիրոջ»:

Նախ՝ պարբերական շատ այնպիսի հրատարակութիւններ կան, որոնց կարգալ իսկ չարժէ, որովհետև ոչ օգտակար և ոչ հաճելի նիւթ են տալիս. բացի այդ, լրագրերի մէջ այն տեսակիցն էլ շատ կան, որոնք իրերի վրայ նայում են ցած ցինիքական տեսակէտից: Եթէ լրագիրն անկեղծ չէ, առաջնորդող նպատակի խիստ ուղղութեամբը չէ տողորուած, եթէ նա միայն կծու ու սրախօտում է, այն ժամանակ լաւ է նրան մի կողմը դնել. իսկ այդպիսի լրագրեր քիչ չեն հրատարակուած: Կեանքի լուրջ նշանակութեան, ակնուութեան, գեղեցկութեան ըմբռնումն գրեթէ ամբողջովին բացակայ է նրանցում: Այդ տեսակ լրագրերի ընթերցումն ընթերցողին կարող է դարձնել հանաքչի

առանց սրախօտութեան, քննադատ՝ առանց գիտութեան, շատախօս՝ փոխանակ գործողի, թամաշաչի՝ կապկային տրամագրութիւններով, փոխանակ մարտիկի կեանքի ասպարիզում: Այս նկատողութիւնները կծու են. բայց եթէ յայտնի լրագրերի, որոնց այդ անուն տալն էլ աւելորդ է, ընթերցանութիւնը վերջիչեալ ազդեցութիւնը չի գործում, դրա պատճառը նոյն ինքն ընթերցողի մէջն է թագնուած:

Մեր ընտրած լրագիրները կարգալիս անհրաժեշտ է կարելոյն չափ քննադատութեան ենթարկել ամեն մի յօդուածը և հասու լինել թէ ինչ նպատակի է հետևում և որքան օգտակար է մեզ: Եթէ նա օգտակար չէ, ամենայն անգործութեամբ կարող ենք բաց թողնել: Լրագիրն ու ամսագիրը չեն գրուում անպայման ամենքի համար. մի յօդուած ձեզ համար է օգտակար, միւսը ինձ, երրորդը՝ երրորդին: Հէնց առաջին ակնարկով կարելի է այդ որոշել: Միևնոյն ժամանակ լրագիր կարգալիս մենք չպէտք է աւելորդ ժամանակ նուիրենք նրան: Յաճախ բաւական է լինում միայն իմանալ թէ ինչ նորութիւն կայ, առանց մանրամասնութեան մէջ մտնելու. Լրագրերն ընդունակ են նոյնպէս իրողութիւններն աղաւաղել և մենք պէտք է կարողանանք նրանց իսկական իմաստն ըմբռնել: Լրագիր կարգալիս ժամանակը խնայելու ամենաիրական միջոցն այն է, որ ուշադրութեան առնենք միայն փաստերը, խոյս տալով զանազան ենթադրութիւններից և դատողութիւններից: «Լրագիրը շատ յաճախ դատողութիւններ է տալիս թէ ինչ կլինի մի քանի ամսից յետոյ, ասում է Համերտօնը. դէպքը տեղի է ունենում և մենք իմանում ենք նրա մասին, ամենևին ժամանակ չկորցնելով դատողութեանց վրայ, որոնք ոչ մի ազդեցութիւն էլ չունեցան նրա վրայ»: Այսպիսով մենք խուսափում ենք այս կամ այն կուսակցութեան կողմնապահութիւնից, որի բերանն է հանդիսանում ամսագիրը կամ լրագիրը: Համերտօնը նոյնիսկ խորհուրդ է տալիս բանակուել բնաւորութիւն ունեցող յօդուածներն ամենևին չկարգալ,

Այլևս յառաջ կրերենք Միստէր Սկեզգերի միջանի նկատմունքները, որոնք վերաբերում են մեր մտաւոր զբաղմանց ծրագրին և նրանց կարգաւորութեանը յայտնի նպատակի համեմատ. «Շատ մարդկանց առօրեայ կեանքում, ասում է նա, լրագրերի ընթերցանութիւնը նոյնպիսի անհրաժեշտ տեղ է բռնել որպէս առաւօտեան նախաճաշը: Քանի դեռ լրագիրը չի կարգացուել, ասես թէ օրը չի սկսուել: Որևէ ընթերցողի հարցրէք թէ ինչ նոր բան կայ լրագրում և տասից իննը

հաւանօրէն այդ հարցին պատասխանել չեն կարողանայ: Չի կարելի ասել թէ նա կարգալիս անուշաղիւր է եղել, ալլ նրա միտքը խճողուած է եղել այնքան շատ բազմազան բաներով, որ նա արդէն կարողացել է թեթեակի կերպով մի շարք խնդիրներ վճռել: Հաճելի է փիլիսոփայական տեսակետից նայել լրագրի վրայ, որպէս անցած օրերի հասարակական կեանքի արդիւնքի վրայ. և պէտք է կարծել որ Աւզանիստանի անցքերը մեզ նոյնքան են հետաքրքրում, որքան Կանադայի անցքերը հետաքրքրում էին մէր հայրերին, այնուամենայնիւ անհերքելի է մնում իրողութիւնը թէ լրագրերն առաւել ցրուում, բան կենդրոնացնում են միտքը: Լրագիրը հազիւ է զարթեցնում և վսեմացնում մտաւոր գործունէութիւնը: Մենք լրագրերի ամենօրեայ ընթերցանութեան հակառակ խօսք չունենք, միայն ուզում ենք այդ ընթերցանութեանը պատշաճաւոր տեղը տալ և յիշեցնում ենք ընթերցողին, որ լրագրերը չեն կարող փոխարինել այն ընթերցանութեանը, որ լուրջ ուշադրութիւն է պահանջում: Հէնց ձեռք բացորոշում է լրագրերն իսկական գրական երկերի շարքից: Շատերը պնդում էին թէ Մակօլէի և Ֆրօուդի նման մարդիկ որոշ հանգամանքներում կարող էին լրատուի գրիչ բանեցնել: Այս ամէնը ասուում էր լրատուին գրական գործիչների շարքը դասելու նպատակով և վերոյիշեալ հեղինակները՝ որպէս փայլուն ոճաբաններ, օրինակ էին վերցնում: Այս շատ հնարաւոր է մանաւանդ, երբ լրատուները աշխատում են արտաքին փայլ տալ իրենց շարադրութեանց, բայց հէնց այդպիսի յօդուածներն էլ թէ հեղինակից և թէ ընթերցողից շատ ժամանակ չեն պահանջում: Անհրաժեշտ է որ ամէնօրեայ թերթը սեղմ, յաջողակ ձևով տար նիւթը: Երեկուայ թերթից էլ աւելի հին բան ի՞նչ կայ. ծովով ճանապարհորդելու ելնող մարդիկ շտապում են վերջին համարի կէս դիւթին լրագիր վերցնել պաշար. նրանց ամբողջ ուշադրութիւնը բեռուած է այդ թերթիկների վրայ, որովհետեւ նրանցում կենդրոնացած է մայր ցամաքի ամբողջ կեանքը. բայց նաև մեկնելուց մէկ—երկու ժամ յետոյ հետաքրքրութիւնը կորչում է. ծովն ու երկինքը գամում են նրանց ուշադրութիւնը և լրագրերը մոռացուում են: Լրագիրը ձգտում է հատ ու կտոր տեղեկութիւններ տալ. եթէ պատահում էլ են երկար յօդուածներ, նրանք էլ միշտ գասաւորուած են կարգով և բաժանմունքներով: Անհամբեր ընթերցողի համար, որ շարունակ շտապում է, լրագիրն ամէն տեսակ զիջողութիւն անում է: Հասկանալի է որ լրագիրը բոլորակաւ նպատակների է ծառայում,

յում, թէպէտև այդ նպատակները հետևեալ օրն իսկ նորոգուում են: Լրագրերի օգտակարութիւնը չենք հերքում, այլ միայն պահանջում ենք թէ ինչ կերպ պէտք է նրանց կարգալ: Դիցուք թէ ընթերցողը մի զբաղուած մարդ է և օրական կէս ժամ նուիրում է լրագրի ընթերցանութեան: Որոշ ունակութիւն ձեռք բերելով նա կարող է կիսով չափ կրճատել այդ ժամանակը ճարակութեամբ բաց թողնելով իրեն համար անէականը և անհետաքրքիր տեղերը: Նա կարող է՝ զօր օրինակ բաց թողնել այն անցքերը, որոնք իւր բարեկամներին և ծանօթներին չեն վերաբերում: Մի ակնարկ բաւական է որոշելու համար թէ ինչ պէտք է և ինչ պէտք չէ կարգալ: Կրկնում եմ որոշ ունակութիւն ունենալուց յետոյ ընթերցողը կարող է լրագրերի ընթերցանութեան ժամանակը կիսով չափ կրճատել, եթէ չկանգնի այնպիսի բաների վրայ, որոնք կարգալուց անմիջապէս յետոյ մոռացուում են:

Ինչ վերաբերում է զուտ քննադատական բնաւորութիւն ունեցող ամսագրերի և լրագրերի ընթերցանութեանը՝ մի բան միայն կարելի է ասել թէ՛ այստեղ պէտք չէ առանձին հաշուի տալ դնել ժամանակը. հերիք է միայն պարզապէս որոշած նպատակովը ղեկավարուել (որի համար արդէն բազմիցս խօսել ենք), որ շահաւէտութեամբ ընտրենք ընթերցանութեան յօդուածները:

Ի ԼՈՒՐ ԸՆԹԵՐԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

«Ինչպէս պէտք է կարգալ», հարցնում է Պօտտէր եպիսկոպոսը ընթերցանութեան համար գրած իւր մի օգտակար ձեռնարկում և իսկոյն պատասխանում. «Նախ մտաուութեամբ և քննադատօրէն, երկրորդ՝ հասարակութեան կամ ընտանիքի մէջ, երրորդ՝ կրկնութիւններով, չորրորդ՝ գրիչը ձեռքին»:

Ի լուր ընթերցանութիւնը որևէ մէկի ներկայութեամբ, ինչպէս յանձնարարում է Պօտտէր եպիսկոպոսը, շատ օգտակար բան է:

Ի լուր ընթերցանութիւնն անուշաղն նպատում է կանոնաւոր արտասանութեան մշակմանը. բացի դրանից նա մըտքերի փոխադարձ շփման ժամանակ մտածողութիւն է դուզում, որն անխուսափելի կերպով յառաջ է բերում վիճաբանութիւն և դատողութիւններ և ընթերցուածի ամենալաւ իւրացումն:

Իւր դառն գանգատներից մէկում զպրոցական եղանակի անկման և անպէտքութեան դէմ Միստէր Ռիչարդ Ուայթը մի

քանի օգտակար խորհուրդներ է տալիս դասարանական ի լուր ընթերցանութեան քաջալերութեան և զարգացման նկատմամբ: Նրա խորհուրդներն այն աստիճանի խոհական են, որ ես կզնեմ այստեղ ի խրատ ընթերցողներին առհասարակ և դաստիարակներին: «Մեր ժամանակ, ասում է նա, գիտութեան և մտաւոր զարգացման գլխաւոր միջոցը ընթերցանութիւնն է. և ի լուր ընթերցանութիւնը այդ գիտութեան ամենաէական ապացոյցներից մէկն է: Ի լուր ընթերցանութեան եղանակները, որ այնքան սովորական էին այն ժամանակի դպրոցական կազմակերպութեան մէջ, երբ արդէ սերունդն էր կրթուում, այժմ արհամարհուում են ժամանակակից մանկավարժների կողմից: Սակայն այն եղանակները, որոնցով յաջողուում էր կանոնաւոր արտասանութիւնը երեսուն ու հինգ—քառասուն տարի սրանից առաջ, այնքան էլ բարդ չեն, որոնցից օգտուել չկարողանար միջակ ձիւղերի տէր ուսուցիչը, որ լրջօրէն է վերաբերուում իւր պարտականութեանց: Որքան յիշում եմ ահա թէ ինչպէս սովորեցինք կարդալ: Եօթնից—ինն տարեկան երեխաներ վարժուում էին որոշել բառերը մի համառօտ բառարանով: Բառն արտասանուում էր վանկ-վանկ, նշանակութիւնը տրուում էր բերանացի, յետոյ ուսուցիչը հարցեր էր տալիս աշակերտներին համոզուելու համար թէ հասկանում են արդե՞օք այն նշանակութիւնը, որ տալիս են բառերին: 12—14 հոգուց կազմուած դասարանը սովորում էր արտայայտել իւր հասկացողութիւններն ըստ կարեաց և ջոկել մի բառ իւր՝ ինչպէս ասում են, համանիշներից: Հարկաւ այս ճանապարհով շատ քիչ հմտութիւն էր ձեռք բերուում, բայց դրա փոխարէն այս եղանակն՝ իբրև դաստիարակութեան միջոց անագին օգուտ էր տալիս մտաւոր զարգացմանը: Այդ դասարանի աշակերտները ամեն օր բարձրաձայն էին կարդում. հետզհետէ նրանք ընթերցանութեան մէջն էին խրուում. գրքերն այնչափ հետաքրքրում էին նրանց, որ նրանք շարունակում էին կարդալ և դասարանից դուրս: Երբ ընթերցանութիւնն սկսուում էր, ամբողջ դասատունը պիտի հետևէր իւր դասագրքով, որովհետև ընթերցանութեան շարունակութեան համար երբեմն նոյն իսկ նախադասութեան կիսում յանկարծ դուրս էին կանչում աշակերտին և եթէ նա ուշանում էր և կակազում, պարզապէս նշանակում էր թէ նրա աչքերն և ուշադրութիւնը հոռի էին ընթերցանութիւնից: Եթէ ուսուցիչը նկատում էր թէ աշակերտը պարզ չի ըմբռնում կարգացածը, կանգնեցնում էր նրան և այն ժամանակ ամբողջ դասարանով աշխատում էին պարզ հասկացողութեան համար: Ըն-

թերցողից կամ ամբողջ դասարանից կարգացածի ճիշտ բացադրութիւնն ստանալուց յետոյ, ուսուցիչը կրկնում էր բացադրութիւնը լրացնելով հանդերձ, ուր որ պէտք էր և զուգահեռագիծ էր անցկացնում լաւ և վատ նշանակութեանց մէջ: Բառերը բացադրուում էին, վերլուծուում էին՝ եթէ բարդ էին, դանդան համակարգութիւնների մէջ եղած բառերի տարբեր նըրութիւնները որոշուում էին և դասը՝ իբրև մի պատմուածք կամ ոտանաւոր, վերջանում էր: Մրա հետ մէկ տեղ ուշադրութիւն էր դարձնուում արտասանութեան վրայ և պահանջուում էր որ ուղիղ, ախորժ և իմաստալի լինի. աշակերտներից արհեստական փրուն արտաբերութիւն չէր պահանջուում: Ընթերցանութեան ժամանակ աշակերտները պէտք է ուղիղ կենային. գլուխ չխոնարհէին կրծքի կամ ուսի վրայ, այնպիսի մի գիրքով, որ եթէ աշակերտի աչքերը խոյս տային գրքից՝ պիտի հանդիպէին ուսուցչի աչքերին: Մարմնի բնի այդպիսի դրութիւնը նպաստում էր ձայնի կանոնաւորութեան: Աշխատում էին ըստ կարելոյն ուղղել չափազանց թոյլ, անկանոն արտասանութիւնը. այդ միջոցին խիստ հալածում էին որևէ զօրեղ տպաւորութիւն ձայնի մէջ, իմաստակութիւն և արհեստականութիւն՝ ընթերցանութեան ձեռք մէջ: Ուսուցչի բոլոր ջանքը նրանումն էր, որ աշակերտներից մէկին, պարզ և արտայայտիչ ընթերցանութիւն տեսնի: Հարկաւ հեշտ բան չէ այդպիսի դաս տալը. ձեռնարկել այդպիսին կարելի է միայն երկար, եռանդուն աշխատանքից յետոյ. այդտեղ ուսուցչի վարդապետական ընդունակութիւնները ենթարկուում են ամենախիստ փորձութեան: Բայց դրա համար էլ այդպիսի դասը ամբողջ օրուայ ամենահետաքրքիր, ամենաօգտակար դասն էր լինում: Այդպիսի դասի ընթացքում աշակերտը վարժուում էր ոչ միայն ուղիղ կարդալ, ուղիղ խօսել այլ և ուղիղ մտածել: Նրա ուշադրութիւնն ու մտածողութիւնը մշտական վարժութեան մէջ էին զանուում. նա հարկադրուած էր լինում բառերը վերլուծել, որոշել նրանց նըրութիւնները նախքան բարձրաձայն պատասխանելը: Այն ժամանակներում ի լուր ընթերցանութիւնը համարուում էր ոչ ստոր քան գիտութեանց այլ ճիւղերը. նա գործածական էր ստորին վարժարաններում շարունակ մինչև գիմնազիա մտնելը. այնուհետև անցնում էին Միլտօնի, Պօպի, Բերկի և ուրիշ բարձր կարգի հեղինակների ընթերցանութեան. այս դէպքումն էլ ընթերցանութիւնը նոյնպէս ընթանում էր բացատրութիւններով և քննադատական վերլուծութեամբ: Նախնական տարիներում ուսուցիչն աւելի շուտ կո-

ժարէր որևէ ուրիշ դաս բաց թողնել, քան բացատրական ընթերցանութեան դասը: Թէ ինչու այժմ ուրիշ աչքով են նայում այս բանի վրայ՝ ես չեմ հասկանում, մանաւանդ որ ամենուրեք Աւզլիայում և Միացեալ Նահանգներում գանգատներ են լսուում թէ երեխաները բարձրաձայն կարգալ և թելադրութիւն գրել չեն կարողանում: Այդ չէր լինի եթէ երեխաներին ուսուցանէին վերը յիշատակածս եղանակով. ութ—ինն տարեկան աշակերտը գոնէ կկարողանար լաւ կարգալ բարձրաձայն, եթէ նոյն իսկ ուրիշ բան չսովորէր: Գիտութեանց և արուեստների ուսուցումից առաջ շատ կարևոր է որ աշակերտը սովորի լաւ կարգալ և էն էլ այն եղանակով, ինչ որ ցոյց տուի վերևում»:

Այս խնդրի մասին խօսելիս միտքս է գալիս սուրբ գրքից մի տուն, որտեղ մի քանի խօսքով արտայայտուած է ի լուր ընթերցանութեան ամբողջ հմտութիւնը. «Այսպիսով նրանք լսելի ձայնով կարդում էին ս. Գրքից, բացատրում էին իմաստը և ստիպում էին հասկանալ կարգացածը»:

Տեղը չէ երկարաբանել բարձրաձայն կարգալու մեքենական եղանակների վրայ: Ինչպէս արդէն ասացինք բարձրաձայն ընթերցանութիւնը տնական շրջանում կամ հասարակութեան մէջ՝ արտասանութեան վարժութիւնից դատ, նպաստում է կարգացածի ամենալաւ ըմբռնման և ընթերցանութեան մասնակցող անձաց վրայ վերին աստիճանի զարգացուցիչ ազդեցութիւն է գործում: Բարեբաղդաբար վերջին տարիներումս ի լուր ընթերցանութիւնը դարձեալ նորաձևութեան շարքն անցաւ թէ հասարակութեան մէջ և թէ ընտանեկան շրջանում: Ունկնդիրներ միշտ կարելի է գտնել. լսելու ցանկութիւնն աւելի յաճախ է երևան գալիս, քան անձամբ կարդալունը, իսկ փորձը ցոյց կտայ թէ որքան առատօրէն է վարձատրուում այդ ջանքը մտաւոր զարգացման վերաբերութեամբ: Հարկաւ ի լուր ընթերցանութիւնն աւելի դանդաղ է յառաջ գնում քան լսելիայնը, բայց այստեղից ծագող մտքերի փոխանակութիւնը և մտաւոր ոյժերի լարումն աւելիով են փոխարինում այդ դանդաղութիւնը:

Կանանց գրականական կրթութեան վերաբերութեամբ ես մի քանի օգտակար խորհուրդներ եմ քաղել Զրիստոնէական օգնութիւնից, որոնց այստեղ յառաջ բերելը տեղին եմ համարում, որովհետև նրանք լիովին արտայայտուած են իմ անձնական կարծիքս: Այդ խորհուրդներն ըստ մեծի մասին օգտակար են նաև աղամարդկանց համար, ինչպէս և երկու սեռի գրականական հասարակութեանց համար: «Իւրաքանչիւր հասարակու-

թեան մէջ, ասում է այդ ամսագիրը, կան կրթուած կանայք, որոնք բաւական ազատ ժամանակ ունին իրենց տրամադրութեան տակ և ցանկանում են օգտակար լինել: Միւս կողմից էլի նոյն հասարակութեան մէջ քիչ կանայք և աղջիկներ չկան, որոնք մտաւոր զարգացման ծարաւի են և պատրաստ են թարկուելու փորձառու առաջնորդութեան: Արդ, ինչպէս անենք, որ պահանջն ու առաջարկութիւնն իրար գտնեն: Ամսագրերն, օրագրերը, հասարակական զրազարաններն հասարակութեան ինտելիգենտ դասի տրամադրութեան տակն են, բայց այդ գեռ բաւական չէ. անհրաժեշտ է նաև փորձառու առաջնորդի ազդեցութիւնը և ահա հէնց այստեղ էլ կրթուած կինը կարող է օգտակար լինել: Աղջիկների մի ահագին բազմութիւն միջնակարգ դպրոց է աւարտում և այս կամ այն պատճառով չի կարողանում լրացնել իւր ուսումը բարձրագոյն դասընթացներով: Այդ տեսակ աղջիկների համար խելօք, կրթուած, շնորհքով կինը կարող էր ամենամեծ ծառայութիւնը մատուցանել: Նա կօգնէր նրանց պարագմունքները շարունակել, կենդանի հետաքրքրութիւն կզարթեցնէր նրանց մէջ գէպի գիտութիւնը և ձգտումն դէպի լուրջ աշխատանքը: Գիմնադիայի դասընթացն աւարտող աղջիկն այնտեղից գիտութեան ծարաւ է տանում. բայց ընտանեկան սարք ու կարգը շարունակ անջատում են նրան կանոնաւոր զբաղմունքներից և հէնց այստեղ էլ անհրաժեշտ է կողմնակի ազդեցութիւնը, հասուն, զարգացած մտքի առաջնորդութիւնը: Ինտելիգենտ կինը բարի գործ կանի, եթէ իւր դուները բանայ այդպիսի աղջկայ առաջ և կազմակերպի իւր տանը մի տեսակ բարձրագոյն կուրսեր նրանց համար: Դասաւանդութեան ոչ մի եղանակ այնքան հրաբուրիչ չի կարող լինել, որքան այս եղանակը, որ լոկ անձնական բնաւորութիւն ունի, ուր աշակերտն ու ուսուցիչը միանում են մի ընդհանուր աշխատանքի մէջ և՛ որպէս ընկերներ խորհրդածում են իրերի մասին: Այս փորձը ոչ չափազանց շատ ժամանակ է պահանջում և ոչ շատ ջանք: Կարելի է մի դասատուն կազմել, որ շարաթական մէկ կամ երկու անգամ հաւաքուի և մի ժամ խօսակցի այնպիսի առարկաների մասին, որոնք գործադրուում են կեանքի մէջ: Ինչն աւելի հետաքրքիր կարող է լինել քան՝ օրինակ՝ Պէրիկլէսի ժամանակի ուսումնասիրութիւնը յունական պատմութեան մէջ, այդ շրջանի յոյս բանաստեղծներից հատուածներ կարդալով հանդերձ. այդ պարագմունքների վրայ կարելի է աւելացնել էլի խորհրդածութիւններ նոյն շրջանի յունական արուեստի վրայ կամ ընթերցանութիւն Մա-

գաֆֆիից «Հասարակական կեանքն Յունաստանում»: Ոչ պակաս շահաւէտ և հետաքրքիր են և ուրիշ պատմական ժամանակաշրջանները, օրինակ Լուզովիկոս ԺԴ-ինը՝ Փրանսիական պատմութեան մէջ, Եղիսարեթի ժամանակաշրջանը՝ անգլիական պատմութեան մէջ, որպէս անգլիական ազգի զարգացման ամենափայլուն շրջան: Ոչ մի առարկայ չկայ ինքն ըստ ինքեան այնքան հետաքրքիր և հարուստ կողմնակի ընթերցանութեամբ, որքան անգլիական գրականութեան ուսումնասիրութիւնը: Բրուկի «Անգլիական գրականութեան այբբենարանի» սքանչելի ստուերագիծը գրականութեան զբաղմունքների համար կարող է իբրև օրինակ ծառայել, Այդ ձեռնարկի օգնութեամբ կարելի է հերթով ծանօթանալ անգլիական գրականութեան բոլոր նշանաւորների հետ: Զանազան հեղինակներին աշակերտուհիների մէջ կարելի էր բաժանել այսպէս, որ իւրաքանչիւրը նրանցից մէկի հետ ծանօթանալուց յետոյ կարողանար հետեւել դասարանում հաղորդել նրա կեանքի էական դէպքերի մասին և թէ ի՞նչ տեսակ ազդեցութիւն են գործել նրա երկերը իւր ժամանակի զարգացման վրայ: Ուսումնասիրութեան համար մի ընդարձակ դաշտ են հանդիսանում և արուեստները: Ով չի ցանկանում արուեստներն ուսումնասիրել նրանց տեխնիքական կողմից, այնուամենայնիւ նրա համար շատ հետաքրքիր կլինի ծանօթանալ նրանց զարգացման պատմական ընթացքի հետ այն չափով, որ հնար ունենայ նորագոյն կրթութեան զանազան զարգացմանը հասկանալ: Այս բոլոր խնդիրներն անսպառ աղբիւր են գիտական կրթութեան ծարաւի մարդկանց համար: Ամեն մի կին, որ կամենում է նման մի փորձ անել, կարող է զբաղմանց առարկաների ընտրութիւնը յարմարցնել իւր անձնական ճաշակին և հայեացքին և այն անձանց պահանջին, որոնց օգտակար լինել է ուզում: Այդ զբաղմունքների մէջ այնքան էական չէ ձեռք բերելի ծանօթութեան քանակը, որքան մտաւորապէս զբաղուելու սովորութեան իւրացումն»:

Վերը յիշած դասատուների կազմակերպութեան ժամանակ հարկաւ ի լուր ընթերցանութիւնը ամենապիտանոր դերն է խաղում. բացի այդ չպէտք է մոռանալ որ ամեն մի բարի ըսկզբնաւորութիւն աւելի լաւ է անգործութիւնից և որ ժողովի կազմակերպութիւնն ու կանոնադրութիւնը եթէ միայն պահանջ զգացուի, պիտի հիմնուին ամենապարզ սկզբունքների վրայ:

Եզուարդ Էվերէտտ չէլը յիշելով իւր հովուական գործունէութիւնն ասում է, որ պատանեկութեան կրթութեան նպատաւոր լինելու իւր փորձերի մէջ, ընթերցանութեան

դասերն ամենամեծ օգուտն էին բերում: Նա հետեւելով միջոցներն է յանձնարարում ընթերցանութեան այդպիսի դասարաններ կազմելու. «Յանկալի է որ դասատուներն իւր թուով այնքան լինէր, որ յարմարութիւն ընձեռէր խօսակցելու աշակերտների հետ: Եթէ նրանց թիւը երևանից անց լինի զժուար թէ նրանք մէկ մէկու հետ մօտիկնան. բազմամարդ ժողովում նրանց խօսակցութիւններն այնպէս անկեղծ չեն կարող լինել, ինչպէս փոքրիկ շրջանում, ուր ոչ ոք իւր կարծիքներն արտայայտելուց չի քաշուում: Սինեկի մեծութիւնն էլ պէտք է ի հաշիւ առնել»:

Ես կարծում եմ որ առարկայի ծաւալը շատ ընդարձակ չպիտի լինի: Յանկալի էր որ աշակերտներն սկզբից իմանային առաջիկայ դասընթացի ծրագիրը և կարող լինէին յարմարեցնել իրենց ընթերցանութիւնը նոյն ծրագրին: Նոյն իսկ այն վիպասանութեանց ընտրութիւնը, որոնք հանգստութեան համար են ծառայում, լրագրական և ամսագրական յօդուածների ընտրութիւնը պէտք է յարմարուին պարապմունքների առարկայի հետ: Դասարանի ղեկավարը ժամանակի մի բաւական բաժին պէտք է նախապատրաստութեան նուիրի, նա որքան շատ գիտենայ այնքան լաւ է անշուշտ: Բայց ամենից աւելի անհրաժեշտն այս է, որ նա միշտ դասարանի առաջն ընկնի և նախաժեշտն այս է, որ նա միշտ դասարանի առաջն ընկնի և նախապէս իմանայ թէ ինչ պիտի կարգան և ուսումնասիրեն: Դէպքը բերած ժամանակը նա չպէտք է վախենայ իւր տգիտութիւնը խոստովանելուց: Ես գոնէ կգերազասէի որ առաջնորդողը գործնական տեղեկութիւններ ունենար այն գրքերի մասին, որոնք վերաբերում են զբաղմանց առարկային քան ընդարձակ տեղեկութիւններ նոյն առարկայի մասին՝ ընգհանրապէս: Հարկաւ հաճելի է երկուսն էլ միասին ունենալ: Կարծում եմ թէ դասարանը խոհեմութիւն կանի, եթէ զբաղմանց առարկայի ընտրութիւնը առաջնորդողին թողնի: Այս ներածական կանոնները տալով ես մասնաւորապէս պնդում եմ, որ դասարան չընդունուին այն աշակերտները, որոնք չեն ցանկանում մշտական ունկնդիր լինել: Ոչ մի բան այնքան վնասակար չէ, ինչքան իւրից թափուր լապտերներով կոյսերի ներկայութիւնը, որոնք արդէն դասընթացի կիսից աւելի վաղ ընկնում են անթափանց խաւարի մէջ: Ես կարծում եմ զուր չէր լինի սկզբից մի փոքրիկ վճար նշանակել, մէկ կամ կէս դօլլար, որը կարելի էր զբաղմանց գրքեր գնելու, ընթերթի, բարեգործութեան կամ որևէ ուրիշ բանի վրայ գործ գնել: Վճարքի նպատակն է հասարակութիւնն ապահովել անյուսալի ունկնդիրներից:

Ներկայ եղողներից ամեն ոք պէտք է յուշատետր ունենայ և ով նկատողութիւններ չի գրում պէտք է դուրս ձգուի դասարանից, որովհետև դասարանում լսածը և չարձանագրուածը մի ականջից մտնում՝ միւսից դուրս է գալիս, մինչդեռ նա տնային աշխատութեանց համար նիւթ պէտք է դառնայ:

Համոզուելու համար թէ արդեօք բոլորն են արձանագրում դասախօսութիւնները, շահաւէտ է մի մատեան ունենալ և դասի վերջում յանձնել ունկնդիրներից մէկին մտցնել այնտեղ դասախօսութեան համառօտութիւնը: Այդ արձանագրութեանց մեծութիւնը սահմանափակուած պիտի լինի, ոչ աւելի՝ օրինակ, քան մի տպագրական երես: Աշակերտների փառասիրական ջանքերը, որ գործ են գրուում այդ նկատողութիւններն ընդարձակելու վրայ, ոչ մի կերպ չպէտք է թոյլատրուին: Համառօտ հաշիւ լսած դասախօսութեան մասին, ահա այն ամենը, ինչ որ պահանջուում է աշակերտից:

Դասախօսութեանց ղեկավարը շուտով կորոշի թէ անգամներից ով ինչ կարող է անել և թէ ի՞նչ բանի ընդունակ է: Պարապմունքների ուրուագիծը կազմելիս՝ նա հեշտութեամբ կըմբռնի սովորողների պահանջները: Նա չպէտք է մոռանայ որ ներկայ եղողները դասատուն են գալիս իրենց ազատ կամքով և ուրեմն՝ աշակերտներին ստիպելը նրա գործը չէ. այն ամենը ինչ որ նա կարող է անել՝ հետաքրքրել ունկնդիրներին և իւր դասախօսութիւններն ըստ կարելոյն օգտակար դարձնելը:

ԳՐՔԵՐ ԾԱՐԵԼԸ.

Ամէն ոք իւր սեփական գրքերը պիտի ունենայ: Գրագուրդ տունը անպտուղ Սահարային է նման. և որքան այդպիսի տներ կան: Թէպէտև մենք գրագէտ մարդիկ ենք, սակայն ամենից յաճախ մեզնում այնպիսի տնական սարգ ու կարգ է պատահում, ուր աւելի հոգում են գնոջ պատկերներ և ուրիշ զարդարանքներ ձեռք բերել, քան գրագրարաններ կազմել: Ամենեին զարմանալի չէ եթէ այդ տեսակ տների բնակիչները հարստութեան և ճոխութեան գրկում լոկ աղքատներ են մտաւորականի նկատմամբ:

Միտէր Բիչերի իմաստալից խօսքերից մէկը ամենանշանաւորներից է, ուր նա տնական գրագրարանների մասին է խօսում. «Մենք մարդկանց մասին դատում ենք նըրանց տնական սարք ու կարգով. ամէն մի չնչին բանով, որի վրայ դժուար թէ ուշք էլ դարձնի տանտէրը: Նախկին ժամա-

նակներում, երբ դեռ քիչ էին խաները, տեղ տեղ էլ ամենեին չկային, երբ գաղթավայրի բնակիչ ամէն մի ագարակը կարող էր ճամբորդի համար ապաստանարան լինել, արևմուտքում ճանապարհորդելիս էական խնդիր էր օթեան ընտրելու հմտութիւնը նրա արտաքին տեսքով: Ամենից առաջ մեզ հետաքրքրողն այս էր, արդեօք ծաղկանոց կա՞յ: Եթէ տան մօտը ծաղիկներ, ծառեր չկային, մենք այդպիսի տան վրայ չէինք վստահանում. մինչ դեռ մենք անգորր սրտով էինք մօտենում այն բնակարանին, որքան էլ խղճուկ լինէր նրա արտաքինը, որքան և աղքատիկ նրա սարգ ու կարգը, եթէ որ լուսամուտներում ծաղիկներ տեսնէինք, կամ թէ խաղողի որթը փարելիս լինէր պատի շուրջը. կատարելապէս վստահ էինք թէ այստեղ բնակուում են աշխատասիրութիւնը, մաքրութիւնն ու ճաշակը: Նոր աշխարհում, ուր մարդիկ ստիպուած են գոյութեան համար կռուել, ոչոքի մտքովը էլ չէր անցնի ծաղիկների հոգսը քաշել, եթէ որ այդ նրա հոգեկան պահանջը չլինէր. և այդ պահանջը որ ծլած էր հասարակ, անկիրթ մարդկանց մէջ, նման է անպտուղ ժայռի վրայ բսած ծաղկին, որ դուրս է պրծնում նրա ճեղքից: Մենք հազիւ թէ սխալուում էինք. ծաղկանոցը միշտ նշան էր թէ այդ բնակարանում բարի մարդիկ, մաքուր անկողին և լաւ հաց կայ: Հասարակութեան ուրիշ խաւերում նշաններն էլ ուրիշ են: Ճոխագարակի ծաղիկները յաճախ ապացոյց են միայն թէ տանտէրը լաւ պարտիզպան ունի, կամ թէ նա մրցում է հարևանի հետ: Իսկ գրագրարան է դնում միայն նա, ով նրա կարիքն է զգում: Եթէ մենք մի ոչ հարուստ մարդու բնակարան այցելելիս տեսնում ենք, որ նա բաւականանում է հասարակ կահկարասիով, էժանագին գորգերով և գերադասում է դրամ ծախսել գրքեր ձեռք բերելու համար, նա միանգամից բարձրանում է մեր աչքում: Գրքերը զարգարանքի համար չեն, բայց ոչ մի բան այնքան յարմար չէ բնակարանը զարդարելու, որչափ նրանք: Կալենկօրի կամ նոյն իսկ թղթեայ կազմերով միշար գիրքն աւելի շուտ ապացոյց է առաւել նուրբ ճաշակի, քան քանդակազարդ նրբագոյն դարակը թանկագին ջնշին բաներով. բնակարանի զարդը լաւ է գրքերը լինին, քան ճոխ սարք ու կարգը: Թէ մէկն և թէ միւսը լաւ են. բայց յամենայն դէպս գրքերը լաւագոյնն են: Մի քանի օր լաւ ծանօթի տանն անցկացնելն առանց գրքերի, բայց ճոխ սարք ու կարգի մէջ, երբ շուրջը թանգնոց գորգեր են, հանգիստ բազկաթոռներ, կարծես թանկեղէն, նման է այն բանին, կարծես տանտէրը փափրիկ բարձիկներ, նման է այն բանին, կարծես տանտէրը մտադիր է կաշառել ձեր մարմինը և խաբել ձեր հոգին: Ցա-

ւալի չէ արդեօք տեսնել մի հարստացած մարդ, որ մեծ գումարներ է վատնում իւր շուրջը տիրող շուքն աւելացնելու, նրբահամ խորտիկների և սնափառ ճոխութեան, մի խօսքով ամեն բանի վրայ, ի բաց առեալ իւր հոգու պահանջները: Մենք շատ այդպիսի հարուստ տներ գիտենք, ուր յանդգնութիւն կլինէր հարցնելն իսկ անգլիական ամենասովորական մի դասակարանի շարադրութիւնները: Սեղանի վրայ ի ցոյց գրուած մի քանի շքեղ հրատարակութիւն, մի քանի ծաղրական այլանդակութիւն և դրանց հետ մէկ տեղ մի քանի կրօնական գրքեր, անհինչ որ կայ: Ո՛չ բանաստեղծներ, ո՛չ վիպասանութիւններ, ո՛չ պատմական շարադրութիւններ, ո՛չ ճանապարհորդութիւններ կամ կենսագրութիւններ, ո՛չ առասպելախառն մտացածիւն հեքիաթներ: Իրա փոխարէն կանգունը երեք դօլլար պատառներ, կանգունը չորս դօլլար գորգեր: Գրքերը հոգու լուսամուտներն են. բնակարանն առանց գրքի նոյն է թէ սենեակն առանց լուսամտի: Ոչ ոք իրաւունք չունի երեսխաններ դաստիարակել առանց գրքերով շրջապատելու նըրանց, եթէ միայն միջոցը ներում է գիրք ձեռք բերել: Երեսխաններն ընտելանում են գրքերին փոքր հասակից և այդ պատճառով էլ շուտով կարգալ են սովորում: Հարցասիրութիւնը զարթում է նրանց մէջ ընթերցանութեամբ և զարգանում է նրան համեմատ. իսկ հարցասիրութիւնը մատաղ հասակում ամենաուղիղ միջոցն է կրքերի և ախտերի գէմ: Մնում է լուի խղճալ այն աղքատ հարուստներին, որոնք իրենց ճօխ տներումըն ապրում են առանց գրքերի: Մրա փոխարէն մենք ուրախանում ենք այն աղքատների վրայ, որոնց մատչելի է դարձել գրքեր ձեռք բերելը ի շնորհս նրանց արգի արժանութեան, այնպէս որ ամեն ոք կարող է տարեկան հարիւր գիրք աւելացնել իւր գրադարանի վրայ, ծախսելով այնքան որքան արժեն նրա գարեջուրն ու ծխախոտը: Մշակ դասակարգի և այն մարդկանց մէջ, որոնք օրապահիկով են գլուխ պահում, բոլոր ձգտումներից աւելի շատ պէտք է խրախուսել գրքեր ձարելունը, և գրադարաններ կազմելունը: Մի փոքրիկ տարէց տարի աճող գրադարան պատիւ է բերում երիտասարդ մարդուն: Գիրք ունենալը մարդու բարոյական պարտքն է: Գրադարանը ճոխութիւն չէ, այլ կեանքի անհրաժեշտ պայմանը»:

Զուտէքը իւր «Օկսֆորտի դպիր» վիպասանութեան մէջ գուրս է բերում մի մարդ, որ ամեն բանում իրեն զրկում է, որպէս զի միայն գիրք գնէ:

«Սեպհական գիրք չունենալը աղքատութեան ամենարարձր

աստիճանն է. բանն այդտեղ մի հասցնէք», բացականչում է Ռէսկինը: «Եթէ դուք միայն մի սենեակ ունիք, որ լուսաւորուում է բոցավառ կրակարանով, ասում է մի վանական, նման այն կրակարանին, որ Աբրահամ Լինկոլն ունէր, այնպէս վարուեցէք ինչպէս վարուում էր Աբրահամ Լինկոլն. օճախի մի անկիւնը լատկացրէք ձեր գրադարանին և դրէք այնտեղ ձեր գրքերը: Մի ուրիշ անհերքելի ճշմարտութիւն ասել է սէր Արթուր Հէլպուր. «Մարդ գրքից այնքան օգուտ չի ստանայ, որքան այն դէպքում երբ իւր սեփականութեան համար է գիրք ձեռք բերում»:

Թէ ինչ ազգեցութիւն է անում գրադարանը ընտանիքի վրայ, մանաւանդ նրա կրտսեր անդամների վրայ, կարիք էլ չկայ խօսելու: Մեծ մարդկանց կենսագրութիւնները կարգալիս մենք միշտ նկատում ենք գրքերի ազգեցութիւնը նրանց կեանքի վաղագոյն շրջանի վրայ «ես սիրում եմ գրքեր, ասում է Հօլմսը, որովհետև ծնել և մեծացել եմ նրանց շրջանում»: Ապա նա կատակաբանական ոճով պատմում է թէ ինչ գրքերով է դաստիարակուել. չնայելով իւր չափազանց գրասիրութեան, նա ափսոսում է, որ էլ աւելի չի կարդացել: «Իրանք մեծ մասով աստուածաբանական գրքեր էին. ես պարփակուած էի պատկանելի հատորներով, որոնց բարեպաշտ ծանրութեան տակ ձկուում էին դարակները: Ի թիւս այլոց կար Վալտօնի Աստուածաշունչը մի քանի լեզուներով: Վերին դարակում բարձրանում էր Ֆլէօրիի «Հոգևորականութեան պատմութիւնը» 25 հատորով in octavo: Հատորներից մէկում որդը ծակել էր առաջինից մինչև վերջին երեսը, այնպէս որ կազմուել էր մի սնամէջ կլորակ ծակ, կարծես գնդակահար արած լինէին: Հայրս այս առիթով մի ոտանաւոր էր գրել, որ այսպէս էր սկսուում. «Տեսնում ես որդեակ թէ ինչ է անում ջանասիրութիւնը»: Յաւում եմ որ այս դասիցը չօգտուեցի ես: Չեմ կարող ասել թէ ես մահկանացուներից ամենածոյն էի, բայց շատ բանում պակասում էր իմ ջանասիրութիւնը: Միտքս չէ արդեօք ես իմ շարադրութեանց մէջ յիշել եմ այս թէ ոչ, բայց յամենայն դէպս որդի մասին դասը կարող է երիտասարդներին օրինակ ծառայել: Էդմոն Աբուն էլ իւր ընթերցանութեան սովորութիւնը վերագրում է հօր հոգացողութեանը, որ գրադարան է ունեցել: «Ընթերցանութիւնն անտարակոյն հիանալի բան է և հայրս ինքն իրեն չէր զրկում այդ բաւականութիւնից, հէնց որ ժամանակն ու միջոցները ներում էին: Հետզհետէ նա ձեռք բերեց 5000—6000 ընտիր երկեր: Նա անդադար վերընթե-

նում էր օգտակար գիտութեանց Համագիտականը: Չորս հարե-
 ւանի հետ նա բաժանորդ էր գրուում Փարիզի ազատ թերթին.
 ամենից աւելի նա այն տեղեկութիւններն էր գնահատում, որ
 ինքնուրոյն կերպով էր ձեռք բերում: Համբերութեամբ, սիրով
 նա վարժեցնում էր ինձ սեփական աչքերով նայել, և ազա-
 տօրէն մտածել, փոխանակ վզիս փաթթելու իւր գաղափարնե-
 րը, որոնց իմ հնազանդ միտքը կընդունէր կոյր պատրաստա-
 կանութեամբ»: Վերջնականապէս համոզուած լինելու համար
 հերթը է յառաջ բերել ալեգարդ լրագրողի՝ Չարլզ Կօնգտօնի
 խօսքերը այն բանի մասին թէ հարկաւոր է խրախուսել երե-
 խաների սէրը դէպի գրքերը և խնամով վերաբերմունքը նրանց:
 «Ես խորհուրդ կտայի խրախուսել երեխաներին յարգանքով վե-
 րաբերուիլ գրքերին ամենավաղ հասակից: Այդ անհրաժեշտ է
 այն պատճառով, որ երեխաները դպրոցում շատ հեշտութեամբ
 են սովորում անկարգ կերպով վարուիլ գրքերի հետ: Այդ բա-
 նը ինձնում մի միտք է ծնում գրքերի խնամարկութեան և
 պահպանութեան մասին: Ես ճանաչում էի երիտասարդ մար-
 դիկ, որոնք չափազանց խնամքով էին վարում իրենց գրքերի
 հետ և տեսնում եմ որ ծնողները պէտք է խրախուսեն այդ
 յատկութիւնը երեխաների մէջ: Հաճելի է ինձ տեսնել, որ մա-
 նուկը ուշի ուշով է խնամում իւր գրքերը, փաթաթում է նը-
 րանց և դարակի վրայ կարգով շարում. այդպիսի էակի մէջ ես
 ապագայ ժողովողի և մատենախօսի սաղմն եմ տեսնում: Նոյն
 բանը ես հասակաւորներին կասեմ: Նոյնքան դժուար է գիրք
 ձեռք բերելը, որքան հեշտ կորցնելը ուրիշներին կարգալու-
 տալով: Գրադարան կազմել չի կարելի առանց բաւարար աշ-
 խատանքի: Բոլոր մեծ ժողովածուները քչով են սկսել: Մի հե-
 տաքքեր պատմուածք կայ Բերտէնի «Գրքերի սիրահարներ»
 շարադրութեան մէջ, թէ փնչպէս է կազմուել Ռիչարդ Հերբերի
 հոյակապ գրադարանը: Նա պատահմամբ ձեռք բերեց Հենրի-
 կոս Պիգամի «Բազմազանութեան հովիտներ» փոքրիկ հատորը:
 Նա այդ գիրքը ցոյց տալու տարաւ Մ=ր Բինդլէին՝ յայտնի
 գրասէրին ստուգելու համար թէ հետաքրքիր է արդեօք թէ ոչ:
 «Ո՛չ այնքան, պատասխանեց Բինդլէյը, բայց և այնպէս բաւա-
 կան հազուագիւտ դիրք է»: Այդ օրուանից Ռիչարդ Հերբերը
 գրասէր դարձաւ: Նա ընդունակ էր հարիւր վերստ ճանապարհ
 կտրել մի հետաքրքիր գիրք ձեռք ձգելու համար: Եթէ ջանի-
 ները ուզում են գրադարան կազմել, խորհուրդ ենք տալիս
 գիրք դուրս չտալ ուրիշին կարգալու համար: Գրքերն աւելի
 հեշտ կորչում են, քան ձեռք բերուում: Ո՛չ մի բան իմ աչքումս

այնքան անբարոյական չէ, որքան ընթերցման համար գրքեր
 ստանալն ու ձգձգելը: Մարդիկ արդարանում են թէ մոռացել
 են, բայց ես լաւ չեմ հաւատում այդ առարկութեանը: Ես պատ-
 րաստ եմ լուի այդ մասին, երկնչելով մի գուցէ վիրաւորեմ մէկն
 ու մէկին, որի գրատան դարակի վրայ գտնուի իմ անուանադրոշ-
 մով մի գիրք, եթէ միայն չի ոչնչացրել: Թէ որ ստիպուած
 չլինէի խօսքս երեխաներին ուղղել և խնդրել որ խնամեն ի-
 րենց գրքերը: Ժամանակով շատ հաճելի կլինի նրանց համար
 նայել այն բաների վրայ, ինչոր հիացմունք էր պատճառում
 այն երջանիկ ժամանակներում, կրք աշխարհում ամէն բան նը-
 րանց համար նոր էր և ամեն մի փանաքի իր նրանց սիրտն
 էր շարժում: Ի հարկէ փոքրիկ արարածներից պահանջել չի
 կարելի, որ լիովին գնահատեն գրքերի նշանակութիւնը, բայց
 կարելի է ներշնչել նրանց, թէ ինչոր արժանի է ընթերցանու-
 թեան, արժանի է և խնամքի»:

Վաղուց չէ որ մի շաբաթաթերթում ես մի քանի խոհա-
 կան տեսութիւններ կարդացի նոյն խնդրին վերաբերեալ: «Ոչ
 մի բան այնքան կարևոր չէ, որքան սիրոյ աճումն դէպի գրքե-
 րը վաղադոյն, մանկական տարիներում և այդ նպատակի
 համար տնական գրադարանների կազմութիւնից էլ առաւել յա-
 ջող միջոց չկայ: Գրադարանի համեստ սկզբնաւորութիւնից
 չպէտք է քաշուել և դուք կզարմանաք նրա արագ աճելութեան
 վրայ, միայն թէ գրքերը մի ցրուէք, այլ ի մի ժողովեցէք: Իւ-
 րաքանչիւր երեխայ կարող է ինքը շինել հասարակ դարակներ:
 Արժէ միայն սկսել գիրք ժողովել և այնուհետև ամեն բան լաւ
 կերթայ: Գրքեր ժողովելու վճիռը դնելով, իբրև կանոն ընդու-
 նեցէք վատ գրքեր ամենևին ձեռք չբերել. մի լաւ գիրքը հա-
 րիւրաւոր վատ գիրք արժի: Գրքերի ներկայ արժանութեան
 պատճառով ամեն ոք կարող է գրադարան կազմել»: Չահիլները
 չպէտք է մոռանան որ քչից սկսելով ժամանակով կարող են
 փայլուն արդիւնքների հասնել: Պատմաբան Հիբբօնը իւր գրա-
 դարանի կազմութեանը ձեռք գարկելիս իւր իրաւասութեան
 տակ այնքան գրքեր ունէր միայն, որքան կարող է ունենալ
 ամէն մէկը, սակայն հետզհետէ նա այդ գրադարանը բազմա-
 քանակ գրադարաններից մէկը դարձրեց և ամենալաւ կազմու-
 թեամբ, «իմ երկերիս հիմքը: Իմ կեանքիս ամենալաւ պաճու-
 ճանքը» ինչպէս ստում է նա:

Գրքերի ընթերցումից զատ հէնց միայն նրանց գոյութիւ-
 նը տանմէջ անադին օգուտ է բերում: Բօսուէլը պատմում է, որ
 դօկտօր Զօնսօնը մինչև անգամ սիրում էր գրքերի կազմար-

մատի վրայ նայել: «Հազիւ կարողացանք հարց ու բարև անել Միստէր Քէմբրիջի հետ նրա գրադարանում, երբ Ջոնսօնը շտապով մի կողմը քաշուեցաւ և ազան հայեացք ուղղեց գրքերի կազմարմատի վրայ: Սէր Ջօշուա Ռէյնօլդսը նկատեց. նա այնպէս է վրայ պրծնում գրքերի, ինչպէս ես պատկերները վրայ, բայց ես աւելի եմ շահուում, որովհետև պատկերների վրայ ես աւելի բան եմ տեսնում, քան թէ նա գրքերի մէջ: Մ—ր Քէմբրիջը շատ քաղաքավարի կերպով նկատեց. դօկտօր Ջոնսօն, ես պիտի խոստովանեմ, որ նոյնպիսի սովորութիւն ունիմ ինչպէս դուք: Չարմանալի է որ մենք երկուսս էլ այդպիսի հակումն ունինք դէպի գրքերի կազմարմատները: Ջոնսօնն յանկարծ սթափուելով պատասխանեց. սէր, պատճառը շատ պարզ է. երկու տեսակ գիտութիւն կայ. կամ մենք ինքներս ենք ուսումնասիրում առարկան, կամ իմանում ենք թէ նրա մասին որտեղից կարելի է տեղեկութիւններ քաղել: Երբ մենք ենք ուսումնասիրում մի բան, անհրաժեշտ է մեզ գիտենալ թէ որ գրքերի մէջ խորհրդածութիւն կայ այդ առարկայի մասին: Այս հանգամանքն ստիպում է մեզ գրացուցակներին և գրքերի կազմարմատներին դիմելու գրադարաններում: Սէր Ջօշուան իմ ուշադրութիւնը դարձրեց Ջոնսօնի հապճեպ առարկութեան վրայ: Այն, ասացի ես, նա պատրաստուելու պէտք չունի. հարուածը ուղիղ և շեշտակի է զարկում»: Շատերը զարմանալի արագութեամբ են ընտելանում իրենց գրադարանին. լաւ ծանօթ տնական գրադարանը աւելի է գոհացնում մեզ քան անհագին բայց անծանօթ մի գրադարան:

Դօկտօր Լանգֆօրդը, որ մօտերքս անգլիական հեղինակներից շատ օգտակար ընտիր հատուածների մի ժողովածու է կազմել, ուր խօսուում է գրքերի և ընթերցանութեան մասին, Չարլզ Լամբի հետևեալ խօսքերն է յառաջ բերում. «Ինչ հիանալի բնակավայր է վաղեմի գրադարանը»: Շարունակութեան մէջ խօսում է գրքերի հասարակութեան մասին. «Գրքերի վրայ նայելն իսկ վայել գուարճութիւն է: Չեր առաջ աստուածներին խնձոյք կայ. դուք զիտակցում էք թէ կարող էք մասնակից լինել նրան և ձեր վայելչութեան բաժակը լիովին լցնել: Այդ խնձոյքում երևակայութիւնը փոխարինում է նեկտարին և ամբրոսին և մի առ ժամանակ ուրիշ կերակուր միտքդ էլ չի գալիս: Դուք գրօսնում էք մի մարգագեանի վրայ, որ արքայական զանգուրներով է ծածկուած, Հեսպերիդների այգում դուք ոչ մի ցանկութիւն չունիք որևէ ծաղիկ կամ պտուղ քաղելու: Հերիք է որ նրանք այդտեղ են, որ նրանց պահապան

ողիները պատրաստ են տալու ձեզ և մէկը և միւսը»: Այսպիսի զբաղմունք կարող է կրել միևնոյն չափով և ընդարձակ գրադարանի տէրը և միայն մի քանի գիրք ունեցողը: Ըշմարիտ գիտակ անձը սիրում է իւր գրքերը. նրանք կենդանի էակներ են դառնում նրա համար: Դժբախտ Սօուէյը, որ մտքի չափազանց լարումից ցնորուել և նոյն իսկ կարգալու ընդունակութիւնը կորցրել էր, ամբողջ ժամեր իւր գրադարանումն էր անցկացնում. մօտենում էր գրքերին, ձեռքն էր առնում նրանց, փայփայում և նրանց վրայ էր դնում իւր գլուխը:

Հարկ չկայ գրասէրներին այս կամ այն գիրքն առաջարկել, ցուցակներ ներկայացնել և ասել. «Գնեցէք ահա այս գրքերը և ձեր գրադարանը կամբողջանայ»: Յուսամ թէ նախընթաց գլուխներում բաւական պարզեցինք թէ ինչպիսի գրքեր պէտք է կարգալ և ինչպիսի գրքեր պիտի ընտրէ սիրողը, որ ուզում է գրադարան կազմել: Կրթուած մարդը գրավածառնոցի յայտարարութիւնները կամ գրացուցակը աչքից անցկացնելով միանգամից կարող է որոշել թէ որ գրքերն են իրեն յարմար և որոնցից պիտի խուսափի: Գրքեր կան որ միայն ժամանակաւոր հետաքրքրութեան համար են և այս հանգամանքը աչքի առաջ պիտի ունենալ գրադարանի համար գրքեր գնելիս: Այն տեսակ գրքեր մի գնէք, որոնց համար պիտի կարմրէք և յիշեցէք որ «Գիտութիւնը երկայն՝ իսկ կեանքը կարճ է»: Մէկ խօսքով գրքեր ընտրեցէք այնպէս, ինչպէս ընտրում էք բարեկամներ և դաստիարակներ:

Տնական գրադարան կազմողը չպէտք է լքանի թէ աշխարհում այնքան շատ գիրք կայ, մինչդեռ ինքը կարող է միայն մի աննշան քանակութիւն ձեռք բերել: Էմէրսօնն ասում է. «Քէմբրիջի գրադարանին այցելելիս՝ ես միշտ այն համոզմունքին եմ գալիս թէ այդ գրադարանի ամենալաւ մասը ես ունիմ տանս: Գրացուցակն աչքի անցնելով, նոյն դասական երկերն եմ գտնում այնտեղ, որոնց կարելի է տեսնել և ամէն մի մասնաւոր գրադարանում. մնացածը պատահական աննշան հաւաքածու է: Դրքերի մի ստուար մասը զանազան մեկնութիւններ ու բացատրութիւններ են ժամանակի մեծ ձայների արձագանքները»: Միևնոյն իմաստով է ասել Լօնգոնի մի լրագիր. «Հաճելի է մտածել թէ բրիտանական թանգարանի գրատան նման անագին գրադարան չունենալով հանդերձ, կարելի է սակայն այնքան քանակութեամբ գիրք ունենալ, որ տեղաւորուին մի փոքրիկ սենեկում. նրանք կպարունակեն այն ամէնը, եթէ ոչ աւելի, ինչոր կարգալու արժանի ստեղծել է մարդկութիւնը: Անգլիա-

կան բանաստեղծների ընդարձակ ժողովածուն, Չառուէրից սկսած մինչև Կառուպէրը, կարելի է տեղաւորել մի փոքրիկ դարակում և հազիւ թէ միւս՝ բոլոր յետոյ գրուածները երկրորդ դարակը լցնեն: Այդ ժողովածուի երեք քառորդը միայն պատմական նշանակութիւն ունի: Լաւ գրադարանին նայելիս մարդ տխրում է մտածելով թէ որքան քիչ են մեծ հեղինակութիւնները և հնձից յետոյ որպիսի աննշան տոկոս իսկական հատիկ է ստացուում:

Տնական գրադարանը գլխաւորապէս մաքուր և յստակ պիտի պահուի: Անբնակ տներում փակուած գրքերը կիսով չափ կորցնում են իրենց օգուտը: Աւելի լաւ է գիրքը գործածութիւնից զզգուի, արևից գունատուի, աւելի լաւ է այնպիսի տեղում պահել, որ կարելի լինի ամէն օր փոշին սրբել, քան թէ ապակեայ բանտում փակել ապակէ, գլխարկի տակ պահուող թռչնոց խրտուիլակի նման: Բաց դարակները գերազասելի են ապակեայ պահարաններից. բացի դրանից մուգ թղթէ կազմերը կարելի է փոխել աւելի ինքնուրոյն կազմերով: Մուգ թղթէ կազմերը լաւ են հասարակաց գրադարանների՝ այլ ոչ մասնաւորների համար:

Օգտակար է այստեղ յառաջ բերել Մ-ը Բօրտմանի տուած միքսանի խորհուրդները: «Ինչ սենեակ էլ որ նշանակուած լինի գրադարանի համար, պէտք է անշուշտ տաք, լուսաւոր և դէպի հարաւային կողմն ընկած լինի և որքան կարելի է լաւ կահաւորուած: Միայն ապակեայ պահարաններ մի շինէք. նրանք ամենևին փոշուց չեն պահպանում այլ լոկ սովորութիւն են դառել: Մի վախենաք, այցելուներից ոչ ոք գրքեր չի վերցնի առանց ձեր թոյլտուութեան: Գրքերն անդադար պէտք են գալիս, իսկ բանալիների ետևից ընկնելը ձանձրալի է: Շատ աւելի դուրեկան է երբ գրքերն աչքի առաջ են, քան երբ նայում են նրանք անմատչելի կերպով, կարծես երկիւղ են կրում թէ չլինի մէկնումէկը իրենց դիպչի, կարծես մեծ բաղդ է սպասում նրան, ով կըրջի նրանց դիւթական երեսը: Շքեղ կազմերի վրայ շատ փող մի վատնէք, աւելի լաւ է այդ դրամները գրքեր շատացնելու գործ գնէք: Գրքերն ամենևին չպիտի չափազանց անձուկ գնէք դարակի վրայ. դրանից փչանում են: Դարակից վերցնելիս կազմարմատի վերի ծայրից պիտի բռնել: Ես շատ անգամ եմ նկատել թէ ինչպէս անփոյթ վարուելուց գրքի կազմարմատներն արագ պոկուում էին: Գրքերը չպէտք է տափակ դարսել իրար վրայ. այդ դիրքով երկար մնալուց ստորինները փչանում են: Ռի-

չարդ Դը - Բիւռի խորհուրդը չպէտք է մոռանալ. «Անմաքուր ձեռքերով երբէք չպէտք է հպիլ գրքերին»: Ամեն օր նրանցից փոշին սրբեցէք, յիշելով որ սենեկի բոյսերի նման նրանք էլ թարմ օդի մշտական հոսանքին կարօտ են: Գրքերը թանկագին բարեկամներ են: Մշտական յարաբերութիւն պահելով մենք կապուում ենք նրանց հետ, երբէք չենք մոռանում, թէ որպիսի վայելք էր պատճառում մեզ նրանց անբարբառ քնքոյշ խօսակցութիւնը և դրա համար էլ նոյնպիսի քնքոյշ խնամքով վերաբերում ենք և մենք. նրանց տան ամենալաւ սենեակն ենք յատկացնում և մեր որդիներին և այցելուներին ներշնչում ենք պատշաճաւոր յարգանք տալ նրանց»:

ՀԱՍՍԱՐԱԿԱՅ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐ.

Իւրաքանչիւր քաղաք գրադարան պիտի ունենայ, որի մէջ գոնէ այնքան գիրք լինի, որքան բնակիչ կայ քաղաքում: Այդպիսի գրադարանը միանգամից քաղաքի մտաւոր կեանքի կենդրոնը կդառնայ և կազդի հասարակութեան բարոյականի վրայ: Էլ աւելի, նրա ազդեցութիւնը կանդրադառնայ և ամբողջ երկրի վրայ, նրա վաճառականութեան և արդիւնաբերութեան վերայ: Գրադարան ունեցող քաղաքը յայտնի կերպով զանազանուում է ուրիշ քաղաքներից. նրա շրջականները ծաղկում են և բարոյապէս և նիւթապէս: «Նրանք, որոնք գործնական կեանքի են հակուած, ասում է նորագոյն հեղինակներից մէկը, թող խորհեն և հասկանան, որ բացի զուտ գրականից գրադարանը պարունակում է բազմաթիւ մասնագիտական գրուածքներ, որոնք անհրաժեշտ են մտքի մշակին և թէ մշակ դասի մտաւոր զարգացումից է կախուած նրանց աշխատանքի որակը և պետութեան բարեկեցութիւնը»:

Հասարակաց գրադարանների օգուտը և այդ օգտի գործադրութիւնը գեղեցիկ կերպով արտայայտուած է մի հասցէի մէջ, որ քաղաքացոցն է ուղղուած: «Այստեղ, ասուած է նրանում, դուք 4000-ից աւելի հին և նոր գիրք կգտնէք, որոնք ձեր տրամադրութեան տակն են: Սեղանների վրայ փռուած են գրացուցակներ. նրանք կօգնեն ձեզ ընտրութիւն անելու: Եթէ գրքեր գտնելում դժուարանում էք, գրադարանապետը կամ նրա օգնականներից մէկը հեշտացնում է ձեր գործը: Գրադարանի այցելուները կվկայեն թէ որչափ մեծ օգուտ են տալիս այդ պարոնները գրքերի ընտրութեան գործում: Դուք այստեղ շատ

ստուգելի գրքեր կգտնէք, որոնք այցելուներէ տրամադրութեան տակն են, համագիտական բառարաններ, որոնք զիւրացնում են ընթերցածի ըմբռնումն: Ձեզ մնում է միայն ոտ կոխել գրադարանի շէմքը, որ անմիջապէս ցանկալի ստուգութիւնն ստանանք: Դուք կարող էք օգտուել գրադարանից ձեր գանազան փեշակներէ համար: Արհեստաւորներն այստեղ կգտնեն իրենց հետաքրքրող խնդիրներէ մասին ամենատեսակ շարադրութիւններ, որոնցից շատերը գեղեցկապէս պատկերազարդած են: Ճարտարապետները, կառուցողները, նկարիչները այստեղի դարակներում անսպառ աղբիւրներ կգտնեն իրենց աշխատանքների համար: Գիւղատնտեսներն ու այգեգործներն էլ այստեղ առատ օժանդակութիւն կգտնեն: Գեղարուեստագէտները ոչ միայն ըննական և գործնական այլևայլ ձեռնարկներ կգտնեն այստեղ, այլ և նկարների և փորագրութիւնների առատ պաշար: Այլևայլ պաշտօնների համար՝ հոգևորականութեան, բժիշկների, իրաւաբանների և գրականական անձինքների համար կան մասնագիտական շարադրութիւններ. նրանցում և այնպիսի հրատարակութիւններ կան, որոնց ոչ ամենքը կարող են ձեռք բերել: Սուրբ գրքով հետաքրքրուողները գրադարանում ահագին քանակութեամբ գանազան տեսակ Ս. Գրոց բառարաններ, մեկնութիւններ կգտնեն, որոնք լոյս են սփռում այդ առարկայի վրայ: Ով որ զբաղուած է է հասարակական հրատապ խնդիրներով՝ լրջութեան, աշխատութեան, տնտեսութեան, հարկերի, տուրքերի խնդիրներով, կանանց վերաբերեալ հարցով, կրթութեամբ, կարող է ամենաընդարձակ տեղեկութիւններ գտնել գրադարանապետի օգնութեամբ: Արքունական և մասնաւոր դպրոցների ուսուցիչները գրադարանից ահագին օգուտ կարող են քաղել թէ՛ յատկապէս իրենց՝ և թէ՛ իրենց աշակերտների համար, որոնց ընթերցանութիւնը ղեկավարելու գործն են յանձն առել: Գիմնագիծների և բարձրագոյն դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները ամեն ժամանակ կարող են ահագին լրացուցիչ տեղեկութիւններ քաղել գրադարանում, որոնք ամրապնդում և թարմացնում են դասարանումը ձեռք բերած ծանօթութիւնները: Ուսուցիչներն ու աշակերտները թէ՛ և ներկայումս օգտուում են գրադարանից, բայց ոչ բաւարար չափով: Ուսուցիչներից շատերը կարող էին գրքեր վերցնել գրադարանից իրենց աշակերտների համար, գրքերի անվնաս ամբողջութեան համար պատասխանատուութիւն յանձն առնելով գրադարանի առաջ. այդ բանը լրացուցիչ կգառնար նրանց ձեռնարկներին: Սովորական ընթերցողին ինչպէս և աշակեր-

տին, գրադարանը ընդարձակ նիւթեր է տալիս: Այստեղ կան ամենաբազմազան առարկաներ. պատմութիւն, կենսագրութիւն, հասարակական և քաղաքական գիտութիւն, ճանապարհորդութիւն և զիւգեր, բանաստեղծութիւն, նկարագրեր և վիպասանութիւններ: Այս բոլորն ընթերցողի համար են: Գրքերի երկար շարքեր, գողտրիկ, տաք և լուսաւոր դահլիճ, ամենուրեք մաքրութիւն և կարգ ու կանոն, քաղաքավարի գրադարանապետներ, այս բոլորն առաջարկուում է ընթերցողին ձրի: Քաղաքացիներն իրաւամբ են պարծնում իրենց գրադարանով: Նրանք շատ անգամ են համոզուել նրա անհերքելի օգտակարութեան մէջը: Սակայն ցանկալի է որ աւելի ընդարձակ չափով օգտուէին նրանցից և աւելի ու աւելի շատ արդիւնք քաղէին: Նա չպիտի ծառայէ իբրև մի զուարճութիւն անգործ հասարակութեան համար, ընդհակառակը պիտի կրթի և զարգացնի վաստակաւոր խորհող դասակարգերին: Նրանից պարտուպատշաճ կերպով օգտուելը ամենամեծ բարիքը կարող է լինել հասարակութեան համար: Մասնաւորապէս երիտասարդութեանը նա կարող է անգնահատելի օգուտ բերել: Մահմանափակ կրթութեան տէր մարդկանց համար, որոնք խանութներում և արհեստանոցներում են զբաղուած, գրադարանն իսկական գանձ է: Քանի որ նրա հիւրընկալ դռները բաց են այցելուներէ առաջ, ոչոք իրեն միայնակ և անպատասպարան չի գգայ: Նա, ում վրայ պարտականութիւն կայ խնամելու երկսեռ ջահիլներին, պիտի մատնացոյց անի նրանց գրադարանը, ինչպէս մի հաստատութիւն, որ նրանց պահանջներին դիմաւորում է և զրդէ նրանց գրադարան այցելելու»:

Հասարակաց գրատան ազդեցութիւնը հասարակութեան զարգացման վրայ վերջին տարիներում առանձին ուշադրութիւն գրաւեց: Բօստօնի դպրոցների հոգաբարձուն ասում է թէ՛ հասարակական գրադարանը իրաւամբ առաջին տեղն է բռնում կրթութեան. և նրա անկապտելի սեփականութիւնն է: Բայց դպրոցները պէտք է պատրաստեն աշակերտներին գրքերի ընթերցանութիւնից օգտուել կարողանալու: «Ընթերցանութիւնը անյիշատակ ժամանակներից դաս է տրուել դպրոցներում, բայց թէ՛ ինչպէս պէտք է գիրք կարդալ, որքան ինձ յայտնի է, ոչ մի դպրոցում չի աւանդուել»:

Հասարակական գրադարանապետը միևնոյն ժամանակ և հասարակութեան մանկավարժը պիտի լինի: Շատ է խօսուած դասատուի ազդեցութեան մասին աշակերտի վրայ և այս

ազգեցութիւնն անկասկած է, ասում է Չարլզ Կէտտէրը, Բօստօնի Ատէնէոսմի գրադարանապետը. այս ճշմարտութիւններն աննշան փոփոխութիւններով յարմար են գալիս և գրադարանապետին: Վերջինս ուսուցչի սկսած գործն է շարունակում, ուշադրութիւն է դարձնել տալիս այն կողմերի վրայ, որոնք ուսուցչի աչքից խուսափել են: Նա պիտի օգնութեան հասնի նրանց, որոնք ամենևին չեն օգտուել ուսուցչի առաջնորդութիւնից: Եթէ հարկւր դէպքից թէկուզ մէկը լաւ արդիւնք ունենայ, այդ էլ հերիք է»:

Ես շատ կցանկայի, ասում է Չարլս Ադամսը, աւելի կենսական կապ տեսնել գրադարանի և ուսումնարանի մէջ. առաջինը վերջնի լրացուցիչը պիտի լինի: Ո՛չ վարիչները, ոչ գրադարանապետները, որքան էլ ցանկանան, չեն կարող այդ անել, որովհետև մենք չենք կարող այնպէս լաւ ուսումնասիրել իւրաքանչիւր աշակերտին, որ նրա ճաշակներն ու պահանջներն իմանանք: Չի կարելի մննդել մի մարդու առանց իմանալու թէ նա ինչ է սիրում: Ուսուցիչները կարող են այս բանին հասնել եթէ կամենան: Այս խնդիրն հեշտացնելու համար գրադարանի վարիչները նոր կանոն հաստատեցին, որով իւրաքանչիւր դպրոց կարող է գրադարանի մի ճիւղը լինել: Ուսուցիչն իրաւունք ունի գրադարանից գրքեր վերցնել իւր աշակերտների համար: Աշակերտների ճաշակն իմանալով նա հեշտութեամբ նրանց բաւականութիւն կտայ: Ուսուցչի ամենափոքր հաճոյքն իսկ կկատարուի: Նրանց ծանուցումների համեմատ գրադարանը պահանջած գրքերը կգնի. ժամանակի ընթացքում տպագրուած ցուցակներ կկազմուին զանազան առարկաների մասին: Այդպիսով դպրոցը և գրադարանը կգործեն ի միասին և վերջինը իւր իսկական տեղը կրօնի՝ դպրոցի լրացուցիչը կդառնայ:

Գրքերի ընտրութիւնը հասարակաց գրադարանի համար պէտք է շատ խիստ լինի. սրա հետ մէկ տեղ, չպէտք է անուշադիր թողնել, որ այդ ընտրութիւնը ի հաշիւ պիտի առնի հասարակութեան ճաշակը. ճաշակը զարգացնելուց առաջ դեռ պէտք է նրան բաւականութիւն տալ: «Ինչպիսի գրքեր պէտք է գնել» ահա մի հրատապ խնդիր բոլոր գրադարանների, մանաւանդ նրանց համար, որոնց միջոցները սուղ են, իսկ հասարակութեանը գոհացնելու փափագն անհուն: Բանասիրական բաժին ունենալ թէ չունենալ. և որը. Ժորժ Էլիտը թէ Հօլմսը: Հասարակաց գրադարանը մի բուն ուսանողների աշխատութեան առանձնատեսակը չէ, նա չպէտք է գոհացում տայ

հասարակութեան ապականուած ճաշակներին, ահա այն հակասական կարծիքները, որ յաճախ լսում ենք: Մենք կարծում ենք, որ ամէն մէկը կհամաձայնի մեզ հետ հետևեալ հիմնական կանոնների նկատմամբ. 1-գրադարանը վատ գրքեր պիտի չտարածէ. 2.-Նա պիտի բաւականութիւն տայ հասարակութեանը միայն վերոյիշեալ սահմանափակութեամբ. 3. Նա պիտի հասարակութեան մէջ լաւագոյն գրքերի պահանջը զարգացնի: Վատ գրքեր են համարուում սովորական անբարոյականացուցիչ, անպայման վնասակար գրքերը. ոմանք էլ այդ խմբակցութեան մէջն են դնում՝ ըստ գրականականին, տգեղ ոճ ունեցող գրքերը: ուրիշներն էլ վնասակար են համարում վիպասանութիւնները, անուանարկիչ և կամ հակակրօնական գրքերը. այնպէս որ բաւական դժուար հարց է թէ որ գրքերը պէտք է վնասակար համարել: Յամենայն դէպս մենք կարծում ենք թէ պէտք չէ ջահիլներին բացարձակ ազատութիւն տալ գրքերի ընտրութեան գործում և երբէք չտալ նրանց վնասակար գրքեր: Հօսուք պահանջում է որ գրքերը նախապէս կարդացուին մի առանձին յանձնաժողովում, ինչպէս անում էին Բօստօնի և Քէմբրիջի միջանի տիկիներ կիրակնօրեայ դպրոցների գրքերն ընտրելիս: «Հասարակական գրադարաններում ընթերցող հասարակութեան մեծ մասը 21 տարեկանից վեր չէ, ասում է: Կիրակնօրեայ շատ դպրոցների համար իբրև կանոն սահմանուած էր այնպիսի շատ դպրոցների համար իբրև կանոն սահմանուած էր այնպիսի գրքեր չտալ կարդալու, որոնք նախապէս կարդացուած չեն լինի դպրոցական յանձնաժողովում, եթէ նոյն իսկ գիրքը գրուած, հաւանութիւն գտած և հրատարակուած լինի բացառապէս կիրակնօրեայ դպրոցների համար: Օգտակար կլինէր այդ միջոցը գործ դնել և այնպիսի մի կարևոր հաստատութեան համար, որպիսին հասարակաց գրադարանն է և այդկերպ ապահովել միայն այն գրքերի տարածումը, որոնք վսեմացնում և ազնուացնում են մարդու հոգին»:

Շատ կարևոր խնդիր է նոյնպէս գրադարանի տեղաւորութեան կամ շէնքի խնդիրը: Մի գրադարանական օրագիր այս առթով միջանի օգտակար խրատներ է տալիս: «Նախ՝ շէնքը քաղաքի կենդրոնումը պէտք է ընտրել, ոչ աշխարհազրական բանը առաջին յարկում, որպէսզի անցուղարձ անողները կարողանան տեսնել գրքերի հրապուրիչ շարքը և գայթակղուել նրանցով: Նա լաւ լուսաւորուած պիտի լինի և մի առանձին սենեակ ունենայ, ուր այցելուները կարողանան օգտուել պարբերական հրատարակութիւններից: Գրադարանի կահաւոր-

րութիւնը հնարաւորութեան չափով հրապուրելի պիտի լինի: Ինչպէս որ վատ օրինակները վարակիչ են լինում, այնպէս էլ լաւերը կարող են համակրութիւն շարժել դէպի իրենց: Ճաշակով կահաւորուած մի գողտրիկ շէնք, բազմաթիւ գրքեր, ներս ու դուրս անող հասարակութեան բազմութիւն, ամենալաւ ձգտումներ կյարուցանեն շրջապատող բնակչութեան մէջ: Ահա լաւ գրադարանի անհրաժեշտ պայմանները, որ յաճախ աւելի կարեւոր են քան նոյն իսկ գրքերի ընտրութիւնը: Մութ անկիւնում մոռացութեան տրուած կամ խանութի ետեւի սենեկում դետեղուած գրադարանը երբէք յաջողութիւն չի ունենայ: Ձանացէք առանձին տեղում գրադարան կազմակերպել. եթէ խանութում տեղաւորէք, այն ժամանակ գործակատարն աւելի առուարով կըբաղուի քան ընթերցողների պահանջին բաւականութիւն կտայ»:

Միայն կլինէր կարծել թէ հասարակական լաւ գրադարանը միայն մեծ, հարուստ քաղաքների սեփականութիւնն է: «Ժողովրդի կրթութեան գործում, որ գրքերի տարածմամբ է լինում, ամենամեծ օգուտը տալիս են հաղարաւոր փոքրիկ գրադարանները»: Սոյն շարագրութեան հեղինակը շնորհակալութեամբ է յիշում իւր մայրենի քաղաքի գրադարանը, որի մէջ 4000 հատոր կար. նա անհամեմատ աւելի պարտական է այդ գրադարանին, քան դպրոցական տարիներին, որոնց ընթացքում նա աւելի ընդարձակ գրադարաններից է օգտուել: Ուրիշները դեռ աւելի փոքր գրադարաններից են շնորհակալ, որոնց մէջ հազիւ թէ հարիւր հատոր կայ, որոնք շարուած են աղքատ շէնքի համեստ դարակների վրայ: Գլխաւորը՝ գրադարանի հիմք դնելն է: Գրադարան չունեցող հասարակութիւնը պիտի ամաչի այդ բանից: Արժէ միայն մի տասնեակ գիրք կամ անհրաժեշտ գումարը հաւաքել իբրև հիմք գրադարանի և շուտով կերևայ նրա բարերար ազդեցութիւնը հասարակութեան վրայ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՕԳՈՒՏԸ.

Ընթերցանութեան իսկական օգուտը բոլորակապէս դատարկ զուարճութեան մէջը չէ: Ընթերցողներն անշուշտ համաձայն կլինին այս բանում, թէև գործադրութեան մէջ մեծամասնութիւնը հեռանում է տեսականից: Նոյն իսկ գիտութիւն ձեռք բերելը կամ բարձր մտաւոր զարգացման հասնելը ընթերցանութեան վերջնական նպատակը չէ: Կարելի է խելօք, զարգացած

մարդ լինել, բայց չկարողանալ պարտուպատշաճ օգուտը բազել ընթերցումից: Ընթերցանութեան նպատակը մարդու մտածողութեան բարձր զարգացման և բարոյական յատկութիւնների մէջն է. շրջապատողների վրայ ազդեցութիւն գործելու մէջն է, նրանց բնաւորութիւնը լաւացնելու և ազնուացնելու համար: Միջակ հեղինակներն ու ընթերցողները այս բարձր նպատակին Միջակ հեղինակներն ու ընթերցողները, ասում է նախագահ Պօրչեն հասնում: «Գրականութիւնը, ասում է նախագահ Պօրչեն, պիտի յարգէ բարոյական փիլիսոփայութիւնը, եթէ ինքը բարձր նպատակների է ձգտում: Բարոյական փիլիսոփայութիւնը չյարգող գրականութիւնը հազիւ թէ մէկ սերունդ ճանապարհ դնի»: Բարձր ուղղութեան գրականութիւնը դարեր է ճանապարհ ձգում և նշանաւոր դեր է խաղում մարդկային կատարելագործութեան մէջ նոյն իսկ եթէ քաղաքակրթութեան ձևերն էլ փոխուին: Ով այս կերպ է հասկանում գրականութիւնը, նա ամենամեծ օգուտն է քաղում նրանից՝ թէ իւր և թէ այլոց համար: «Մարդկային ստեղծագործութեան բոլոր արտայայտութիւններից ամենազարմանալին և ուշադրութեան արժանալի գրքերն են, ասում է Կարլէյլը: «Կասկած չկայ, ասում է նոյն հեղինակը թէ գրելու կարողութիւնը մարդու մտածողութեան ամենահրաշալի ընդունակութիւններից մէկն է: Գլըքների մէջն են ապրում անցեալ ժամանակների մտքերը. պարզ և մեկին հնչում են այն մարդկանց ձայները, որոնց փոշին վաղուց հողմավար անհետացել է երազի նման: Հզօրնաւատորմից և զօրք, նաւահանգիստ, զինանոցներ, ընդարձակ քաղաքներ, ամրոցներ, այս բոլորը մեծ, թանկագին կառուցումներ են, բայց ժամանակով ի՞նչը կմնայ նոցանից: Ազամեմնոններ, Պերկլէս-ներ, ինքն Յունաստանը հող դարձան. բայց յունական գրքերը: ներ, ինքն կենդանի են և նրանց մէջ և այժմ կենդանի են նրա հերոսները: Հին ոռնմակաւն արձանագրութիւնները նոյն գլըքներն են: Այն ամենը ինչ որ մարդկութիւնը կատարել, մտքով որոճացել և հասել է, բոլորը պահուած են կարծես մի դիւթական հնարքով գրքերի երեսների վրայ: Նրանք մարդկութեան թանկագին ժառանգութիւնն են»:

Ատգիսօնը շատ պերճաբանօրէն ասում է. «Գերագոյն էակը իւր զօրութիւնն աշխարհի ստեղծագործութեան մէջը ցոյց տուեց, իսկ մարդիկ իրենց գաղափարները արտայայտեցին գրքերով, որոնք ի շնորհս նորագոյն կատարելագործութիւնների, կարող են դարեր սահեցնել, մնալ մինչ այն ժամանակ, քանի փայլում են արևն ու լուսին...

Ուրիշ հնար չկայ մարդկանց միտքն ալեկոծող խորհուրդ-


ները մշտնջենաւորել և յանձնել հեռաւոր սերնդին, պահպանել մարդու իմաստութիւնը, գիտենալով որ ժամանակով նրա մարմինը հողին կխառնուի և հողին հողիներէ աշխարհը կթռչի: Գրքերը հանձարի թողած ժառանգութիւնն են մարդկութեան, որը սերնդէ սերունդ է անցնում:

«Գրքերը ոչ բոլորովին անշունչ առարկաներ են, ասաց Միլտոնը, նրանց մէջ կեանքի աղբիւրն է թագնուած. նրանք նոյնքան զօրաւոր են, որքան առասպելական վիշապի ատամները: Լաւ գիրք սպանելը նոյնչափ յանցանք է, որչափ մարդ սպանելը: Մարդուն սպանելով՝ սպանում ենք Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը. իսկ գիրք սպանելով՝ սպանում ենք բանականութիւնը՝ աստուածութեան դրոշմը: Շատ մարդիկ իրենց գոյութեամբ միայն ծանրաբեռնում են երկիրը, բայց լաւ գիրքը մեծ մտքի կենսական ոյժն է, որ յաւիտենական կեանքի համար է պահուած: Ուրեմն մենք խնամքով և սիրով պիտի վերաբերուինք մարդկային ջանքերի այս կենդանի արդիւնքներին. Ռիչարդ Բակօտէրն աւելի նշանակութիւն էր տալիս տըպագրական խօսքին քան բանաւորին: «Բարձրեայն իւր սուրբ խօսքը սահմանել է բոլոր երկիրներէ և դարերի մարդկանց բարեկեցութեան համար: Ես խորհուրդ եմ տալիս գոհութեամբ վերաբերուիլ տպագրական խօսքին և օգտով գործածել այն. ընթերցումն ունկնդրութիւնից շահաւէտ է, որովհետ և ընթերցողը կարող է մի առարկայ ընտրել իւր ճաշակին յարմար, կարող է վեր ընթեռնուլ, որքան ուզի, մտաբերել, սըրտին առաւել մօտիկ ընդունել, քան ուրիշի ճառը լսելիս»: Կօլրիջը գրքերը պողատու ծառերի հետ է համեմատում. «Լաւ գիրքը նոյնն է, ինչոր փայփայուած պըտղատու ծառը: Նրա պտուղները միանուազ չեն. բնութիւնից սահմանուած որոշ ժամանակամիջոցում, տարէց տարի կարող ենք օգտուել նրա պտուղներով. նա առաջուայ պէս ձեզ կանդէ, միայն թէ դուք պահպանած լինիք առաջուայ լաւ ախորժակը»: Ջէմս Փրիման Կլէրիսը հետեւեալ խօսքերով է վերջացնում ընթերցանութեան մասին գրած գեղեցիկ գլուխը. «Գոհանանք Աստուծուց գրքերի համար: Երբ մտածում եմ թէ ինչ օգուտ աուին աշխարհին մի քանի գրքեր, ինչ օգուտ են տալիս այժմ, ինչպէս պահպանում են մեզնում հոգու աշխուժութիւնը, յուսադրում են, մխիթարութեան աղբիւր են նրանց համար, որոնց կեանքը լի է դառնութեամբ և աշխատանքով, ինչպէս նրանց մօտենում են դարերն ու աշխարհները, աւետում բարձր ճշմարտութիւններ, ես չեմ կարող չօրհնել գրքե-

րը և ձգտում եմ կանոնաւորապէս օգտուել նրանցից»: Ջարմանալի չէ որ Ջօն Լէյլին իւր որդուն հետեւեալ խորհուրդն է տալիս. «Բարի որդեակս, դու պիտի ժառանգես հարստութիւնս, ինչպէս և կենցաղական իմաստութիւնս. ես կըրցանկայի որ վերջինս նոյնքան սիրով ընդունէիր որքան և առաջինը: Հարստութիւնը պատահմունք է, խելօքութիւնը՝ Աստուծոյ պարգև: Գրքերի վրայ աւելի ուշք դարձրու քան ոսկու, առաւել ձգտիր բարձրութեան, քան հարստութեան»: «Ամենքին մատչելի միակ գանձը գրադարանն է, միակ և ամենահաստատուն հարստութիւնը՝ գիտութիւնն է, ասում է Իօկտօր Լանգֆօրդը: «Գրքերը կեանքի ամենալաւ առարկաներն են, եթէ միայն նրանցից օգտուել իմանանք», ասում է Էմէրսօնը. «նըրանք զլիսաւորապէս հողին են վսեմացնում»: Ջէմս Լօուէյլը խորհուրդ է տալիս Միլտոնի հայեացքով առաջնորդուել գրքեր ընտրելիս, այսինքն թէ «լաւ գիրքը այն է, որ ընդհանրացնում է հանձարեղ միտքը»:

Մէկ խօսքով իւրաքանչիւր ընթերցող ընթերցանութեան համապատասխան ընտրութիւն անելիս պիտի յիշէ հին տաճարների վրայ մնացած արձանագիրը. Ad majorem Deigloriam (ի փառս Աստուծոյ):





«Ազգային գրադարան»

NL0140689



028

12-28